Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2464

491.99-5
F-37

4-3-8

2010

491.99-5
F-37
425
44-ԲԱ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ԴԻՒՐ ՈՒՍԱՆԵԼՈՅ

Ի ՊԷՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

---

ՀԱՒԱՔԵԱԼ Ի ԶԱՆԱԶԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՎԱՆԱՑ ԼԵՐԻՆ ԳԻՒՂԱՑԻ ԲԱՐՍԵՂԵԱՆ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՅԻՍՈՒՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի ԼՈՅՍ ԸՆԾԱՅԵԱԼ

ՈՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ ՄԵԾԱՊԱՏԻՒ Մ. ՄԱՐԿՈՍ ԱՂԱՅԻ ՃԱՀՊԷՆՏԷՐԵԱՆՑ ԵՒ ԱԲՐԱՀԱՄ ԱՂԱՅԻ ՓԻՐԿԱԼԵՄԵԱՆՑ.

1865=ՌՅԺԴ ԱՊՐԻԼ 15

Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾՈՒՈՅՆ

Ի ՎԱՆ Ի ՎԱՐԱԳ

2002

/20896

Ուսումնագարդ պատուելի Սարգիս վարժապետ Բարսեղեան ։

Զդիւրուսանելոյ ի սմա տեսեալ զոճ՝ փորձառութեամբ յընթացս երկամեայ դասատուութեանդ , արժան դատեցաք Տպագրութեան , խոստանալով տալ գործադրել անխափան ամեն ուրեք՝ որ ընդ հովուական գաւազանաւ մեր են ։

ԻԳՆԱՏԻՈՍ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԵՐԿՐԻ

1865 ԱՊՐԻԼ 15

ՅԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆԻՆ ՎԱՆԱՅ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Փորձով զգալով որ Ազգային վարժարանները շատ հարկաւորութիւն ունին մի օրինակ դասատետրի · արդէն եղանակներուն վրայ ոմանց գոհ եւ ոմանց դժգոհ լինել տեսնալով, այսպիսի կարեւոր ձեռնարկութեան մ զգացումը օր ըստ օրէ զիս ստիպեց եւ ներկայս որ Պօլսոյ մէջ պատրաստած եւ տարի ու կէսէն աւելի Յիսուսեան Վարժարանին մէջ գործադրուած, փորձով ոչ սակաւ դիւրութիւն ցոյց տուաւ · զոր տեսնելով նաեւ Գ. Ե. Ազգային Իգնատիոս ուսումնասէրն Արք. Եպիսկոպոս՝ սկսեց վարժարանիս Ազգային Հոգաբարձութեան (որոնք երկու տարիէ ի վեր Ազգասիրաբար յանձնառու եղած են վարժարանիս հոգն եւ բարեկարգութիւնը, եւ իբրեւ անձնական պարտաւորութիւն երբեք չեն խնայեր պէտք եղած աշխատութիւննին, եւ որոց պատուական անուններ քաջ են ի լսելիս հասարակութեան · որ են · Շահպէնտէրեան Մահտեսի Մարկոս եւ Փիրղալէմեան Աբրահամ աղայք ·) բարերար հանդիսանալ Տպագրութեան ի պէտս վարժարանիս ազգային մանկանց · խոստանալով նոյն Սրբազնութիւն նաեւ անխափան գործածել տալ Ազգային վարժարաններուն մէջ · որով փոքր ինչ նպատակնիս հասնելու բաղդը կունենամ այսօրունէ ։

Դասատետրիս մէջ նմանող եղած եմ ՉԱԼԽԵԱՆԻՆ, որուն եօթնէրորդ տպագրութիւնը ( մինչեւ եօթներորդը տեսած եմ անկէ աւելի չեմ գիտեր ) իր մեծ ընդունելութեան Ա. ապացոյցն է, անկէ եւ ոչ կանոն մը դուրս ձգելով, բայց ի օրինակաց աշխարհաբառէն եւ տաճկերէնէն · պակասը· ՏԱՐԵՐՔՈՎ_ Ե-ՓԻՐՇՏՄԱԼՃԻԱՆՈՎ_ լեցնելով։ Կըյուսամ թէ ոչ Չալխեանին չափ, գոնէ անկէ քիչ պակաս ընդունելութիւն պիտի գտնէ սիրելի Ազգիս մէջ · որոյ մանկտւոյն յառաջադիմութեան համար արդէն իմ բոլոր կեանքս նուիրեր եմ · կըյուսամ թէ ոչ ուրիշ գա-

—ասներու, գոնէ Վաղարշապատի Բարեկարգ Վարժարանաց տարբեր ընթացքը մայնել ասով, խնդրելով ուրեմն պաշտօնակից-ներէս աննախանձաբար ի մեր յառաջադիմութեան Ազգին ընդու-նել եւ գործադրել, պայմանաւորութեանց ներողամիտ ըլլալով։

Որովհետեւ գրաբար լեզուն կատարեալ ուղղագրութեան կանո-նները (որոց հաւաքումն է Քերականութիւն) չափէն եւ համ-բակաց համար գրեթէ անդանելի եւ խնդրացուցիչ, ուստի ջանացի որչափ կարելի էր դիւրաւոր ու գործածական կանոններ միայն հա-ւաքել, եւ դաս դաս բաժնել վեց ամսուան մէջ դիւրին կերպով ուսուցանելու համար։

Դասատետրիս դիւրաւոր դիւրութեան պատճառներ հետեւեալ-ներն են, Ա. իր համառօտութիւն։ Բ. դիւրաւ միտք պահելու համար հարց պատասխանով գրուիլը։ Գ. միայն դասատետրովս կա-նոնը տեսակ Քերականութեան հեղինակութեանց տեղեակ ըլլալը։ Դ. կարճ ճանապարհովը դէպ ի ուսման որահը առաջնորդելը եւ առաջար տեղերու ծանօթութիւնը ուսանողի աչաց կամաց բերուիլը։

Վասն զի ինչպէս յայտնի է՝ Քերականութիւնը միայն դրան ձեռքին բանալին է, որ դիւրաւ կալէ ու չինայ. եւ ինչպէս որ դրան ձեռքին բանալով աշխարհիս ամէն տեղուանք շրջեցնել ան-կարելի է, այլ պէտք է որ առանձին ալ կալէ՝ երբ կալելու կա-րողութիւնը կորսի ի շատ տգանց. նմանապէս Քերականութիւն առանց գրքերու վարժութեան գրեթէ անօգուտ է ուսանողին..։

Ն" Սարգիս Բարսեղեան Անկնուեր դաստիա-Յիսուսեան Վարժարանին. Ալշ". Սրբոց Թարգմանչաց. Վարժարանին Ս. Պ. Միջա-գիւղ։

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
# ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

### ԴԱՍ Ա.

1. Հ. Ի՞նչ է քերականութիւն.

Պ. Քերականութիւնը ազատական արհեստ մի է, որ կը սորվեցնէ գրաբառ լեզուն աղէկ հասկնալ, ուղիղ խօսիլ եւ շիտակ գրել:

2. Հ. Քանի՞ մասունք ունի քերականութիւն.

Պ. Չորս մասունք ունի. Գիր. Վանկ. Բառ եւ Բան:

3. Հ. Ի՞նչ է գիր.

Պ. Գիրը գիծ մի է. երբոր անունը գրուի՝ կըսուի տառ. այսինքն, երբոր վրան նայուի գիծ է. երբոր հեգուի տառ է:

4. Հ. Մեր գրերը քանի՞ հատ են եւ ո՞վ գտաւ կամ հընարեց.

Պ. Հայոց գրերը երեսուն եւ վեց հատ են. առաջինն է Ա. ետքինն Ք. զորս Սուրբն Մեսրովպ գտաւ Հոգւոյն սրբոյ շնորհօք, Քնի 406 թուականին. որ մինչեւ այն ժամանակ այլ եւ այլ ազգաց գրեր կը գործածէին:

### ԴԱՍ Բ.

5. Հ. Հապա ւ. օ. ֆ. գրերն ի՞նչ են.

Պ. Մեր նախնիք այս գրերը չէին գործածեր, ինչպէս

հին ձեռագրաց մէջ կը տեսնուի ։ Ւ կատարեալ գիր չէ, ս կէս է ու կէս – իրարու խառնուելով կը ձեւանայ գիծ մ որուն կըսուի Ւ. կամ թէ այսպէս եւ ։ օ գրի տեղ, աւ կ գործածէին, օր գրելու տեղ աւր կը գրէին ։ Ֆ գրի տե ալ ֆ կը գործածէին. Ֆռանկ գրելու տեղ Փռանկ կը գրէին ։

6. Հ. Տառ քանի՞ կը բաժնուի.

Պ. Տառ երկու կը բաժնուի. Ձայնաւոր եւ Բաղաձայն ։

7. Հ. Ո՞րն է ձայնաւոր.

Պ. Ձայնաւոր այն է որ առանց ուրիշ տառի միջնորդութեան՝ ինքնին ձայն կրնայ հանել եւ ասոնք են. ա. է. ը. ի. ո. օ. եւ երբեմն ալ – ւ ոի հետ բանելով կըլ ձայնաւոր. այսպէս. ու ։

8. Հ. Ո՞րն է բաղաձայն.

Պ. Բաղաձայն այն է որ առանց ձայնաւոր տառի միջնորդութեան ձայն չի կրնար հանել. ինչպէս. բ. գ. դ. Բ. եւ այլն ։

## ԴԱՍ Գ.

9. Հ. Ի՞նչ է վանկ.

Պ. Վանկն է մարդոյ բերնէն մէկ հնչմունքով ելած նշանական կամ աննշան ձայնը. ինչպէս Բը. Գը. Դը. աղ. հայ. եւ այլն ։

10. Հ. Ո՞րն է նշանական վանկ.

Պ. Նշանական վանկն այն է որ նշանակութիւն ունի. ինչպէս. աղ. հայ. եւ այլն ։

11. Հ. Ո՞րն է աննշան վանկ.

Պ. Աննշան վանկն այն է որ նշանակութիւն չունի. ինչ-

պէս, բը, գը, դը եւ այլն։

12. Հ. Քանի՞ կերպ հնչմունք կամ վանկ կայ.

Պ. Երկու. միատառ եւ բազմատառ. միատառ հնչմունքն այն է, որ ձայնաւոր գրով կըլլայ. ինչպէս, է, ա, օ եւ այլն։ Իսկ բազմատառ հնչմունքն այն է, որ քանիմը ձայնաւոր եւ բաղաձայն գրով կըլլայ. ինչպէս, բա րի, ցօրք, աղք եւ այլն։

## ԴԱՍ Գ.

13. Հ. Ի՞նչ է բառը.

Պ. Բառն է միավանկ կամ բազմավանկ նշանական ձայնմը. ինչպէս, մարմին, հաց, քար, թագաւոր, ատել, գնալ, ի վերայ, այսօր եւ այլն։

14. Հ. Բառը քանի՞ կերպ է.

Պ. Բառը ութ կերպ է. անուն, դերանուն, բայ, դերբայ, նախադրութիւն, մակբայ, շաղկապ եւ միջարկութիւն. որոնք մասունք բանի կըսուին։

15. Հ. Ի՞նչ է բանը.

Պ. Բանն է ամբողջ խօսքմը, որ կը շինուի բառերու յարմար դասաւորութեամբ. ինչպէս, լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք։

# ՄԱՍՆ Ա.

## ԳԼՈՒԽ Ա.

## ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

### ԴԱՍ Ե.

16. Հ. Ի՞նչ է անունը.

Պ. Անունը բառ մ՚է, որ կը ցուցնէ, բանի մը ինչ կամ ինչպէս ըլլալը. ինչպէս, մեծ մարդ, կարմիր ձուկը, արդար Աստուած. եւ այլն:

17. Հ. Անունը քանի՞ կերպ է.

Պ. Անունը երկու կերպ է. գոյական եւ ածական:

18. Հ. Ո՞րն է գոյական անունը.

Պ. Գոյական անունը բանի մը ինչ ըլլալը կը ցուցնէ. ու խօսքին մէջ մինակ գործածուելով, բանմը կը հասկըցընէ. ինչպէս, շուն, մարդ, ձուկն, Աստուած, Երուսաղէմ, Մասիս եւ այլն:

19. Հ. Ո՞րն է ածական անունը.

Պ. Ածականը՝ բանի մը ինչպէս ըլլալը կը ցուցնէ. ու խօսքին մէջ մինակ գործածուելով բանմը չհասկըցըներ, այլ գոյականի մը կարօտ է. ինչպէս, մեծ, կարմիր, արդար, եւ այլն: Ասհա հոս չի հասկցըներ թէ ինչ բան է մեծ, կարմիր, արդար եւ այլն:

---

### ԴԱՍ Զ.

20. Հ. Գոյականը եւ ածականը իրարմէ ի՞նչպէս կը

որոշուին .

Պ . Որ բառին քով որ բան գոյական բառը դրուի՝ մէջ յարմարի գոյական է . ինչպէս , աղէկ բան , մեծ բան , ահա հոս կը յարմարի . ուրեմն աղէկն եւ մեծն ածական են . բան մարդ . տուն բան . եւ ահա հոս չի յարմարեր , ուրեմն մարդ , տուն գոյական են : Այսպէս բոլոր գոյական եւ ածական բառեր դիւրին եղանակաւ կ'որոշուին :

21 . Հ . Գոյական անունը քանի՞ կերպ է .

Պ . Գոյական երեք կերպ է . յատուկ , հասարակ եւ հաւաքական :

22 . Հ . Ո՞րն է յատուկը .

Պ . Յատուկ գոյական այն է , որ մէկ բանի կը վերաբերի , եւ այն տեսակէն ուրիշ ալ չկայ . որպէս են , մարդու , քաղաքի , գետոյ , լեռան եւ այլն անուններ . ինչպէս , Մովսէս , Երուսաղէմ , Մասիս , Յորդանան եւ այլն :

23 . Հ . Ո՞րն է հասարակը .

Պ . Հասարակ գոյական այն է , որ շատ բանի կը վերաբերի , եւ այն տեսակէն շատ կայ . ինչպէս , ծառ , տուն , քաղաք , գիւղ , լեռ եւ այլն :

24 . Հ . Ո՞րն է հաւաքականը .

Պ . Հաւաքական գոյականը այն է , որ բանիմը մէկ տեղ ժողովուիլ ու հաւաքուիլ կը ցուցնէ . ինչպէս , Երամ , ազգ , դէզ , գունդ , խումբ եւ այլն :

## ԴԱՍ Է .

25 . Հ . Ածական քանի՞ կերպ է .

Պ . Ածական անուններն ալ երեք աստիճան ունի . դրական , բաղդատական , գերադրական :

26 . Հ . Ո՞րն է դրականը .

Պ. Տրական ածականը այն է, որ գոյականին պարզապէս ինչպէս ըլլալը կը ցուցնէ. ինչպէս, մեծ, բարի, կարմիր, բարձր եւ այլն:

27. Հ. Ո՞րն է բաղդատականը.

Պ. Բաղդատական ածական այն է, որ գոյականին ինչպէս ըլլալը ուրիշի յետ բաղդատելով, կը ցուցնէ աւելի կամ պակաս. ու կը շինուի տրականին վրայ գոյն մասնիկ մը դրուելով. ինչպէս, մեծագոյն, բարեգոյն, կարմրագոյն, բարձրագոյն եւ այլն:

28. Հ. Ո՞րն է գերադրականը.

Պ. Գերադրական ածականը այն է, որ գոյականին ինչպէս ըլլալը չափազանցութեամբ կը ցուցնէ. ու կը շինուի տրականին առջեւ ամէն մասնիկ մը դրուելով. ինչպէս, ամենամեծ, ամենաբարի, ամենասուրբ, ամենաբարձր եւ այլն:

## ԴԱՍ Ը.

## ԳԼՈՒԽ Բ.

## ԱՆՈՒԱՆ ՊԱՐԱԳԱՅՑ ՎՐԱՅ

29. Հ. Ի՞նչ է անուան պարագայք.

Պ. Անուան պարագայք անոնք են, որ անուան հետեւմունքին որպիսութիւն կը յայտնեն:

30. Հ. Քանի՞ են անուան պարագայք.

Պ. Վեց են. սեռ, թիւ, դէմք, ձեւ, հոլով, հոլովումն:

31. Հ. Ի՞նչ է անուան սեռը.

Պ. Սեռը գոյական անուանց որոշումն է. ու չորս են. արական, իգական, անորոշ եւ չէզոք:

## ԴԱՍ Թ.

32. Հ. Ո՞րն է արականը.

Պ. Արականը այն է, որ արուներուն կըսուի. ինչպէս, աբրահամ, մովսէս, խոյ, ցուլ, էշն եւ այլն։

33. Հ. Ո՞րն է իգականը.

Պ. Իգականը այն է որ էգերուն կըսուի. ինչպէս, մայր, կով, կին, դուստր, քոյր, մաքի եւ այլն։

34. Հ. Ո՞րն է անորոշը.

Պ. Անորոշ այն է, որ թէ արականին եւ թէ իգականին կըսուի. ինչպէս, զաւակ, ոչխար, ձագ, ձուկ. Թռչուն եւ այլն։

35. Հ. Ո՞րն է չէզոքը.

Պ. Չէզոքը այն է, որ ոչ արու է եւ ոչ էգ. ինչպէս, տուն, այգի, ծառ, ջաղաց, արեւ, լուսին եւ այլն։

## ԴԱՍ Ժ.

36. Հ. Ի՞նչ է ձեւը.

Պ. Ձեւն է անուանց որպիսութիւն. ու չորս է. պարզ, բարդ, յարաբարդ եւ բաղադրեալ։

37. Հ. Ո՞րն է պարզը.

Պ. Պարզը այն է, որ ուրիշ բառէ եկած չէ. ինչպէս, սէր, աստուած, բան, բարի եւ այլն։

38. Հ. Ո՞րն է բարդը.

Պ. Բարդը այն է, որ երկու ամբողջ բառէ կը շինուի. ինչպէս, աստուածասէր, աստուածաբան, բանասէր, բարեբան եւ այլն։

39. Հ. Ո՞րն է Յարաբարդը.

Պ. Յարաբարդն այն է, որ քանիմ ամբողջ բառերով կըլլայ. ինչպէս, մարդասիրապէս, հնգետասանամեայ, տասնեւհինգօրեայ եւ այլն։

40. Հ. Ո՞րն է բաղադրեալը։

Պ. Բաղադրեալն այն է, որ ունի առջեւ աննշան մասնիկ-մը. ինչպէս, անմիտ, տգեղ. դժգոյն, եւ այլն։

## ԴԱՍ ԺԱ.

41. Հ. Ի՞նչ է տեսակը.

Պ. Տեսակն է սեռին որպիսութիւն նշանակողը։

42. Հ. Տեսակը քանի՞ կերպ է.

Պ. Տեսակը Երկու կերպ է. նախատիպ եւ ածանցեալ։

43. Հ. Ո՞րն է Նախատիպ.

Պ. Նախատիպն այն է, որ իր առջի նշանակութեան վրայ կը մնայ, ինչ անուն որ ըլլայ. այսինքն թէ գոյական, թէ ածական, թէ պարզ, թէ բարդ եւ թէ բաղադրեալ. ինչ-պէս, բարի, անմահ, բարեպաշտ. եւ այլն։

44. Հ. Ո՞րն է ածանցեալ.

Պ. Ածանցեալ այն է, որ իր վերջը աննշան մասնիկ մը ունի. ինչպէս, մարդկային, բարեպաշտական, անմահութիւն, զօրաւոր, ճաղաճայն եւ այլն։

## ԴԱՍ ԺԲ.

45. Հ. Ի՞նչ է թիւ.

Պ. Թիւն այն է, որ բանիմը միութիւն կամ շատութիւն կը ցուցնէ. եւ է երկու. եզակի եւ յոգնակի։

46. Հ. Ո՞րն է եզակին.

Պ. Եզակին այնէ, որ մէկ բան կընշանակէ. ինչպէս, մարդ, տուն, ծառ եւ այլն:

47. Հ. Ո՞րն է յոգնակին.

Պ. Յոգնակին այնէ, որ շատ բան կընշանակէ. ինչպէս, տունք, ծառք, բարեկամք եւ այլն:

48. Հ. Եզակին ինչպէս յոգնակի կլլայ.

Պ. Հասարակօրէն եզակի բառերու վրայ ք, ց, ս, գրեր դնելով յոգնակի կըլլայ. ինչպէս, տուն, տունք. տան, տանց. ի տուն, ի տունս եւ այլն.

## ԴԱՍ ԺԴ.

49. Հ. Ուրիշ կերպով ալ կըլլա՞յ.

Պ. Այո. քանի մը տեսակ մասնիկներ կան. ինչպէս, եր, եան, եար եւ այլն. որոնք եզակի բառի վրայ դրուելով, յոգնակի կը շինեն. ինչպէս, նախարարեան, էշան, որեար, մարդիկ, կուժեր եւ այլն:

50. Հ. Ամեն բառն ալ եզակի ունի՞.

Պ. Ո՛չ. բառ կայ որ եզակի չունի, անոր կըսուի անեզական. ինչպէս, աչք, տառք, կամք, կեանք եւ այլն: Բառ ալ կայ որ յոգնակի չունի, անոր կըսուի անյոգնական. ինչպէս, երկին, յոյս, սէր, լուսին եւ այլն:

## ԴԱՍ ԺԴ.

51. Հ. Ի՞նչ է հոլով.

Պ. Բառերու կերպ կերպ փոփոխուելուն հոլով կըսուի. ինչպէս, բան, բանի, ի բան եւ այլն:

52. Հ. Հոլով քանի՞ է.

Պ. Գլխաւոր հոլովներ վեց են. Ուղղական, Սեռական, Տրական, Գործիական, Բացառական եւ Հայցական։

53. Հ. Ի՞նչ է հոլովմունք.

Պ. Որովհետեւ ամէն տեսակ բառերու վերջերնին մէկ կերպով չեն փոխուիր, այլ զանազան եղանակաւ. այն եղանակներուն կըսուի հոլովմունք. ինչպէս, բան բանի, գետ գետոյ, հայր հայեր. եւ այլն։

## ԴԱՍ ԺԵ.

54. Հ. Հոլովմունք քանի՞ տեսակ են.

Պ. Երկու. կանոնաւոր, անկանոն կամ զարտուղի։

55. Հ. Որո՞նք են կանոնաւոր հոլովմունք.

Պ. Կանոնաւոր անոնք են, որ կանոնաւոր կերպով կը հոլովուին եւ տասներկու հատ են. որոնց վրայ կը հոլովին բոլոր բառեր։ Ա. բան. Բ. ճաղաճ. Գ. գետ. Դ. եկեղեցի. Ե. շգետ. Զ. տուճր. Է. հիւծ. Ը. նեղուբեան. Թ. գառն. Ժ. ոսկր. ԺԱ. տրդատ. ԺԲ. հոռինուկէ։

56. Հ. Որո՞նք են անկանոն հոլովմունք.

Պ. Անկանոն կամ զարտուղի հոլովմունք անոնք են, որ հասարակ կարգէն դուրս կը հոլովին եւ այս վեցն են։ Ա. այր. Բ. հայր. Գ. ճայր. Դ. կին. Ե. գիւղ. Զ. օր։

# ԳԼՈՒԽ Գ.

## ԴԱՍ ԺԶ.

### 57 ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՄԱՆՑ ՕՐԻՆԱԿՆԵՐ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղղական, | բան. | բանք. |
| Սեռական, | բանի. | բանից. |
| Տրական, | բանի, 'ի բան. (1) | բանից, 'ի բանս. |
| Գործիական, | բանիւ. | բանիւք. |
| Բացառական, | 'ի բանէ. | 'ի բանից. |
| Հայցական, | զ բան. | զ բանս. |

58 Այս օրինակին վրայ կը հոլովին հետեւեալ բառերը. ոմանք անփոփոխ (2) ոմանք փոփոխմամբ եւ ոմանք կորուսմամբ։

Արքայ. ի, իւ, է։ ից, իւք, ից.

Բանտ, ի, իւ, է։ ից, իւք, ից.

---

(1) Տրական երկու է. մէկն կըսուի վերջահոլով եւ միւս նախդրիւ. վերջահոլովն այն է, որուն վերջ կը փոփոխուի։ Իսկ նախդրիւը, որ իր նախդիր կառնէ. Երբոր ըսած բառի Ա. գիրը ձայնաւոր ըլլայ, ի, նախդիր չի դրուիր, այլ, յ, կը դրուի։

---

(2) Անփոփոխ կամ անկորուստ այն է, որ հոլոված ատեն իր մէջէն ոչ գիր կը փոխէ եւ ոչ կը կորսնցունէ։ Իսկ կորուսմամբ այն բառն է, որ հոլոված ատեն ձայնաւոր գիր մը կը կորսնցունէ սեռականի, վերջահոլովի, բացառականի եւ գործիականի մէջ։ Փոփոխմամբ ալ այն է, որ հոլոված ատեն ձայնաւոր գիրմը, ուրիշ ձայնաւոր գրի մը հետ կը փոխէ. նոյն պէս, սեռականի, վերջահոլովի, գործիականի եւ բացառականի մէջ։

Գան, ի, իւ, է. ից, իւք, ից.
Արուեստ, ի, իւ, է. ից, իւք, ից.
Նետ, ի, իւ, է. ից, իւք, ից.
Բողբոջ, ի, իւ, է. ից, իւք, ից.
Ցօն, ի, իւ, է. ից, իւք, ից։

Կորուսմամբ.

Ատեան, ատենի, ատենիւ, ատենէ.
Վայրկեան, կենի, կենիւ, կենէ.
Սիրտ, սրտի, սրտիւ, սրտէ.
Օգուտ, օգտի, օգտիւ, օգտէ։

Փոփոխմամբ.

Կէտ, կիտի, կիտիւ, կիտէ.
Հանդէս, հանդիսի, հանդիսիւ, հանդիսէ.
Ողջոյն, ողջունի, ողջունիւ, ողջունէ։

Անեզական.

Աղօթք, աղօթից, աղօթիւք, աղօթից.
Կրօնք, կրօնից, կրօնիւք, կրօնից։

Անյոգնական.

Սարգիս, սարգսի, սարգսիւ, սարգսէ.
Մովսէս, մովսիսի, մովսիսիւ, մովսիսէ.
Եգիպտոս, եգիպտոսի, եգիպտոսիւ, եգիպտոսէ։

## ԴԱՍ ԺԵ.

### 58 ՕՐԻՆԱԿ Բ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Քաղաք. | Քաղաքք. |
| Սեռ. | Քաղաքի. | Քաղաքաց. |
| Տր. | Քաղաքի, ի քաղաք. | Քաղաքաց, ի քաղաքս. |
| Գործ. | Քաղաքաւ. | Քաղաքօք. |
| Բաց. | ի Քաղաքէ. | ի Քաղաքաց. |
| Հայց. | զ Քաղաք. | զ Քաղաքս. |

59 Անոր վրայ կը հոլովին. հետեւեալ բառեր ոմանք անփոփոխ եւ անկորուստ, ոմանք կորուսմամբ, եւ ոմանք փոփոխմամբ։

Աւազան, ի, աւ, է. աց, օք, աց.
Բարեկամ, ի, աւ, է. աց, օք, աց.
Ընկեր, ի, աւ, է. աց, օք, աց.
Թագաւոր, ի, աւ, է. աց, օք, աց.
Լեզու, ի, աւ, է. աց, օք, աց.
Որդեակ, դեկի, դեկաւ, դեկէ. դեկաց, կօք, դեկաց.
Գրիչ, գրչի, գրչաւ, գրչէ. գրչաց, գրչօք, գրչաց.
Բազում, բազմի, բազմաւ, բազմէ. բազմաց, օք, աց.
Պարտէզ, պարտիզի, իզաւ, իզէ. իզաց, իզօք, իզաց.
Հովիւ, ուի, ուաւ, ուէ. ուաց, ուօք, ուաց.
Մէգ, միգի, միգաւ, միգէ. միգաց, միգօք միգաց.
Կամք, աց, օք.
Միտք, մտաց, մտօք.
Կերպարանք, աց, օք.
Մեղք, աց, օք.
Հնդիկ, հնդկի, հնդկաւ; հնդկէ.

## ԴԱՍ ԺԸ.

### 59 ՕՐԻՆԱԿ Գ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Գետ. | Գետք. |
| Սեռ. | Գետոյ. | Գետոց. |
| Տր. | Գետոյ, ի գետ. | Գետոց, ի գետս. |
| Գործ. | Գետով. | Գետովք. |
| Բաց. | ի Գետոյ. | ի Գետոց. |
| Հայց. | զԳետ. | զԳետս. |

| | | |
|---|---|---|
| Բերան. | Երկաթ. | Տղայ. |
| Դեղ. | Ծեր. | Գործ. |
| Յոյս. | Սեր. | Թիւ. |
| Դժոխք. | Կուռք. | |
| Լոյս. | Աստուածատուր. | Աստուած. |

## ԴԱՍ ԺԹ.

### 60 ՕՐԻՆԱԿ Դ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Եկեղեցի. | Եկեղեցիք. |
| Սեռ. | Եկեղեցւոյ. | Եկեղեցեաց. |
| Տր. | Եկեղեցւոյ, յեկեղեցի. | Եկեղեցեաց, յեկեղեցիս. |
| Գործ. | Եկեղեցեաւ. | Եկեղեցեօք. |
| Բաց. | յԵկեղեցւոյ. | յԵկեղեցեաց. |
| Հայց: | զԵկեղեցի: | զԵկեղեցիս. |

Հոգի · Որդի · Բարի · Փարիսեցի ·
Ընթրիք · Գինի · Կղզի · Կարծիք ·

## ԴԱՍ Ի·

### 61 ՕՐԻՆԱԿ Ե·

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ· | Զգեստ· | Զգեստք· |
| Սեռ· | Զգեստու· | Զգեստուց· |
| Տր· | Զգեստու, ի զգեստ· | Զգեստուց, ի զգեստս· |
| Գործ· | Զգեստու· | Զգեստուք· |
| Բաց· | ի Զգեստէ· | ի Զգեստուց· |
| Հայց· | զԶգեստ· | զԶգեստս· |

| | | | |
|---|---|---|---|
| Առաւօտ· | Ժամ· | Ծով· | Սով· |
| Աղուէս· | Ինձ· | Զէն· | Ցուլ· |
| Զարդ· | Խրատ· | Աբրահամ· | Ղուկաս· |
| Բարք· | Վարք· | Սպաս· | Պարտք· |

## ԴԱՍ ԻԱ·

### 62 ՕՐԻՆԱԿ Զ·

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ· | Փոքր· | փոքունք· |
| Սեռ· | փոքու· | Փոքունց· |
| Տր· | փոքու, ի փոքր· | Փոքունց, ի փոքունս· |
| Գործ· | Փոքու· | փոքումբք· |

| | | |
|---|---|---|
| Բաց. | ի փոքուէ. | ի փոքունց. |
| Հայց. | զՓոքր. | զՓոքունս. |

Մանր. Ծանր. Թանձր.
Ծաղր. Քաղցր. Մեղր.

## ԴԱՍ ԻԲ.

### 63 ՕՐԻՆԱԿ Ի.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Հիմն. | Հիմունք. |
| Սեռ. | Հիման. | Հիմանց. |
| Տր. | Հիման, ի հիմն. | Հիմանց, ի հիմունս. |
| Գործ. | Հիմամբ. | Հիմամբք. |
| Բաց. | ի Հիմանէ. | ի Հիմանց. |
| Հայց. | զՀիմն. | զՀիմունս. |

Արեգակն. Սերմն. Անուն.
Տուն. Շուն. Դուռն.
Շուրթն. Խոստումն. Քիրտն.

## ԴԱՍ ԻԳ.

### 64 ՕՐԻՆԱԿ Ը.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Նեղութիւն. | Նեղութիւնք. |
| Սեռ. | Նեղութեան. | Նեղութեանց. |
| Տր. | Նեղութեան, ի նեղութիւն. | Նեղութեանց, ի նեղութիւնս. |
| Գործ. | Նեղութեամբ. | Նեղութեամբք. |
| Բաց. | ի Նեղութենէ. | ի Նեղութեանց. |
| Հայց. | զՆեղութիւն. | զՆեղութիւնս. |

## ԴԱՍ ԻԴ.

### 65 ՕՐԻՆԱԿ Թ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | գառն. | գառինք. |
| Սեռ. | գառին. | գառանց. |
| Տր. | գառին, ի գառն. | գառանց, ի գառինս. |
| Գործ. | գառամբ. | գառամբք. |
| Բաց. | ի գառանէ. | ի գառանց. |
| Հայց. | զգառն. | զգառինս. |

Եզն. Լեառն. Բոռն.
Մատն. Մատն. Ձեռն.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ * С.С.Р.А. Публичная Библиотека 7/XI--1922 имени А. Мясникяна * Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ԴԱՍ ԻԵ.

### 66 ՕՐԻՆԱԿ Ժ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Ոսկր. | Ոսկերք, |
| Սեռ. | Ոսկեր. | Ոսկերց, Ոսկերաց. |
| Տր. | Ոսկեր, յոսկր. | Ոսկերց, Ոսկերաց, յՈսկերս. |
| Գործ. | Ոսկերբ. | Ոսկերբք. |
| Բաց. | յՈսկերէ. | յՈսկերց, յՈսկերաց. |
| Հայց. | զՈսկր. | զՈսկերս. |

Կայսր. Տարր. Դուստր.
Ալեւր. Աղբեւր. Եղջեւր.
Ոստղ. Ետղ. Ճիգղ:

## ԴԱՍ ԻԶ.

### 67 ՕՐԻՆԱԿ ԺԲ.

| | Եզակի | |
|---|---|---|
| Ուղ. | Տրդատ. | Հռիփսիմէ. |
| Սեռ. | Տրդատայ. | Հռիփսիմեայ. |
| Տրա. | Տրդատայ, առ տրդատ. | Հռիփսիմեայ, ի Հռիփսիմէ. |
| Գործ. | Տրդատաւ. | Հռիփսիմեաւ. |
| Բաց. | ի Տրդատայ. | ի Հռիփսիմեայ. |
| Հայց. | զՏրդատ. | զՀռիփսիմէ. |

Սահակ, սահակայ, սահակաւ, ի սահակայ.
Տիգրան, տիգրանայ, տիգրանաւ. ի տիգրանայ.
Վահան, վահանայ, վահանաւ, ի վահանայ.
Եսայի, եսայեայ, եսայեաւ, յեսայեայ.

## ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

## ԴԱՍ ԻԵ.

### 68 ՕՐԻՆԱԿ Ա.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Տէր. | Տեարք. |
| Սեռ. | Տեառն. | Տերանց. |
| Տրա. | Տեառն, առ տէր. | Տերանց, առ Տեարս. |
| Գործ. | Տերամբ. | Տերամբք. |
| Բաց. | ի Տեառնէ. | ի Տերանց. |
| Հայց. | զՏէր. | զՏեարս. |

Այր , առն , արամբ , յառնէ . Արք , արանց , արամբք .
Ցանուտէր . Պարտատէր .

## ԴԱՍ ԻԸ.

## 69 . ՕՐԻՆԱԿ Բ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Հայր . | Հարք . |
| Սեռ. | Հօր . | Հարանց , հարց . |
| Տր. | Հօր , առ հայր . | Հարց , առ հարս . |
| Գործ. | Հարբ . | Հարբք . հարամբք . |
| Բաց. | ի Հօրէ . | ի Հարց , ի հարանց . |
| Հայց. | զՀայր . | զՀարս . |

Մայր . Եղբայր . Հօրեղբայր . Մօրեղբայր .

## ԴԱՍ ԻԹ.

## 70 . ՕՐԻՆԱԿ Գ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Քոյր . | Քորք . |
| Սեռ. | Քեռ . | Քերց . |
| Տր. | Քեռ առ քոյր . | Քերց առ քորս . |
| Գործ. | Քերբ . | Քերբք |
| Բաց. | ի Քեռէ | ի Քերց . |
| Հայց. | զ Քոյր . | զ Քորս . |

Հօրաքոյր . Մօրաքոյր .

## ԴԱՍ Լ.

### 71. ՕՐԻՆԱԿ Դ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | կին. | կանայք. |
| Սեռ. | կնոջ. | կանանց. |
| Տրա. | կնոջ, առ կին. | կանանց, առ կանայս. |
| Գործ. | կանամբ, կնաւ. | կանամբք. |
| Բաց. | ի կնոջէ. | ի կանանց. |
| Հայց. | զկին. | զկանայս. |

Տիկին, տիկնոջ, տիկնաւ. ի տիկնոջէ, զտիկին.

Տիկնայք, Տիկնանց, տիկնամբք, ի տիկնանց, զտիկնայս.

## ԴԱՍ ԼԱ.

### 72. ՕՐԻՆԱԿ Ե.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Գիւղ. | Գիւղք. |
| Սեռ. | Գեղջ. | Գիւղից. |
| Տրա. | Գեղջ, ի գիւղ. | Գիւղից ի գիւղս. |
| Գործ. | Գիւղիւ. | Գիւղիւք. |
| Բաց. | ի Գեղջէ. | ի Գիւղից. |
| Հայց. | զԳիւղ. | զԳիւղս. |

## ԴԱՍ ԼԲ.

### 73. ՕՐԻՆԱԿ Ջ.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Օր. | Աւուրք. |
| Սեռ. | Աւուր. | Աւուրց. |
| Տրա. | Աւուր, յօր. | Աւուրց յաւուրս. |
| Գործ. | Աւուրբ. | Աւուրբք. |
| Բաց. | յՕրէ. | յԱւուրց. |
| Հայց. | զՕր. | զԱւուրս. |

Կէս օր. Հասարակ օր.

## ԴԱՍ ԼԳ.

74. Հ. Ամէն բառն մէկ տեսակ հոլով ունի.

Պ. Ոչ. կան բառեր որ մի եւ նոյն նշանակութեամբ երկու կերպ կը հոլովին. ինչպէս, զգեստ, զգեստու կամ զգեստի: Կան բառեր ալ որ եզակին այլ կերպ, յոգնակին այլ կերպ կը հոլովին. ինչպէս, ձեռն, ձեռին. ձեռք ձեռաց. կան նաեւ այնպիսի բառեր ալ որ այլ եւ այլ կերպ հոլովելով նշանակութիւն կը փոխուի. ինչպէս.

| | | | |
|---|---|---|---|
| Այր, | այրի, | այրիւ. | Մաղարայ. |
| Այր, | առն, | արամբ. | Մարդ. |
| Մայր, | մայրի, | մայրիւ. | Զոճ ծառ. |
| Մայր, | մօր, | մարբ. | Մայր ծնող |
| Օդ, | օդի, | օդիւ. | Ոտնաման |
| Օդ, | օդոյ, | օդով. | Հաւայ. |

Որթ · որթոյ · որթով · Ասմայ ·
Որթ · որթու · որթով · Տանայ ·

## Դ Ա Ս  Լ Դ ·

75 · Հ · Ամէն բառն ալ վեց հոլով ունի՞ ·

Պ · Ոչ · կան բառեր՝ որ միայն նախդրիւ կը հոլովին, այսինքն վերջերնին չի փոխուիր, միայն սկիզբնին նախդիր կառնեն ինչպէս ·

Ուղ · Ուրախ ·
Տրա · յՈւրախ ·
Հայց · զՈւրախ ·

Ցունր · Խոստովան · Հրաշափառ · Նման · Քաղցրիկ · եւ այլն ·

76 · Հ · Այլ ի՞նչ գիտելիք կայ հոլովման վրայ ·

Պ · Բառը մասնիկինը հետ միացած, կամ ուրիշ բառի հետ բարդուած ատեն սովորաբար հոլով կը փոխէ ուրիշ կերպ կը հոլովի նա անեզական ալ բարդուած ատեն եզակի կունենայ · ինչպէս.

Յոյս, յուսոյ · անյոյս, անյուսի ·
Սէր, սիրոյ · Բարեսէր, բարեսիրի ·
Գործ, գործոյ · Ձեռագործ, ձեռագործի ·
Զէն, զինու · սպառազէն, սպառազինի ·
Խրատ, խրատու · անխրատ, անխրատի ·
Միտք, մտաց · անմիտ, անմտի ·
Փառք, փառաց · վեհափառ, վեհափառի եւ այլն ։

## Դ Ա Ս  Լ Ե ·

77 · Հ · Բառը հոլոված ատեն ինչպէս գիտնալու է թէ

արդեօք կորուսմամբ է, անկորուստ կամ փոփոխմամբ.

Գ. Բառի մը թէ որ վերջի վանկ է ըլլայ, է ի կամ ե ի կը փոխուի. ինչպէս, ձէթ, ձիթոյ. սէր, սիրոյ. մովսէս, մովսիսի ։ Թէ որ եա ըլլայ. ե կը փոխուի. ինչպէս, ատեան, ատենի ։ Եայ վերջաւորուածն է ի կը փոխուի. ինչպէս, քրիստոնեայ, քրիստոնէի. իւ. ոյ վերջաւորուածներ ու ի կը փոխուին. ինչպէս, պատիւ, պատուոյ. ողջոյն, ողջունի. յոյս, յուսոյ ։ Իսկ այն որ ի կամ ու կը վերջաւորուի, կը կորսուի. ինչպէս, միս, մսոյ. գլուխ, գլխոյ. բայց թէ իրմէն վերջ բաղաձայն գիր չունենայ, անփոփոխ կը մնայ. ինչպէս, լեզու, լեզուի. մատանի, մատանւոյ. Նա եւ եթէ բառին սկիզբ գրուին, ը ի կը փոխուին երբեմն. ինչպէս, ինչք, ընչից. ինձ, ընձու. ուղտ, ըղտու ։

Անկորուստ եւ անփոփոխն ալ այն է, որ իր վերջի վանկ ա, ե, ո, օ գրերով կըլլայ. ինչպէս, Արքայ, արքայի, Նետ, նետի. Բողբոջ, բողբոջի. Տօն, տօնի եւ այլն ։

## ԱՂՒՍԱԿ ԺԲ· ԿԱՆՈՆԱՒՈՐ ՀՈԼՈՎՄԱՆՑ

| | Ա· | Բ· | Գ· | Դ· | Ե· | Զ· | Է· | Ը· | Թ·—Ժ· | ԺԱ· | ԺԲ· |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Բան | Բարբառ | Գետ | Նշխարք | Օգուտ | Փայլ | Հիւծ | Նեղութիւն | Գառն | Այր | Տէր | Հանգիստ |
| **ԵԶԱԿԻ** | | | | | | | | | | | |
| Ու· | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| Ս· | —ի | —ի | —ոյ | —այ | —ու | —ու | —ան | —ան | —ին | —եր | —ոյ | —եայ |
| Տ· | ի—[1] | ի— | ի— | ի— | ի— | ի— | ի— | ի— | ի— | ի— | ի— | ի— |
| Գ· | —իւ | —աւ | —ով | —եաւ | —ու | —ու | —ամբ | —ամբ | —ամբ | —երբ | —աւ | —եաւ |
| Բ· | ի—է | ի—է | ի—ոյ | ի—այ | ի—է —ուէ | ի—ուէ | ի—անէ | ի—ենէ | ի—անէ | ի—երէ | ի—ոյ | ի—եայ |
| Հ· | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— | զ— |
| **ՅՈԳՆԱԿԻ** | | | | | | | | | | | |
| Ու· | —ք | —ք | —ք | —ք | —ք | —ունք | —ունք | —ինք | —ինք | —երք | | |
| Ս· | —ից | ի—աց | —ոց | —եաց | —ոց | —ունց | —անց | —ենանց | —անց | —երց կամ —աց | | |
| Տ· | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ս | ի—ունս | ի—ունս | ի—ինս | ի—ինս | յ—երս | | |
| Գ· | —իւք | —օք | —ովք | —եօք | —ոք | —ամբք | —ամբք | —ամբք | —ամբք | —երբք | | |
| Բ· | ի—ից | ի—աց | ի—ոց | ի—եաց | ի—ոց | ի—անց | ի—անց | ի—անց | ի—անց | յ—երաց | | |
| Հ· | զ—ս | զ—ս | զ—ս | զ—ս | զ—ս | զ—ունս | զ—ունս | զ—ինս | զ—ինս | զ—երս | | |

1 Միայն նախդիրն տրականն դնի, զանազանի զներգործականն ըստ ամենայնի նոյն է սեռականին հետ ի եզակին ի յոգնակին։

# ԳԼՈՒԽ Դ.

## ԱԾԱԿԱՆԻ ՎՐԱՅ

### ԴԱՍ ԼԶ.

78. Հ. Ածական անուն զատ հոլովմունք ունի՞.

Պ. Ոչ. ածականը առանձին հոլովմունք չունի. այլ գոյականի հոլովմունքին վրայ կը հոլովի. ինչպէս, Բարի, բարւոյ. իմաստուն, իմաստնոյ. մեծ, մեծի. ծանր, ծանու. դառն, դառին. անոյշ, անուշի. Սուրբ, սրբոյ եւ այլն։

79. Հ. Ածականը գոյականին հետ ինչպէս կը հոլովի.

Պ. Թէ որ գոյականէն առաջ դրուի, նախդրիւ կը հոլովի. ինչպէս.

Եզակի.

| | |
|---|---|
| Ուղ. | խաւարին բանդ. (1) |
| Սեռ. | խաւարին բանդի. |
| Տրա. | խաւարին բանդի ի խաւարին բանդ. |
| Գործ. | խաւարին բանդիւ. |
| Բաց. | ի խաւարին բանդէ. |
| Հայց. | զխաւարին բանդ. |

Նախդրիւ կը հոլովին յետեւեալ բառեր։ (2)

Մտերիմ բարեկամ.

Վայրենի ծառ.

(1) Յոգնակին առաջի հոլովման վրայ կը հոլովի։

(2) Այս բառեր մէկ մէկ հոլովման վրայ կը հոլովին թէ եզակի եւ թէ յոգնակի։

Անոյշ գինի.
Անսուտ խոստումն.
Շքեղ զարդ.
Լուսաւոր աստղ.

## ԴԱՍ ԼԷ.

80. Հ. Թէ որ ածականը գոյականէն ետքը դրուի նէ ինչպէս կը հոլովի.
Պ. Թէ որ ածական գոյականէն ետքը դրուի, մէկ տեղ կը հոլովի. ինչպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | ծառ մեծ. | ծառք մեծք, |
| Սեռ. | ծառոյ մեծի. | ծառոց մեծաց. |
| Տր. | ծառոյ մեծի, ի ծառ մեծ. | ծառոց մեծաց, ի ծառս մեծս. |
| Գործ. | ծառով մեծաւ. | ծառովք մեծաւք. |
| Բաց. | ի ծառոյ մեծէ. | ի ծառոց մեծաց. |
| Հայց. | զծառ մեծ. | զծառս մեծս. |

Այսպէս մէկ տեղ կը հոլովին յետեւեալ բառերն ալ.

Եղբայր Սիրելի.
Այր Իմաստուն.
Հոգի Սուրբ.
Փող Մեծ եւ այլն:

ԴԱՍ ԼԸ. ԳԼՈՒԽ Ե.

## ՄԻՋԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

81. Հ. Ո՞րն է միջական անունը.

Պ. Միջականը որոշ բանմը կամ ինչութիւնմը չեն նշանակեր. եւ երեք կարգ է, Թուական, Մասնական, Հարցական։

82. Հ. Ո՞րն է Թուական անունը.

Պ. Թուական բանիմը համրանք կը ցուցնէ ու չորս տեսակ են. Բացարձակ, Դասական, Անձներական, Կրկնական։

ԴԱՍ ԼԹ.

83. Հ. Ո՞րն է Բացարձակը.

Պ. Բացարձակ բանիմ քանի հատ ըլլալը կը ցուցնէ, եւ այս պէս կը հոլովի. մի, միոյ կամ միոջ, միում, ի միոջէ, միով։ (1)

Երկու, երկուց, երկոքումբք. (2)

Երեք, երից, երիւք. (3)

Չորք, չորից, չորիւք. (3)

Հինգ, հնգի, իւ, ից, իւք. (3)

Վեց, վեցի, իւ, ից, իւք.

Եօթն, ան, ամբ, անց, ամբք.

---

(1) Յոգնակի չունի.

(2) Եզակի չունի եւ յոգնակի գործիականը մէկ ձեւ ալ ունի, Երկուօք։

(3) Եզակի չունին։

Ութ , ի , իւ , ից , իւք .

Ինն , ի , իւ , ինունց , ինումբք .

Տասն , ին , ամբ , ունք , անց , ամբք .

| | |
|---|---|
| Մետասան .<br>Երկոտասան .<br>Երեքտասան .<br>Չորեքտասան .<br>Հնգետասան .<br>Վեշտասան . | ի , իւ , ից , իւք . |
| Եօթն եւ տասն .<br>Ութն եւ տասն .<br>Ինն եւ տասն . | ին , ամբ , անց , ամբք . |
| Քսան .<br>Երեսուն .<br>Քառասուն .<br>Յիսուն .<br>Վաթսուն .<br>Եօթանասուն .<br>Ութսուն .<br>Իննսուն . | ի , իւ , ից , իւք . |
| Հարիւր .<br>Երկերիւր<br>Երեք հարիւր .<br>Չորեք հարիւր եւ այլն : | ոյ , ով , ոց , ովք |
| Հազար .<br>Երկու հազար .<br>Երեք հազար . | ի , աւ , աց , օք . |

Բիւր , ու , ու , ուց , ուք .

## ԴԱՍ Ի.

84. Հ. Ո՞րն է դասականը.

Պ. Դասական այն է, որ կարգ կը ցուցնէ, եւ այսպէս կը հոլովի.

Առաջին, ոյ, ում, ով, ոց, ովք.

Երկրորդ. | ի, աւ, այ, աւք կամ օք.
Երրորդ.
Տասներորդ.
Քսաներորդ.
Հազար երրորդ եւ այլն

## ԴԱՍ ԻԱ.

85. Հ. Ո՞րն է անձներականը.

Պ. Անձներական իր նշանակած թիւը մէկ տեղ համարելով կը ցուցնէ եւ այսպէս կը հոլովի.

### Եղակի

Ուղ. Երկուքեան, երկուքին.
Սեռ. Երկոցուն, երկոցունց.
Տ. Երկոցուն, յերկոսեան, յերկոսին.
Գործ. Երկուքումբ, երկուքումբք.
Բաց. յԵրկոցունց.
Հայց. զԵրկոսեան զերկոսին.

Այս պէս կը հոլովին.

Երկուքեան կամ երկուքին ·
Չորեքեան կամ չորեքին ·
Տասնեքեան կամ տասնեքին ·
Բոլորեքեան կամ բոլորեքին ·
Ամենեքեան կամ ամենեքին ·

ԴԱՍ ԽԲ·

86 · Հ · Ո՞րն է կրկնականը ·
Պ · Կրկնական բանիմը քանի պատիկ ըլլալը կը ցուցնէ · ինչպէս ·
Կրկին, ոյ, ով, ոց, ովք ·
Երեքկին, ոյ, ով, ոց, ովք ·
Չորեքկին, ոյ, ով, ոց, ովք ·
Եօթանասնեկին, ոյ, ով, ոց, ովք ·
Եօթնապատիկ, ի, աւ, աց, կօք ·
Տասնապատիկ, ի, աւ, աց, օք ;

ԴԱՍ ԽԳ·

87 · Հ · Ի՞նչ գիտելիք կայ Բացարձակ Թուականին վրայ ·
Պ · Մի բացարձակ Թուականը եզակի գոյականմը կուզէ եւ անոր հետ մէկ տեղ կը հոլովի · ինչպէս ·
Այր մի, առն միոյ, արամբ միով, յառնէ միոջէ ։
Տուն մի, տան միոյ, տամբ միով, ի տանէ միոջէ եւ այլն ։
Իսկ Երկու Երեք Չորք անեզական են միշտ յոգնակի գոյական մը կուզեն եւ անոր հետ մէկ տեղ կը հոլովին · ինչպէս · Երկու աւուրք, երկուց աւուրց ·
Երկուք աւուրբք · երեք վկայք, Երից վկայից ·

երիւք վկայիւք .
Չորք ձեռք , չորից ձեռաց , չորիւք ձեռօք եւ այլն ։
Բայց հնգէն մինչեւ հազար հասարակ ածականի պէս կը-հոլովին . այսինքն թէ որ յառաջ դրուին՝ նախդրիւ . իսկ եթէ ետքը դրուին , մէկ տեղ կը հոլովին . ինչպէս ,
Վեց ժամ, վեց ժամու .
Ժամ վեց ժամու վեցի , Ժամաւ վեցիւ ։
Եղբարք հինգ , Եղբարց հնգից .
Հինգ եղբարք , հինգ եղբարց .
Տուն հազար , տուն հազարի ։
Հազար տուն , հազար տան եւ այլն ։

## ԴԱՍ ԽԴ.

88 . Հ . Ի՞նչ գիտելիք կայ Դասական Թուականին վրայ .
Պ . Դասականը գոյականէն թէ յառաջ դրուի , նախդրիւ կը հոլովի . եթէ ետք դրուի , մէկ տեղ կը հոլովին . ինչպէս .
Երկրորդ օր , երկրորդ աւուր ։
Օր երրորդ , աւուր երրորդի .
Չորրորդ ժամ , չորրորդ ժամու .
Ժամ չորրորդ , ժամու չորրորդի եւ այլն ։

89 . Հ . Ի՞նչ գիտելիք կայ Անձներականին վրայ ։
Պ . Անձներականը անեզական ըլլալուն համար յոգնակի գոյական մը կուզէ եւ անոր հետ մէկ տեղ կը հոլովի . ինչպէս .
Երկոքին ձեռք , երկոցունց ձեռաց .

Երկոքումբք ձեռօք եւ այլն ։

90. Հ. Ի՞նչ գիտելիք կայ կրկնականին վրայ.

Պ. Կրկնական իր գոյականէն յառաջ կը դրուի ու նախդրիւ կը հոլովի. ինչպէս, Տասնապատիկ հատուցումն, տասնապատիկ հատուցման. կրկին շինութիւն, կրկին շինութեան եւ այլն ։

## ԴԱՍ ԽԵ.

## ՄԱՍՆԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

91. Հ. Ո՞րն է մասնական անունը եւ ի՞նչպէս կը հոլովի.

Պ. Մասնականը մասն կտոր կը ցուցնէ եւ այսպէս կը հոլովի ։

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ուղ. | Ոմն, | Ոք. |
| Սեռ, | Ուրումն, | Ուրուք. |
| Տրա. | Ումեմն, առ ումն, | Ումեք առ ոք. |
| Գործ. | Ոմամբ. | |
| Բաց. | յՈւմեմնէ, | յՈւմեքէ. |
| Հայց. | զՈմն, | զՈք. |

Յոգնակի

| | |
|---|---|
| Ուղ. | Ոմանք. |
| Սեռ. | Ոմանց. |
| Տրա. | Ոմանց, յոմանս. |
| Գործ. | Ոմամբք. |
| Բաց. | յՈմանց. |
| Հայց. | զՈմանս. |

Եզակի

Ուղ. Իմ, իք, ինչ.
Սեռ, Իրիք.
Տրա, Իմեմ, ի միք, յինչ, առ իմ.
Գործ, Իւիք.
Բաց, յիմեմնէ, յիմեքէ.
Հայց, զիմ, զինչ.

Այլ, այլոյ, այլում, յայլմէ, այլով, այլոց, այլովք.
Իւրաքանչիւր, ոյ, ով, ոց, ովք.
Երկաքանչիւր, ոյ, ով, ոց, ովք.
Միւս, ոյ, ով, ոց, ովք.

Յոգնակի

Ուղ. չունի.
Սեռ. Միմեանց, իրերաց.
Տրա. Միմեանց, առ միմեանս, իրերաց առ իրեարս,
Գործ. Միմեամբք, իրերօք. (յիրեարս.
Բաց. ի Միմեանց, յիրերաց.
Հայց. զՄիմեանս, զիրեարս.

## ԴԱՍ ԽԶ.

## ՀԱՐՑԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

92. Հ. Ո՞րն է Հարցական եւ ի՞նչպէս կը հոլովի.
Պ. Հարցական կը հարցնէ ու այսպէս կը հոլովի.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Ո՞վ ո՞. | Ո՞յք. |
| Սեռ. | Ո՞յր. | Ո՞յց. |
| Տրա. | Ո՞ւմ, յո՞, յո՞վ առ ո՞. | Ոյո՞ց, յո՞յս. |
| Գործ | Որո՞վ. | Որո՞վք. |

Բաց. յՈւմէ՞, յՈրո՞ց.
Հայց. զՈ՞վ, զՈ՞յս.

### Եզակի

Ուղ. Ջի՞, զի՞նչ, ի՞նչ,
Սեռ. Ի՞ր Ե՞ր.
Տրա. Ի՞մ, հի՞մ, ըրո՞ւմ, երո՞ւմ, յի՞նչ.
Գործ. Ի՞ւ.
Բաց. Ա՞ռ իմէ.
Հայց. զի՞, զի՞նչ, ի՞նչ.

## ԴԱՍ ԽԵ.

93. Հ. Ի՞նչ գիտելիք կայ Մասնական անուան վրայ.
Պ. Մասնականը իր գոյականէն թէ որ առաջ գրուի, նախդրիւ կը հոլովի. եւ երբեմն մէկ տեղ. իսկ թէ որ ետք գրուի, մէկ տեղ կը հոլովի. ինչպէս.
Քահանայ Ոմն, Քահանայի ուրումն.
Ոմն Քահանայ, ուրումն Քահանայի.
Այլ Քաղաք, այլոյ Քաղաքի.
Քաղաք այլ, քաղաքի Այլոյ.
Պատճառ ինչ, պատճառի Իրիք.
Ինչ պատճառ, իրիք Պատճառի եւ այլն։

94. Հ. Ի՞նչ գիտելիք կայ Հարցականին վրայ.
Պ. Հարցականը իր գոյականէն յառաջ կը գրուի ու մէկ տեղ կը հոլովի. ինչպէս.
Ո՞ր քաղաք, որո՞յ քաղաքի.
Ո՞ր ժողովուրդ, որո՞յ ժողովրդեան եւ այլն.

# ՄԱՍՆ Բ.

## ԳԼՈՒԽ Ձ.

### ԴԱՍ ԽԸ.

### ԴԵՐԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ.

95. Հ. Ի՞նչ է դերանունը.

Պ. Դերանունը այն է, որ խօսքի մէջ արդէն յիշուած անուն մը կը ցուցնէ ու չի թողուր միշտ մի եւ նոյն բառը կրկնուի ու յիշուի. ինչպէս.

Աստուած ստեղծ զերկինս եւ զերկիր. ամենայն ինչ գործք ձեռաց նորա են. նա խնամէ զամենայն. ինքն է կառավար ամենայնի: Ահա հոս նորա, նա, ինքն դերանուն են, անուան տեղ դրուած:

96. Հ. Քանի՞ կերպ է դերանուն.

Պ. Չորս. Էական, Ցուցական, Ստացական եւ Յարաբերական:

### ԴԱՍ ԽԹ.

97. Հ. Ո՞րն է էական դերանունը.

Պ. Էական դերանունը գոյականի պէս ինչ ըլլալը կը ցուցնէ եւ ասոնք են. ես, դու, ինքն, ինք:

98. Հ. Ո՞րն է ցուցական դերանունը.

Պ. Ցուցական դերանունը, երբ թէ գործը մատով կը ցուցնէ. ոմանք գոյական են եւ ոմանք ածական. եւ ա-

սոնք են. սա, դա, նա, (դոյական են.) այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, (ածական են.)

99. Հ. Ո՞րն է Ստացական դերանունը.

Պ. Ստացական դերանունը ունենալ կը ցուցնէ, և կըշինուի էական կամ ցուցական դերանուանց սեռականներէն. ինչպէս, իմ, քո, մեր, ձեր, իւր, սորայ, դորայ, նորայ. և այլն.

100. Հ. Ո՞րն է Յարաբերական դերանունը.

Պ. Յարաբերական դերանունն այն է, որ վերի բառը կամ ամբողջ խօսքը յառաջ կը բերէ և այս է. որ:

## ԴԱՍ Ծ.

## ԳԼՈՒԽ Է.

## ԴԵՐԱՆՈՒԱՆ ՊԱՐԱԳԱՅԻՑ ՎՐԱՅ

101. Հ. Դերանուան պարագաներ քանի՞ են.

Պ. Հինգ են. դէմ, յօդ, թիւ, հոլով և հոլովումն:

102. Հ. Դէմքը քանի՞ է.

Պ. Երեք է. Ա. Բ. Գ: Ա. է խօսող. ինչպէս, ես, մեք. Բ. դէմն է որ խօսող իր դիմացին կը ցուցնէ. ինչպէս, դու, դուք: Գ. դէմն ալ այն է, որուն վրայ խօսք կըլլայ. ինչպէս, նա, նոքա:

103. Հ. Ո՞րն է յօդը.

Պ. Յօդը կըսուի այս երեք գիրը. ս, դ, ն, որ դէմ կը ցուցնեն. ս. Ա. դէմ կը ցուցնէ. դ. Բ. դէմ. ն. Գ. դէմ. ինչպէս, Տունս, Տունդ, Տունն:

## ԴԱՍ ԾԱ·

104 · Հ · Ո՞րն է դերանուան թիւ եւ հոլովը ·
Պ · Դերանուան թիւն ու հոլովն անուան պէս է · Եզակի, եւ · Յոգնակի, վեց ։ Ուղ, Սեռ, Տրա, Գործ, Բաց, Հայց ։

105 · Հ · Դերանուան հոլովմունք ինչպէս է ·
Պ · Դերանուան հոլովմունք անկանոն են, եւ եօթն տեսակ են · բայց կան մէկ քանիմը հոլովներ, որ անուան կանոնաւոր հոլովմանց վրայ կը հոլովին ։

## ԴԱՍ ԾԲ·

## ՀՈԼՈՎՄՈՒՆՔ ԵԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ

### 106 · ՕՐԻՆԱԿ Ա·

### Ա· ԴԷՄ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ · | Ես · | Մեք · |
| Սեռ · | Իմ · | Մեր · |
| Տրա · | Ինձ, յիս, ցիս, առ իս · | Մեզ, առ մեզ · |
| Գործ · | Ինեւ · | Մեւք · |
| Բաց, | յինէն · | ի մէնջ · |
| Հայց, | զիս · | զմեզ · |

## 107. ՕՐԻՆԱԿ Բ.

### Բ. ԴԷՄՔ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Դու. | Դուք. |
| Սեռ. | Քո. | Ձեր. |
| Տրա. | Քեզ, առ քեզ. | Ձեզ, առ ձեզ. |
| Գործ. | Քեւ. | Ձեւք. |
| Բաց. | ի Քէն. | ի Ձէնջ. |
| Հայց. | զՔեզ. | զՁեզ. |

## ԴԱՍ ԺԳ.

## 108. ՕՐԻՆԱԿ Գ.

### Գ. ԴԷՄՔ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Ինքն. | Ինքեանք. |
| Սեռ. | Ինքեան. | Ինքեանց. |
| Տրա. | Ինքեան, առ ինքն. | Ինքեանց, առ ինքեանս. |
| Գործ. | Ինքեամբ. | Ինքեամբք. |
| Բաց. | յԻնքենէ. | յԻնքեանց. |
| Հայց. | զԻնքն. | զԻնքեանս. |

## 109 · ՕՐԻՆԱԿ Դ·

### Գ · ԴԷՄՔ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ· | չունի · | Իւրեանք · |
| Սեռ· | Իւր · | Իւրեանց · |
| Տրա· | Իւր, յիւր, առ իւր · | Իւրեանց, յիւրեանս · |
| Գործ· | Իւրեւ, իւրեաւ, իւրեամբ · | Իւրեամբք · |
| Բաց· | յիւրմէ · | յիւրեանց · |
| Հայց· | չունի · | զիւրեանս · |

## ԴԱՍ ԺԴ·

## ՀՈԼՈՎՄՈՒՆՔ ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ

## 110 · ՕՐԻՆԱԿ Ե·

### Գ · ԴԷՄՔ

| | Եզակի | Յոգնակի · |
|---|---|---|
| Ուղ· | Նա · | Նոքա · |
| Սեռ· | Նորա · | Նոցա · |
| Տրա· | Նմա, առ նա · | Նոցա, առ նոսա · |
| Գործ· | Նովաւ · | Նոքօք · |
| Բաց· | ի Նմանէ · | ի Նոցանէ · |
| Հայց· | զՆա · | զՆոսա · |

Ասոր վրայ կը հոլովին սա, դա.

## 111. ՕՐԻՆԱԿ Զ.

### Գ. ԴԷՄՔ

| | Եզակի | Յոգնակի |
| --- | --- | --- |
| Ուղ. | Այն. | Այնք, այնոքիկ. |
| Սեռ. | Այնր, այնորիկ. | Այնց, այնոցիկ. |
| Տր. | Այնմ, այնմիկ, յայն, առ այն. | Այնց, յայնոցիկ, յայնս, յանոսիկ. |
| Գործ. | Այնու, այնուիկ. | Այնոքիւք, այնոքիմբք. |
| Բաց. | յԱյնմանէ. | յԱյնց, յայնցանէ. |
| Հայց. | զԱյն. | զԱյնս, զայնոսիկ. |

Ասոր վրայ կհոլովին այս, այդ.

## 112. ՕՐԻՆԱԿ Է.

### Գ. ԴԷՄՔ

| | Եզակի | Յոգնակի |
| --- | --- | --- |
| Ուղ. | Նոյն. | Նոյնք, նոքին. |
| Սեռ. | Նորին, նորուն. | Նոցին, նոցունց, նոցուն. |
| Տր. | Նմին, նորին. առ նոյն. | Նոցին, նոցունց, ի նոյնս, ի նոսին, առ նոսին, առ նոյնս. |
| Գործ. | Նովին, նովիմբ. | Նովիմբք, նոքիմբք, նոքումբք. |
| Բաց. | ——— | ի Նոցունց. |
| Հայց. | զՆոյն. | զՆոյնս, զնոսին. |

Ասոր վրայ կը հոլովին սոյն, դոյն.

## ՀՈԼՈՎՈՒՄՆՔ ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՑ

### ԴԱՍ ԺԵ.

| 113. | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Քո, քոյ. | Քոյք. (1) |
| Սեռ. | Քոյոյ. | Քոց, քոյոց. |
| Տրա. | Քում, ի քոյ. | Քոց, քոյոց, առ քոյս. |
| Գործ. | Քով, քոյով. | Քովք, քոյովք. |
| Բաց. | ի Քոյոյ, ի Քումմէ. | ի Քոց, ի քոյոց. |
| Հայց. | զՔո. | զՔոյս. |

Ասոր վրայ կը հոլովին իմ, մեր, ձեր, իւր, իմային, մերային, ձերային, իւրային, սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա եւ այլն։

## ՀՈԼՈՎՈՒՄՆ ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆ

| 114. | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Որ, ո. | Որք. (2) |
| Սեռ. | Որոյ. | Որոց. |
| Տրա. | Որում, ում, առ որ. | Որոց, առ որս. |
| Գործ. | Որով. | Որովք. |
| Բաց. | յՈրմէ. | յՈրոց. |
| Հայց. | զՈր. | զՈրս. |

(1) Այս Ստացականներ անուան հոլովման երրորդ օրինակին վրայ կը հոլովին։

(2) Այս յարաբերականին վրայ թէ որ պարոյկ մը (˚) դրուի, կըլլայ հարցական ածական. ինչպէս. ո՞ր, որո՞յ, որո՞վ եւ այլն։

## ԴԱՍ ԾԶ.

115. Հ. Ի՞նչ գիտելիք կայ եական դերանուանց վրայ.

Պ. Ինքն եական դերանունը երբեմն միւս դերանուանց հետ մէկ տեղ կը բանի. ինչպէս, Ես ինքն, դու ինքն, նա ինքն, Մեք ինքնին, դուք ինքնին, նոքա ինքնին, Ես ինձէն, դու քեզէն, Մեք մեզէն, դուք ձեզէն եւ այլն:

116. Հ. Ի՞նչ գիտելիք կայ ցուցական դերանուանց վրայ.

Պ. Այս, այդ, այն ցուցական դերանունները իրենց գոյականէն թէ առաջ եւ թէ ետքը կը դրուին ու մէկ տեղ կը հոլովին. բայց ետքը դրուած ատեն գոյականին վրայ դիմորոշ յօդը կը դրուի. ինչպէս, այս տուն, այսր տան. այդ մարդ, այդր մարդոյ. այն քաղաք, այնր քաղաքի եւ այլն: Տունս այս, տանս այսորիկ. մարդս այս, մարդոյս այսորիկ. քաղաքն այն, քաղաքին այնորիկ:

## ԴԱՍ ԾԷ.

117. Հ. Ի՞նչ գիտելիք կայ սոյն, դոյն, նոյն ցուցականներուն վրայ:

Պ. Այս դերանունները իրենց գոյականէն յառաջ կը դրուին ու մէկ տեղ կը հոլովին, եւ երբեմն ալ նախդրիւ. ինչպէս.

Նոյն հոգի, Նորին հոգւոյ.
Նոյն մարմին, Նորին մարմնոյ. | մէկ տեղ հոլովուած.

Նոյն հոգի, Նոյն հոգւոյ.
Նոյն մարմին, Նոյն մարմնոյ եւ այլն. | Նախդրիւ հոլովուած

118 · Հ · Ի՞նչ գիտելիք կայ ստացական դերանուան վրայ ·

Պ · Ստացական դերանունները իրենց գոյականէն ետքը կը դըրուին , ու մէկ տեղ կը հոլովին · ինչպէս ,

Մայր իմ , Մօր իմոյ ·
Մայր մեր , Մօր մերոյ ·
Հարք իմ , Հարց իմոց ·
Մարք իմ , Մարց իմոց ·
Տուն ձեր , Տան ձերոյ ·
Տունք ձեր , Տանց ձերոց եւ այլն ·

# ՄԱՍՆ Գ.

## ԳԼՈՒԽ Է.

### ԴԱՍ ԾԸ.

## ԲԱՅԻ ՎՐԱՅ

119. Հ. Ի՞նչ է բայը.

Պ. Բայը՝ գործողութիւնը ընելը, ըլլալը ու ըլլուիլը կը ցուցնէ։

120. Հ. Բային պարագայք քանի՞ են.

Պ. Բային պարագայք ինն են. սեռ, ձեւ, տեսակ, դէմք, թիւ, ժամանակ, եղանակ, խոնարհմունք եւ լծորդութիւն։

121. Հ. Բայի սեռը ո՞րն է եւ քանի՞ է.

Պ. Բայի սեռն է բայի որոշումն ու չորս է. ներգործական, կրաւորական, հասարակ եւ չէզոք։

### ԴԱՍ ԾԹ.

123. Հ. Ո՞րն է ներգործական բայը.

Պ. Երբոր գործողութիւն ընողէն ելնէ եւ ուրիշի վրայ անցնէ, այն բային ներգործական կըսուի. ինչպէս, գործեմ, փրկեմ, շինեմ եւ այլն։

123. Հ. Ո՞րն է կրաւորական բայը.

Պ. Կրաւորական բայը այն է, որ կը ցուցնէ գործողութիւն ուրիշէն ըլլուիլը. ինչպէս, գործիմ, փրկիմ, շինիմ եւ այլն.

124. Հ. Ո՞րն է չէզոք բայը.

Պ. Չէզոք այն է, որ գործողութիւն ընողին վրայ մնալ ու ուրիշի վրայ չանցնիլ կը ցուցնէ. ինչպէս, երթամ, մեռանիմ, նստիմ եւ այլն։

125. Հ. Ո՞րն է հասարակ բայը.

Պ. Հասարակ բայը այն է, որ թէ՛ ընելը եւ թէ ըլլալը կը ցուցնէ միանգամայն, այսինքն երբեմն ներգործականի ուժ ունի եւ երբեմն կրաւորականի. ինչպէս, ծնանիմ. երբեմն կը նշանակէ ծնիլ եւ երբեմն ծնուիլ. նոյնպէս են սկսանիմ, կամիմ, փանիմ, խօսիմ եւ այլն բայեր։

126. Հ. Հապա ո՞րն է էական բայը.

Պ. Էական բայը՝ ըլլալը կը ցուցնէ. չէզոք բայի կարգ կը սեպուի, ու չորս տեսակ է. եմ. լինիմ, եղանիմ, գոմ։

## ԴԱՍ Կ.

127. Հ. Բայի ձեւը քանի՞ է.

Պ. Բայի ձեւը երեք է. պարզ, բարդ եւ բաղադրեալ. ինչպէս, գործեմ, առաքինեմ, վիճակաւորեմ։

128. Հ. Բայի տեսակը քանի՞ է.

Պ. Բայի տեսակը երկու է, նախատիպ եւ անցողական. ինչպէս, բարկանամ, բարկացուցանեմ։ Եւ այս անցողական մասնիկը թէ որ չէզոք բայի վրայ դրուի, կ'ընէ ներգործական։

129. Հ. Բայի թիւը քանի՞ է.

Պ. Բայի թիւն անուան ու դերանուան պէս երկու է. եզակի գործեմ, յոգնակի գործեմք։

130. Հ. Բայի դէմքը քանի՞ է.

Պ. Բայի դէմքը դերանուան պէս երեք է. Ա. գործեմ. Բ. գործես, Գ. գործէ։

## ԴԱՍ ԻԱ.

131. Հ. Բայի ժամանակը քանի՞ է.

Պ. Բայի ժամանակը երեք է. անցեալ, ներկայ, ապառնի. ինչպէս, գործեցի, գործեմ, գործեցից։ Անցեալն ալ երկու կերպ է. անկատար, կատարեալ. ինչպէս, գործէի, գործեցի։

132. Հ. Բայի եղանակը քանի՞ է.

Պ. Բայի եղանակը երեք է. սահմանական, հրամայական եւ ստորադասական։

133. Հ. Ո՞րն է սահմանական եղանակը.

Պ. Սահմանականը գործողութեան ներկայութիւն կը ցուցընէ բացարձակապէս. ինչպէս, գործեմ, գործեցի, գործեցից։

134. Հ. Ո՞րն է հրամայական եղանակը.

Պ. Հրամայականը գործմը կամ կը հրամայէ ընելու, կամ կարգելէ. ինչպէս, գործեա՛, մի՛ գործեր. գործեցէ՛ք, մի գործէք։

135. Հ. Ո՞րն է ստորադասական եղանակը.

Պ. Ստորադասականը կախ կը թողու. ինչպէս, գործիցեմ, երթիցեմ եւ այլն։

## ԴԱՍ ԻԲ.

136. Հ. Ո՞րն է բայի խոնարհմունքը.

Պ. Բայի պէս պէս վերջաւորութեանց փոփոխութեան, խոնարհմունք կըսուի. ինչպէս, գործեմ, գործէի, գործեցի, գործեցից եւ այլն։

137. Հ. Քանի՞ կերպ է խոնարհմունք.

Պ. Երեք կերպ է. կանոնաւոր, անկանոն կամ շարփաղի եւ պակասաւոր։

138. Հ. Ո՞րն է կանոնաւոր խոնարհմունք.

Պ. Կանոնաւոր այն է, որ հասարակ կարգէն դուրս չելներ մինչեւ վերջ. ինչպէս, գործեմ, գործէի, գործեցի, գործէա, գործիցեմ:

139. Հ. Ո՞րն է անկանոն խոնարհմունքը.

Պ. Անկանոն կամ զարտուղի խոնարհմունք այն է, որ հասարակ կարգէն դուրս կ'ելնէ. որուն սահմանականի ներկան, անկատար, ստորադասականը կանոնաւոր են. իսկ կատարեալ, ապառնին եւ հրամայականը կը փոխուին. ինչպէս, տանեմ, տանէի, տարի, տարից, տար, տանիցեմ:

140. Հ. Ո՞րն է պակասաւորը.

Պ. Պակասաւոր խոնարհմունքը այն է, որուն քանիմը ժամանակներ կը պակսին եւ ուրիշ բայէ կը լրանան. ինչպէս, ծանաչեմ, ծանեայ եւ այլն:

## ԴԱՍ ԻԳ.

141. Հ. Ի՞նչ է լծորդը.

Պ. Չորս տեսակ աննշան մասնիկ կայ, որոնցմով բայ կը շինուի. ինչպէս, եմ, իմ, ամ, ում. գործեմ, գործիմ, բանամ, Թողում:

142. Հ. Եմ լծորդ քանի՞ կերպ է.

Պ. Երեք կերպ է. եմ, անեմ, ուցանեմ. ինչպէս, գործեմ, հատանեմ, ուսուցանեմ:

143. Հ. Իմ լծորդ քանի՞ կերպ է.

Պ. Իմ լծորդ երեք կերպ է. ինչպէս, իմ, անիմ, ուցանիմ. գործիմ, հատանիմ, ուսուցանիմ:

144. Հ. Ամ եւ ում լծորդներ քանի՞ կերպ են.

Պ. Ամ լծորդը երկու կերպ է. ինչպէս, ամ, անամ. բանամ, խոստանամ: իսկ ում լծորդը մէկ կերպ է. ինչպէս, Թողում:

## ԴԱՍ ԻԴ.

145. Հ. Ի՞նչ գիտելիք կայ բայի սեռին վրայ.

Պ. Եմ լծորդ. ունեցող ներգործականի կրաւորականը, իմ կըլլայ. ինչպէս, գործեմ, գործիմ։ Այլեւ ամ լծորդով եղած ներգործականներու կրաւորական էական բայով կըլլան. (բաց ի մէկ քանիէն) ինչպէս, խոստանամ կրաւորականը կըլլայ խոստացեալ լինիմ եւ այլն.

Չէզոք բայերն ալ եթէ ներգործականի պէս խոնարհեն, ներգործակերպ չէզոք կըսուին. ինչպէս, իջանեմ. եթէ կրաւորականի պէս խոնարհին, կրաւորակերպ չէզոք կըսուին. ինչպէս, մտանիմ։

## ԴԱՍ ԻԵ.

146. Հ. Ի՞նչ գիտելիք կայ խոնարհմանց վրայ.

Պ. Այն ներգործականը որուն կատարեալ եզակի Ա. դէմք, ի ով կը վերջաւորուի, ինչպէս գործեցի, հասի, հեղի, կրաւորականի կատարեալը այ կըլլայ. ինչպէս, գործեցայ, հասայ, հեղայ։ Իսկ որուն որ այ կը վերջաւորուի. ինչպէս, խոստացայ, մոռացայ, կրաւորականին կատարեալը էական բայով կըլլայ. ինչպէս, խոստացեալ եղէ, մոռացեալ եղէ.

147. Հ. Ապառնին ինչպէս գիտնալու է.

Պ. Թէ ներգործականի թէ կրաւորականի եւ թէ չէզոքի կատարեալ եզակի Գ. դէմքին վրայ ց գիրը աւելցնելով, կըլլայ ապառնի նոյն բային. (բաց ի քանիմ բայերէն) ինչպէս, գործեցի, գործեսցէ. բացի. բացցէ. Թողի, թողցէ. գործեցայ, գործեսցի. բացայ, բացցի. Թողայ, թողցի. մեռայ, մեռցի եւ այլն.

## ԴԱՍ ԿԴ.

148. Հ. Հապա ո՞րն է դիմազուրկ բայը.

Պ. Դիմազուրկ բայը այն է, որ թէ եզակի եւ թէ յոգնակի ամէն եղանակի մէջ միայն Գ. դէմք ունի:

149. Հ. Քանի՞ կերպ է դիմազուրկ բայը.

Պ. Երկու. ըստ ինքեան, ըստ պատահման:

150. Հ. Ո՞րն է դիմազուրկ ըստ ինքեան.

Պ. Դիմազուրկ ըստ ինքեան այն է, որ միայն Գ. դէմք ունի թէ եզակի թէ յոգնակի. ինչպէս, հարկ է, արժան է եւ այլն:

151. Հ. Ո՞րն է դիմազուրկ ըստ պատահման.

Պ. Դիմազուրկ ըստ պատահման այն է, որ թէ պէտ ամէն դէմքն ունի, բայց սովորաբար միայն Գ. դէմքով կը բանի թէ եզակի թէ յոգնակի, ամէն եղանակի մէջ. ինչպէս, զուայ, զուան. յաջէ, յաջեն. լուսանայ. մթանայ. անձրեւէ եւ այլն:

## ԴԱՍ ԿԵ.

## ԽՈՆԱՐՀՄՈՒՆՔ ԷԱԿԱՆ ԲԱՅԻՑ

### 152. ԵՄ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Եմ, ես, է, | եմք, էք, են. |

Անցեալ անկատար

| | |
|---|---|
| Էի, էիր, էր, | էաք, էիք, էին. |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եր, Էք, երուք.

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

### Ներկայ

Իցեմ, իցես, իցէ, Իցեմք, իցէք, իցեն.

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ Ել.
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ Եալ.
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ Ելոց.

## 153 ԼԻՆԻՄ

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

### Ներկայ

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Լինիմ, Լինիս, Լինի, | Լինիմք, Լինիք, Լինին. |

### Անցեալ անկատար

Լինէի, լինէիր, լինէր, Լինէաք, լինէիք, լինէին.

### Ապառնի

Լիցիմ, Լիցիս, Լիցի, Լերուք, Լիջիք, Լիցին.

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Լեր, լինիր, մի լինիր, Լերուք, լինիք, մի լինիք.

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Լինեյիմ, Լինեյիր, Լինեյր, Լինեյիմք, Լինեյիք,
(Լինեյին.

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ Լինել.
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ Լեալ.
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ Լինելոց.

## 154. ԵՂԱՆԻՄ

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Եզակի Յոգնակի

Եղանիմ, Եղանիս, Եղանի, Եղանիմք, Եղանիք,
(Եղանին.

Անցեալ անկատար

Եղանէի, Եղանէիր, Եղանէր, Եղանէաք, Եղանէիք,
(Եղանէին.

Անցեալ կատարեալ

Եղէ, Եղեր, Եղեւ, Եղաք, Եղէք, Եղեն.

Յոգնակի

Եղէց, Եղիցիս, Եղիցի, Եղիցուք, Եղիջիք, Եղիցին.

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եղիջիր, Եղանիջիր, մի Եղանիր. Եղերուք, մի Եղանիք.

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Եղանիցիմ, Եղանիցիս, Եղանիցի, Եղանիցիմք, Եղանիջիք, Եղանիցին.

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ Եղանել.
ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ Եղեալ.
ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ Եղանելոց.

## 155. ԳՈՄ

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Գոմ, Գոս, Գոյ. | Գոմք, Գոյք, Գոն. |

Անցեալ անկատար

Գոյի, Գոյիր, Գոյր, Գոյաք, Գոյիք, Գոյին.

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

գուցեմ, գուցես, գուցէ, գուցեմք, գուցէք, գուցեն.

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ գոլ. (1)

## ԴԱՍ ԿԲ.

## ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆՔ ԿԱՆՈՆԱՒՈՐ ԲԱՅԻՑ

### ՕՐԻՆԱԿ Ա. Լծորդութիւն եմ.

Ներգործական

156. եմ. գործեմ. 157. անեմ. տեսանեմ. 158. ուցանեմ. ուսուցանեմ:

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

| | | |
|---|---|---|
| գործեմ. | Տեսանեմ. | Ուսուցանեմ. |
| գործես. | Տեսանես. | Ուսուցանես. |
| գործէ. | Տեսանէ. | Ուսուցանէ. |
| գործեմք. | Տեսանեմք. | Ուսուցանեմք. |
| գործէք. | Տեսանէք. | Ուսուցանէք. |
| գործեն. | Տեսանեն. | Ուսուցանեն. |

(1) Կայ է՛ երրորդ դէմք եզական բայ մի ալ, որ չա՛լ կըրբանի միջոց. ինչպէս, չէ՛, չկայ. չէ՛ հնար, հնար չկայ.

### Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| գործէի . | Տեսանէի . | Ուսուցանէի . |
| գործէիր . | Տեսանէիր . | Ուսուցանէիր . |
| գործէր . | Տեսանէր . | Ուսուցանէր . |
| գործէաք . | Տեսանէաք . | Ուսուցանէաք . |
| գործէիք . | Տեսանէիք . | Ուսուցանէիք . |
| գործէին . | Տեսանէին . | Ուսուցանէին . |

### Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| գործեցի . | Տեսի . | Ուսուցի . |
| գործեցեր . | Տեսեր . | Ուսուցեր . |
| գործեաց . | Տես , կամ Ետես . | Ուսոյց . |
| գործեցաք . | Տեսաք . | Ուսուցաք . |
| գործեցիք . | Տեսիք . | Ուսուցիք . |
| գործեցին . | Տեսին . | Ուսուցին . |

### Ապառնի

| | | |
|---|---|---|
| գործեսցից . | Տեսից . | Ուսուսցից . |
| գործեսցես . | Տեսցես . | Ուսուսցես . |
| գործեսցէ . | Տեսցէ . | Ուսուսցէ . |
| գործեսցուք . | Տեսցուք . | Ուսուսցուք . |
| գործեսջիք . | Տեսջիք . | Ուսուսջիք . |
| գործեսցեն . | Տեսցեն . | Ուսուսցեն . |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Գործեա՛ · | Տե՛ս · | Ուսի՛ · |
| Գործեսջի՛ր · | Տեսջի՛ր · | Ուսուսջի՛ր · |
| մի՛ գործեր · | մի՛ տեսաներ · | մի՛ ուսուցաներ · |
| Գործեցէք · | Տեսէք · | Ուսուցէք · |
| մի՛ գործէք · | մի՛ տեսանէք · | մի՛ ուսուցանէք · |

## ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| գործիցեմ · | տեսանիցեմ · | ուսուցանիցեմ · |
| գործիցես · | տեսանիցես · | ուսուցանիցես · |
| գործիցէ · | տեսանիցէ · | ուսուցանիցէ · |
| գործիցեմք · | տեսանիցեմք · | ուսուցանիցեմք · |
| գործիցէք · | տեսանիցէք · | ուսուցանիցէք · |
| գործիցեն · | տեսանիցեն · | ուսուցանիցեն · |

## ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Գործել · Տեսանել · Ուսուցանել ·

## ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

Գործեալ · Տեսեալ · Ուսուցեալ ·

## ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Գործելոց · Տեսանելոց · Ուսուցանելոց ·

159 Ասոնց վրայ կը խոնարհին ամէն էմ, անէմ եւ ուսանէմ վերջաւորուած կանոնաւոր բայեր ·

Ներգործական

| | | |
|---|---|---|
| Գրեմ. | Անիծանեմ. | Դարձուցանեմ. |
| Կոչեմ. | Արկանեմ. | Ջեռուցանեմ. |
| Կարեմ. | Հարկանեմ. | Մատուցանեմ. |
| Շինեմ. | Հատանեմ. | Ամրացուցանեմ. |
| Փրկեմ. | Հարցանեմ. | Նստուցանեմ. |
| Ասեմ. | Սպանանեմ. | Մեռուցանեմ. |
| Գիտեմ. | Գտանեմ. | Ապրեցուցանեմ. |
| Սիրեմ. | Ցուցանեմ. | Կեցուցանեմ. |
| Մատնեմ. | Կլանեմ. | Զօրացուցանեմ. |

Չէզոք

| | |
|---|---|
| Ամաչեմ. | Անցանեմ. (1) |
| Դիմեմ. | Ելանեմ. |
| Տիրեմ. | Իջանեմ. |
| Սպասեմ. | Մտանեմ. |
| Ապաշխարեմ. | Հասանեմ, |
| Աղաղակեմ. | Ժամանեմ. |

## ԴԱՍ ԿԹ.

## ՕՐԻՆԱԿ Բ. Լծորդութիւն իմ.

Կրաւորական

190. իմ Գործիմ. 161. անիմ Տեսանիմ. 162. ուցանիմ Ուսուցանիմ:

(1) Ուցանեմ վերջաւորութիւն ունեցող չէզոք բայ չկայ:

# ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

## Ներկայ

| | | |
|---|---|---|
| Գործիմ. | Տեսանիմ. | Ուսուցանիմ. (1) |
| Գործիս. | Տեսանիս. | Ուսուցանիս. |
| Գործի. | Տեսանի. | Ուսուցանի. |
| Գործիմք. | Տեսանիմք. | Ուսուցանիմք. |
| Գործիք. | Տեսանիք. | Ուսուցանիք. |
| Գործին. | Տեսանին. | Ուսուցանին. |

## Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Գործէի. | Տեսանէի. | Ուսուցանէի. |
| Գործէիր. | Տեսանէիր. | Ուսուցանէիր. |
| Գործէր. (2) | Տեսանէր. | Ուսուցանէր. |
| Գործէաք. | Տեսանէաք. | Ուսուցանէաք. |
| Գործէիք. | Տեսանէիք. | Ուսուցանէիք. |
| Գործէին. | Տեսանէին. | Ուսուցանէին. |

## Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Գործեցայ. | Տեսայ. | Ուսուցայ, Ուսեալ եղէ. |
| Գործեցար. | Տեսար. | Ուսուցար, Ուսեալ եղեր. |

---

(1) Այսր կրաւորական աւելի էական բայով կըլլայ. այսպէս, Ուսեալ լինիմ. Զօրացեալ լինիմ եւ այլն։

(2) Անկատար եզակի Գ. դէմք իւր ալ կըլլայ. այսպէս, գործիւր, տեսանիւր, ուսուցանիւր։

գործեցաւ . տեսաւ . Ուսուցաւ եւ այլն :
գործեցաք . տեսաք . Ուսուցաք .
գործեցայք . տեսայք . Ուսուցայք .
գործեցան . տեսան . Ուսուցան .

Ապառնի

գործեցայց . տեսայց . Ուսեալ եղէց .
գործեսցիս . տեսցիս . Ուսեալ եղիցիս եւ այլն :
գործեսցի . տեսցի .
գործեսցուք . տեսցուք .
գործեսջիք . տեսջիք .
գործեսցին . տեսցին .

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

գործեա՛ց . տեսի՛ր . Ուսեալ լեր .
գործեսջի՛ր . տեսջի՛ր . մի՛ Ուսեալ լինիր .
մի՛ գործիր . մի՛ տեսանիր . Ուսեալ լերո՛ւք .
գործեցարո՛ւք . տեսարո՛ւք . մի՛ Ուսեալ լինիք .
մի՛ գործիք . մի՛ տեսանիք .

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

գործիցիմ . տեսանիցիմ . Ուսեալ լինիցիմ եւ այլն :
գործիցիս . տեսանիցիս .
գործիցի . տեսանիցի .
գործիցիմք . տեսանիցիմք .
գործիցէք . տեսանիցէք .
գործիցին . տեսանիցին .

## ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Գործել․ Տեսանել․ Ուսուցանել․

## ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

Գործեալ․ Տեսեալ․ Ուսուցեալ․

## ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Գործելոց․ Տեսանելոց․ Ուսուցանելոց․
Գործելի․ Տեսանելի․ Ուսուցանելի․

163․ Ասոնց վրայ կը խոնարհին ամէն իմ․ անիմ եւ ուցանիմ վերջաւորուած բայեր։

### Կրաւորականք

| | | |
|---|---|---|
| Գրիմ․ | Անիծանիմ․ | Դարձուցանիմ․ |
| Կոչիմ․ | Հարկանիմ․ | Զօրացուցանիմ․ |
| Լինիմ․ | Հարցանիմ․ | Նստեցուցանիմ․ |
| Փրկիմ․ | Ցուցանիմ․ | Մեռուցանիմ․ |
| Սիրիմ․ | Գտանիմ․ | Մատուցանիմ․ |

### Հասարակք

| | |
|---|---|
| Դատիմ․ | Ծնանիմ․ |
| Թափառիմ․ | Ուսանիմ․ |
| Խոստովանիմ․ | Սկսանիմ․ |

| | |
|---|---|
| Խօսիմ. | Ցանիմ. |
| Կամիմ. | Սնանիմ. |
| Համարիմ. | Ագանիմ. |
| Ողորմիմ. | |

Չէզոք

| | | |
|---|---|---|
| Աշխատիմ. | Անկանիմ. | |
| Երեւիմ. | Մեռանիմ. | |
| Ապրիմ. | Նստիմ. | |
| Բնակիմ. | Թագչիմ. | Թագեայ. |
| Դատարիմ. | Փախչիմ. | Փախեայ. |
| Հրաժարիմ. | Թռչիմ. | Թռեայ. |

ԴԱՍ Հ.

ՕՐԻՆԱԿ Գ. Լծորդութիւն ամ.

Ներգործական      չէզոք

164. ամ. բանամ. 165. անամ. խոստանամ. 166. կեամ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

| | | |
|---|---|---|
| Բանամ. | Խոստանամ. | Կեամ. |
| Բանաս. | Խոստանաս. | Կեաս. |
| Բանայ. | Խոստանայ. | Կեայ. |

| | | |
|---|---|---|
| բանամք · | խոստանամք · | կեամք · |
| բանայք · | խոստանայք · | կեայք · |
| բանան · | խոստանան · | կեան · |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| բանայի · | խոստանայի · | կեի · |
| բանայիր · | խոստանայիր · | կեիր · |
| բանայր · | խոստանայր · | կեայր · |
| բանայաք · | խոստանայաք · | կեաք · |
| բանայիք · | խոստանայիք · | կեիք · |
| բանային · | խոստանային · | կեին · |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| բացի · | խոստացայ · | կեցի · |
| բացեր · | խոստացար · | կեցեր · |
| բաց կամ եբաց · | խոստացաւ · | կեաց կամ եկաց · |
| բացաք · | խոստացաք · | կեցաք · |
| բացիք · | խոստացայք · | կեցիք · |
| բացին · | խոստացան · | կեցին · |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| բացից · | խոստացայց · | կեցից · |
| բացցես · | խոստասցես · | կեցցես · |
| բացցէ · | խոստասցէ · | կեցցէ · |
| բացցուք · | խոստասցուք · | կեցցուք · |
| բացջիք · | խոստասջիք · | կեցջիք · |
| բացցեն · | խոստասցեն · | կեցցեն · |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Բաց․ | խոստացիր․ | կեաց․ |
| Բացջիր․ | խոստասջիր․ | կեցջիր․ |
| մի Բանար․ | մի խոստանար․ | մի կեար․ |
| Բացէք․ | խոստացէք․ | կեցէք․ |
| մի Բանայք․ | մի խոստանայք․ | մի կեայք․ |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Բանայցեմ․ | խոստանայցեմ․ | կեցցեմ․ |
| Բանայցես․ | խոստանայցես․ | կեցցես․ |
| Բանայցէ․ | խոստանայցէ․ | կեցցէ․ |
| Բանայցեմք․ | խոստանայցեմք․ | կեցցեմք․ |
| Բանայցէք․ | խոստանայցէք․ | կեցցէք․ |
| Բանայցեն․ | խոստանայցեն․ | կեցցեն․ |

## ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Բանալ․ | խոստանալ․ | կեալ․ |

## ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Բանալոց․ | խոստանալոց․ | կելոց․ |

## ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Բացեալ․ | խոստացեալ․ | կեցեալ․ |

168. Ասոնց վրայ կը խոնարհին ամէն ամ, անամ վերջաւորուած բայեր։

| Ներգործական | Հասարակ |
|---|---|
| Կարդամ. | Իմանամ. |
| Հաւատամ. | Մոռանամ. |
| Բառնամ. | Ստանամ. |
| Ձգամ. | Հոգամ. |
| Լամ. | Որսամ. |
| Ողբամ. | Մարգարէանամ. |
| Թանամ. | |

Չէզոք

| | |
|---|---|
| Գնամ. | Գոհանամ. |
| Խաղամ. | Հեռանամ. |
| Կամ. | Կուրանամ. |
| Մնամ. | Ընթանամ. |
| Խնդամ. | Զարմանամ. |
| Տոկամ. | Ցաղենամ. |
| Ցասամ. | Մերձենամ. |

## ԴԱՍ ՀԱ.

### ՕՐԻՆԱԿ ամ. Ա. Ծորղութիւն կրաւորական.

Անորոշական

169. ամ. Բառնամ. անամ. 170. Խոստամ.

## ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

### Ներկայ

Բանամ կամ բացեալ լինիմ. (1) — խոստանամ կամ խոստացեալ լինիմ.

### Անցեալ անկատար.

Բանայի կամ բացեալ լինէի. — խոստանայի կամ խոստացեալ լինէի.

### Անցեալ կատարեալ

Բացայ, բացեալ եղէ. — խոստացեալ եղէ.
Բացար, բացեալ եղեր. — խոստացեալ եղեր.
Բացաւ. — խոստացեալ եղեւ.
Բացաք. — խոստացեալ եղաք.
Բացայք. — խոստացեալ եղէք.
Բացան. — խոստացեալ եղեն.

### Ապառնի

Բացայց, կամ բացեալ եղէց. — խոստացեալ եղէց.
Բացցես, բացեալ եղիցես. — խոստացեալ եղիցես.
Բացցի. — խոստացեալ եղիցի.
Բացցուք. — խոստացեալ եղիցուք.
Բացջիք. — խոստացեալ եղիջիք.
Բացցեն. — խոստացեալ եղիցեն.

(1) Այսր կրաւորականը բանիմ ալ կըլլայ. նմանապէս բառնամ կըլլայ բառնիմ։

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Բացի՛ր կամ բացեալ լեր, | խոստացեալ լեր. |
| մի բանար. | մի խոստացեալ լինիր. |
| Բացէ՛ք, | խոստացեալ լերուք, |
| մի բանայք. | մի խոստացեալ լինիք. |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Բանայցիմ կամ բացեալ լինիցիմ. | խոստացեալ լինիցիմ. |
| Բանայցիս կամ բացեալ լինիցիս. | խոստացեալ լինիցիս. |
| Բանայցի. | խոստացեալ լինիցի. |
| Բանայցիմք. | խոստացեալ լինիցիմք. |
| Բանայցիք. | խոստացեալ լինիցիք. |
| Բանայցին. | խոստացեալ լինիցին. |

## ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

| | |
|---|---|
| Բանալ. | խոստանալ. |

## ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

| | |
|---|---|
| Բացեալ. | խոստացեալ. |

## ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

| | |
|---|---|
| Բանալոց. | խոստանալոց. |
| Բանալի. | խոստանալի. |

171 Այսպէս կը խոնարհին հետեւեալ բայերու կրաւորականք ։

Կարդամ. իմանամ. (1)

(1) Այս հասարակ բայերը կրաւորականի տեղ բանած ատեն, երբեմն էական բայով ալ կը խոնարհին ։

Հաւատամ․ Մոռանամ․
Լուանամ․ Ստանամ․
Բառնամ․ Հոգամ․
Լամ․ Որսամ․
Ձգամ․ Մարգարէանամ․

## ԴԱՍ ՀԲ․

## ՕՐԻՆԱԿ Դ․ Լծորդութիւն ում․

Ներգործական Կրաւորական

172 ․ ում ․ զենում ․ 173 ․ ում ․ զենում ․

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

զենում․ (Կրաւորական նոյն է․)
զենուս․
զենու․
զենումք․
զենուք․
զենուն․

Անցեալ անկատար

զենուի․ (նոյն է․)
զենուիր․
զենոյր․
զենուաք․
զենուիք․
զենուին․

### Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| ջենի . | ջենայ |
| ջեներ . | ջենար . |
| ջեն կամ եջեն . | ջենաւ . |
| ջենաք . | ջենաք . |
| ջենէք կամ ջենիք . | ջենայք . |
| ջենին . | ջենան . |

### Ապառնի

| | |
|---|---|
| ջենից . | ջենայց . |
| ջենցես . | ջենցիս . |
| ջենցէ . | ջենցի . |
| ջենցուք . | ջենցուք . |
| ջենջիք . | ջենջիք . |
| ջենցեն . | ջենցին . |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| ջեն . | ջենիր . |
| ջենջիր . | ջենջիր . |
| մի ջենուր . | մի ջենուր . |
| ջենէք . | ջենարուք . |
| մի ջենուք | մի ջենուք . |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ջենուցում . (Նոյն է)
ջենուցուս .
ջենուցու .
ջենուցումք .
ջենուցուք .

Ձենուցուն․ Արտաօրական

ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ

Ձենուլ․ (Նոյն է)

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

Ձենեալ․ (Նոյն է)

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Ձենլոց․ (Նոյն է)

174․ Ասոնց վրայ կը խոնարհին ամեն ու-մ վերջաւորեալ բայեր ։

| Ներգործական | Արտաօրական |
|---|---|
| Թողում․ | Թողում․ |
| Առնում․ | Առնում․ |
| Արգելում․ | Արգելում․ |
| Լնում․ | Լնում․ |
| Խնում․ | Խնում․ |
| Չէզոք (1) | Չէզոք |
| . . . . | Զբօսնում․ |
| . . . . | Երգնում․ |
| . . . . | Զարթնում․ |
| . . . . | Փախնում․ |
| . . . . | Քաղցնում․ |
| . . . . | Հասարակ |
| . . . . | Զգենում․ |
| . . . . | Ընթեռնում․ |
| . . . . | Կալնում․ |

(1) Ու-մ վերջաւորեալ ներգործակերպ չէզոք բայ չկայ ։

## ԴԱՍ ՀԳ.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՊԱՐԶԱԳՈՅՆ ԲԱՅԻՑ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԸ

### ՕՐԻՆԱԿ Ա. Լծորդութիւն եմ.

**175.** առնել. **176.** ըմպել. **177.** ուտել.

Ներգործական

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

| | | |
|---|---|---|
| Առնեմ. | Ըմպեմ. | Ուտեմ. |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Առնէի. | Ըմպէի. | Ուտէի. |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Արարի. | Արբի. | Կերի կամ կերայ. |
| Արարեր. | Արբեր. | Կերեր, կերար. |
| Արար. | Արբ կամ եարբ. | Եկեր, կերաւ. |
| Արարաք. | Արբաք. | Կերաք, կերաք. |
| Արարէք. | Արբէք. | Կերէք, կերայք. |
| Արարին. | Արբին. | Կերին, կերան. |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Արարից. | Արբից. | Կերից կամ կերայց. |
| Արասցես. | Արբցես. | Կերիցես. |
| Արասցէ. | Արբցէ. | Կերիցէ. |
| Արասցուք. | Արբցուք. | Կերիցուք. |
| Արասջիք. | Արբջիք. | Կերիջիք. |
| Արասցեն. | Արբցեն. | Կերիցեն. |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Արա. | Արբ. | Կեր. |
| Արասջիր. | Արբջիր. | Կերիջիր կամ ուտիջիր. |

մի Առներ․ մի Ըմպեր․ մի Ուտեր․
Արարէք․ Արբէք․ Կերէք կամ կերայք․
Առնիջիք․ Արբջիք․ Կերիջիք․
մի Առնէք․ մի Ըմպէք․ մի Ուտէք․

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Առնիցեմ․ Ըմպիցեմ․ Ուտիցեմ․

### ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Առնել․ Ըմպել․ Ուտել․

### ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

Արարեալ․ Արբեալ․ Կերեալ․

### ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Առնելոց․ Ըմպելոց․ Ուտելոց․

## ԴԱՍ ՀԴ․

178․ դնեմ․ 179․ լսեմ․ 180․ ճանաչեմ․

### Ներգործական

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ

Դնեմ․ Լսեմ․ Ճանաչեմ․

#### Անցեալ անկատար

Դնէի․ Լսէի․ Ճանաչէի․

#### Անցեալ կատարեալ

Եդի․ Լուայ․ Ծանեայ․
Եդեր․ Լուար․ Ծանեար․
Եդ․ Լուաւ․ Ծանեաւ․
Եդաք․ Լուաք․ Ծանեաք․

| | | |
|---|---|---|
| Եդիք · | Լուայք · | Ծանեայք · |
| Եդին · | Լուան · | Ծանեան · |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Եդից | Լուայց · | Ծանեայց · |
| Դիցես · | Լուիցես · | Ծանիցես · |
| Դիցէ · | Լուիցէ · | Ծանիցէ · |
| Դիցուք · | Լուիցուք | Ծանիցուք · |
| Դիջիք · | Լուիջիք · | Ծանիջիք · |
| Դիցեն · | Լուիցեն · | Ծանիցեն · |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Դիր · | Լուր · | Ծանիր · |
| Դիջիր · | Լուիջիր · | Ծանիջիր · |
| մի դներ · | մի լսեր · | մի ճանաչեր · |
| Դիք · | Լուարուք · | Ծաներուք · |
| մի դնէք · | Լուիջիք · | Ծանիք · |
| · · · | մի լսէք · | մի ճանաչէք · |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Դնիցեմ · | Լսիցեմ կամ Լուիցեմ · | Ճանաչիցեմ · |
| Դնիցես · | Լուիցես · | Ճանաչիցես · |
| Դնիցէ · | Լուիցէ · | Ճանաչիցէ · |
| Դնիցեմք · | Լուիցեմք · | Ճանաչիցեմք · |
| Դնիցէք · | Լուիցէք · | Ճանաչիցէք · |
| Դնիցեն · | Լուիցեն | Ճանաչիցեն · |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Դնել · | Լսել · | Ճանաչել · |

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Եդեալ · | Լուեալ · | Ծանուցեալ · |

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Դնելոց · | Լսելոց · | Ճանաչելոց · |

## ԴԱՍ ՀԵ.

### 181. մեղանչեմ. 182. յառնեմ.

Չէզոք

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

| | |
|---|---|
| Մեղաչեմ. | Յառնեմ. |

Անցեալ անկատար

| | |
|---|---|
| Մեղանչէի. | Յառնէի. |

Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| Մեղայ. | Յարեայ. |
| Մեղար. | Յարեար. |
| Մեղաւ. | Յարեաւ. |
| Մեղաք. | Յարեաք. |
| Մեղայք. | Յարեայք. |
| Մեղան. | Յարեան. |

Ապառնի

| | |
|---|---|
| Մեղայց. | Յարեայց. |
| Մեղիցես. | Յարիցես. |
| Մեղիցէ. | Յարիցէ. |
| Մեղիցուք. | Յարիցուք. |
| Մեղիջիք. | Յարիջիք. |
| Մեղիցեն. | Յարիցեն. |

### ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Մեղիր. | Արի, յարիր. |
| Մեղիջիր. | Յարիջիր, յառնիջիր. |
| մի Մեղանչեր. | մի Յառներ. |
| Մեղիք. | Արիք, յարերուք. |

մի Մեղանչէք.     մի Յառնէք.

### ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Մեղաչիցեմ.     Յառնիցեմ.
Մեղանչիցես.     Յառնիցես.
Մեղանչիցէ.     Յառնիցէ.
Մեղանչիցեմք.     Յառնիցեմք.
Մեղանչիցէք.     Յառնիցէք.
Մեղանչիցեն.     Յառնիցեն.

### ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Մեղանչել.     Յառնել.

### ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

Մեղուցեալ.     Յարուցեալ.

### ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Մ՝եղանչելոց, մեղուցելոց.     Յառնելոց.
Մ՝եղանչելի.

## ԴԱՍ ՀԶ.

## ՕՐԻՆԱԿ Բ. Լծորդութիւն իմ.

183. առնիմ. 184. ըմպիմ. 185. ուտիմ.

Կրաւորական*

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Առնիմ.     Ըմպիմ. (1)     Ուտիմ.

(1) Ասոր կրաւորականը էական բայով ալ կըլլայ, ըմպեալ լինիմ եւ այլն։

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Առնէի · | Ըմպէի · | Ուտէի |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Արարայ · | Արբայ · | Կերայ · |
| Արարար · | Արբար · | Կերար · |
| Արարաւ · | Արբաւ · | Կերաւ · |
| Արարաք · | Արբաք · | Կերաք · |
| Արարայք · | Արբայք · | Կերայք · |
| Արարան · | Արբան · | Կերան · |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Արարայց · | Արբայց · | Կերայց · |
| Արասցես · | Արբցես · | Կերիցես · |
| Արասցէ · | Արբցէ · | Կերիցէ · |
| Արասցուք · | Արբցուք · | Կերիցուք · |
| Արասջիք · | Արբջիք · | Կերիջիք · |
| Արասցեն · | Արբցեն · | Կերիցեն · |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Արասջիր · | Արբջիր · | Կեր · |
| Առնիջիր · | մի Ըմպիր · | Ուտիջիր · |
| մի Առնիր · | Արբջիք · | մի Ուտիր · |
| Արասջիք · | մի Ըմպիք · | Կերիջիք · |
| մի Առնիք · | | մի Ուտիք · |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Առնիցեմ · | Ըմպիցեմ · | Ուտիցեմ · |
| Առնիցես · | Ըմպիցես · | Ուտիցես · |
| Առնիցէ · | Ըմպիցէ · | Ուտիցէ · |
| Առնիցեմք · | Ըմպիցեմք · | Ուտիցեմք · |
| Առնիցէք · | Ըմպիցէք · | Ուտիցէք · |

Առնիցին . Ըմպիցին . Ուտիցին .

ԱՆՈՐՈՒՇ ԴԵՐԲԱՅ

Առնել . Ըմպել . Ուտել .

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

Արարեալ . Արբեալ . Կերեալ .

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Առնելոց . Ըմպելոց . Ուտելոց .

## Դ Ա Ս ՀԷ.

186 . դնիմ . 187 . լսիմ . 188 . ճանաչիմ .

Կրաւորական

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

Դնիմ . Լսիմ . (1) Ճանաչիմ .

Անցեալ անկատար

Դնէի . Լսէի . Ճանաչէի .

Անցեալ կատարեալ

Եդայ . Լուեալ եղէ . Ծանուցայ .
Եդար . Լուեալ եղեր . Ծանուցար .
Եդաւ . Լուեալ եղեւ . Ծանուցաւ .
Եդաք . Լուեալ եղաք . Ծանուցաք .
Եդայք . Լուեալ եղէք . Ծանուցայք .
Եդան . Լուեալ եղեն . Ծանուցան .

Ապառնի

Եդայց . Լուեալ եղէց . Ծանուցայց .

(1) Ասոր կրաւորականը էական բայով ալ կըլլայ , լսուեալ լինիմ , ծանուցեալ լինիմ ։

| | | |
|---|---|---|
| Դիցես · | Լուեալ եղիցես · | Ծանուսցես · |
| Դիցի · | Լուեալ եղիցի · | Ծանուսցի · |
| Դիցուք · | Լուեալ եղիցուք · | Ծանուսցուք |
| Դիջիք · | Լուեալ եղիջիք · | Ծանուսջիք · |
| Դիցեն · | Լուեալ եղիցին · | Ծանուսցեն · |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Դիջիր · | Լուեալ լեր · | Ծանիջիր · |
| Դնիջիր · | Լուեալ լիջիր · | մի ճանաչիր · |
| մի դնիր · | մի Լուեալ լինիր կամ (մի լսեր · | Ծանիջիք · |
| Եդարուք · | Լուեալ լերուք · | |
| մի դնիք · | մի Լուեալ լինիք (կամ մի լսիք · | մի ճանաչիք · |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Դնիցիմ · | Լսիցիմ · | Ճանաչիցիմ · |
| Դնիցիս · | Լսիցիս · | Ճանաչիցիս · |
| Դնիցի · | Լսիցի · | Ճանաչիցի · |
| Դնիցիմք · | Լսիցիմք · | Ճանաչիցիմք · |
| Դնիցիք · | Լսիցիք · | Ճանաչիցիք · |
| Դնիցին · | Լսիցին · | Ճանաչիցին · |

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Դնել · | Լսել · | Ճանաչել · |

ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Եդեալ · | Լուեալ · | Ծանուցեալ · |

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Դնելոց · | Լսելոց · | Ճանաչելոց · |
| Դնելի · | Լսելի · | Ճանաչելի · |

# ԴԱՍ ՀԲ.

## 189. ունիմ. 190. պարտիմ. (1) 191. գոգ.

Հասարակ Զեղչ Ներգործական

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| | Ներկայ | |
| Ունիմ. | Պարտիմ. | Ոչ ունի. |
| | Անցեալ անկատար | |
| Ունէի. | Պարտէի. | Ոչ ունի. |
| | Անցեալ կատարեալ | |
| Կալայ. | Ոչ ունի. | Ոչ ունի. |
| Կալար. | . . . | . . . |
| Կալաւ. | . . . | . . . |
| Կալաք. | . . . | . . . |
| Կալայք. | . . . | . . . |
| Կալան. | . . . | . . . |
| | Ապառնի | |
| Կալայց. | Ոչ ունի. | Ա. դէմ Ոչ ունի. |
| Կալցիս. | . . . | Գոգցիս. |
| Կալցի. | . . . | Գոգցէ. |
| Կալցուք. | . . . | Գոգցուք. |

(1) Պարտիմ, պարտեցայ, պարտեցայց, կանոնաւոր բայ է եւ կը նշանակէ պարտական եմ. պարտեմ, պարտեցի. պարտիմ, պարտեցայ. եւս կանոնաւոր բայ է եւ կը նշանակէ յաղթեմ, յաղթուիմ: Իսկ այս պակասաւոր է եւ կը նշանակէ պէտք է ինձի.

| | | |
|---|---|---|
| Կալջիք․ | . . . | Գոգջիք․ |
| Կալցին․ | . . . | Գոգցեն․ |

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Կալ, կա․ | Ոչ ունի | Գոգ․ |
| Կալջիր, ունիջիր․ | . . . | Գոգջիր․ |
| մի ունիր․ | . . . | . . . |
| Կալարուք, կալէք․ | . . . | Գոգէք․ |
| մի ունիք․ | . . . | . . . |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Ունիցիմ․ | Պարտիցիմ․ | Ոչ ունի․ |
| Ունիցիս․ | Պարտիցիս․ | . . . |
| Ունիցի․ | Պարտիցի․ | . . . |
| Ունիցիմք․ | Պարտիցիմք | . . . |
| Ունիցիք․ | Պարտիցիք․ | . . . |
| Ունիցին․ | Պարտիցին․ | . . . |

## ԱՆՈՐԻՇ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Ունել․ | Պարտել․ | Գոգել․ |

## ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Կալեալ․ | Ոչ ունի․ | Ոչ ունի․ |

## ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Ունելոց․ (1) | Ոչ ունի․ | Ոչ ունի․ |

(1) Ունիմ բայի վրայ կը խոնարհի ընդունիմ, որուն կրաւորականն ալ ունիմ բայի պէս էական բայով կըլլայ։

ԴԱՍ ՀԹ.

## ՕՐԻՆԱԿ Գ. (1) Լծորդութիւն ամ.

**192. տամ. 193. երթամ. 194. գամ.**

| Ներգործական | Չէզոք | Չէզոք |
|---|---|---|

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ներկայ

| | | |
|---|---|---|
| Տամ. | Երթամ. | Գամ. |

Անցեալ անկատար

| | | |
|---|---|---|
| Տայի. | Երթայի. | Գայի. |

Անցեալ կատարեալ

| | | |
|---|---|---|
| Ետու. | Չոքայ. | Եկի. |
| Ետուր. | Չոքար. | Եկիր. |
| Ետ. | Չոքաւ. | Եկն. |
| Տուաք. | Չոքաք. | Եկաք. |
| Ետուք. | Չոքայք. | Եկիք. |
| Ետուն. | Չոքան. | Եկին. |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| Տաց. | Երթայց. | Եկից. |
| Տացես. | Երթիցես. | Եկեսցես. |
| Տացէ. | Երթիցէ. | Եկեսցէ. |
| Տացուք. | Երթիցուք. | Եկեսցուք. |
| Տաջիք. | Երթիջիք. | Եկեսջիք. |
| Տացեն. | Երթիցեն. | Եկեսցեն. |

(1) Չորրորդ լծորդով, այսինքն ամ վերջաւորեալ, անկանոն եւ պակասաւոր բայ չկայ:

## ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Տուր · | Երթ · | Եկ · |
| Տաջիր · | Երթիջիր · | Եկեսջիր կամ գայջիր · |
| մի Տար · | մի Երթար · | մի Գար · |
| Տուք · | Երթայք · | Եկայք · |
| Տաջիք · | Երթիջիք · | · · · |
| մի Տայք · | մի Երթայք · | մի Գայք · |

## ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | | |
|---|---|---|
| Տայցեմ · | Երթայցեմ · | Գայցեմ · |
| Տայցես · | Երթայցես · | Գայցես · |
| Տայցէ · | Երթայցէ · | Գայցէ · |
| Տայցեմք · | Երթայցեմք · | Գայցեմք · |
| Տայցէք · | Երթայցէք · | Գայցէք · |
| Տայցեն · | Երթայցեն · | Գայցեն · |

## ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Տալ · | Երթալ · | Գալ · |

## ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Տուեալ · | Երթեալ · | Եկեալ · |

## ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

| | | |
|---|---|---|
| Տալոց · (1) | Երթալոց · | Գալոց · |

---

(1) Այսոր կրաւորականը էական բայով կըլլայ, բայց առանձին կատարեալ ապառնի եւ ստորադասականն ունի. ինչպէս, տուայ, տուար, տուաւ, տուաք, տուայք, տուան, տուայց, տուցիս, տուցի, տուցուք, տուցիք, տուցին, տուայցեմ, տուայցես եւ այլն:

## ԴԱՍ Զ.

# ԽՈՆԱՐՀՄՈՒՆՔ ԴԻՄԱԶՈՒՐԿ ԲԱՅԻՑ

195. Դիմազուրկ ըստ ինքեան.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Սահմանական ներկայ | Հարկ է. | Հարկ են. |
| Անցեալ անկատար | Հարկ էր. | Հարկ էին. |
| Անցեալ կատարեալ | Հարկ եղեւ. | Հարկ եղեն. |
| Ապառնի | Հարկ լիցի. | Հարկ լիցին. |
| Ստորադասական ներկայ | Հարկ իցէ. | Հարկ իցեն. |

Այսպէս կը խոնարհին հետեւեալ բայերը.

Անկ է. արժան է. պարտ է. բաւ է. կամ է. հնար է. մարթ է. պատշաճ է. բարւոք է. եւ այլն։

196. Դիմազուրկ ըստ պատահման.

## Ա. ԿԵՐՊ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Սահ. | Անձրեւէ. | Անձրեւեն |
| Անկ. | Անձրեւէր. | Անձրեւէին. |
| Կատ. | Անձրեւեաց. | Անձրեւեցին. |
| Ապ. | Անձրեւեսցէ. | Անձրեւեսցեն. |
| Ստ. | Անձրեւիցէ. | Անձրեւիցեն. |

197. Նոյն վրայ կը խոնարհին հետեւեալ բայերը.

Կարկտէ. ձիւնէ. ցօղէ. մրրկէ. մայէ. մանչէ. Թառաչէ. Ծագէ. փայլատակէ։

## 198 · Բ · ԽԵՐՊ

| | | |
|---|---|---|
| Սահ · | Ջռայ · | Ջռան · |
| Անկ · | Ջռայր · | Ջռային · |
| Կատ · | Ջռաց · | Ջռացին · |
| Աղ · | Ջռասցէ · | Ջռասցեն · |
| Ստր · | Ջռայցէ · | Ջռայցեն · |

## 199 · Գ · ԽԵՐՊ

| | | |
|---|---|---|
| Սահ · | Լուսանայ · | Լուսանան · |
| Անկ · | Լուսանայր · | Լուսանային · |
| Կատ · | Լուսացաւ · | Լուսացան · |
| Աղ · | Լուսասցի · | Լուսասցին · |
| Ստր · | Լուսանայցէ · | Լուսանայցեն · |

200 · Ասոր վրայ կը խոնարհին,

Այգանայ, մթանայ, երեկոյանայ, առաւօտանայ եւ այլն։

---

## ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՄԱՆՑ ՎՐԱՅ ՋԱՆԱԶԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 · Բայեր կան, որ կրաւորական խոնարհումնին չեզոքի փոխուելով՝ բոլորովին նշանակութիւննին կը փոխեն. ինչպէս, ժտեմ, խնդրել · ժտիմ, յանդգնիլ · պաշտեմ, ծառայել · պաշտիմ, բանի գալ։

2 · Կրաւորական ներգործականի տեղ կը բանի, երբ բայը իր վրայ ընել նշանակէ · ինչպէս, բաժանեցան զհանդերձս, այսինքն բաժանեցին · արկաւ զհանդերձս զիւրեւ, այսինքն եարկ։

3 · Երբեմն ներգործական ու ներգործակերպ չէզոք բայեր կրաւորակերպ կը բանին · ինչպէս,

Հարցաւ զնոյն բան, այսինքն Եհարց ։
Գտայ զքեզ, այսինքն գտի ։
Հասայ ի քաղաքն, այսինքն հասի ։
Ելաւ ի վերնատունն, այսինքն ել ։

4 · Ամէն բայերու Ապառնին ու Ստորադասական մէկ մէկու տեղ ալ կը բանին, ու Հրամայականի տեղ ալ, վրանին մի՛ դնելով · ինչպէս,
Մի՛ սիրեսցես, մի սիրեսջիք, մի սիրեսցեն · մի սիրիցես, մի փեսանիցես, մի փեսանիցէք ։

5 · Սահմանական ներկան՝ Ապառնիի եւ Ստորադասականի տեղ կը բանի · ինչպէս,
Թող զի գրեմ եւ ցուցանեմ, այսինքն Գրեցից ցուցից ։ Կամիս զի ծածկես, այսինքն զի ծածկեսցես ։ Լաւ է ձեզ եթէ ես երթամ, այսինքն երթայցեմ ։

6 · Երբեմն ստորադասականը սահմանականի անկատարի տեղ կը բանի · ինչպէս,
Փութայր եթէ հնար ինչ իցէ, այսինքն էր ։ Որոյ չգոյր տեղի, ուր զգլուխն դնիցէ, այսինքն դնէր ։

7 · Երբեմն Ապառնին եւ Ստորադասականը Սահմանականի ներկայի տեղ կը բանի ։ ինչպէս,
Գիտեմ եթէ այդպէս իցէ, այսինքն է ։ Եթէ հարցից զձեզ, այսինքն եթէ հարցանեմ ։

# ՄԱՍՆ Գ.

## ԳԼՈՒԽ Թ.

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԴԵՐԲԱՅԻ ՎՐԱՅ

### ԴԱՍ ՁԱ.

201. Հ. Ի՞նչ է դերբայը կամ ընդունելութիւնը.

Պ. Ընդունելութիւն կամ դերբայ կըսուին այն բառերը, որոնք թէ անուան եւ թէ բայի ուժ ունին. եւ ունին սեռ, տեսակ, ժամանակ, դէմ, թիւ, հոլով եւ յօդը։

202. Հ. Դերբային սեռը քանի՞ է.

Պ. Չորս է բային պէս. ներգործական, կրաւորական, հասարակ եւ չէզոք։

203. Հ. Ո՞րն է ներգործական դերբայը.

Պ. Ներգործական դերբայը այն է, որ ներգործական բային կը ձեւանայ. ել, ալ, ոլ, եալ, ող, իչ, լոց վերջաւորութեամբ. ինչպէս,

Գործել բային կը ձեւանայ գործել, գործեալ, գործող, գործիչ, գործելոց։

Բանալ բային կը ձեւանայ բանալ, բացեալ եւ այլն։

Թողուլ բային կը ձեւանայ թողուլ, թողեալ եւ այլն։

### ԴԱՍ ՁԲ.

204. Հ. Ո՞րն է կրաւորական դերբայը.

Պ. Կրաւորական դերբայը այն է, որ կրաւորական բային կը ձեւանայ. իլ, ալ, ոլ, լոց, լի վերջաւորութեամբ. ինչպէս գործիլ բային կը ձեւանայ, գործիլ, գործեալ, գործե-

լոց, գործելի։

Բանամ բայէն կը ձեւանայ բանալ, բացեալ եւ այլն։

Թողում բայէն կը ձեւանայ թողուլ, թողեալ եւ այլն։

205. Հ. Ո՞րն է հասարակ դերբայը.

Պ. Հասարակ դերբայը այն է, որ հասարակ բայէն կը ձեւանայ. ել, ալ. ուլ, եալ, ող, լոց. լի վերջաւորութեամբ. ինչպէս, խօսիմ բայէն կը ձեւանայ խօսել, խօսեալ, խօսող, խօսելոց, խօսելի։ Իմանամ բայէն կը ձեւանայ իմանալ, իմացեալ եւ այլն։

Ընթեռնում բայէն կձեւանայ ընթեռնուլ, ընթերցեալ և այլն։

## ԴԱՍ ԶԳ.

206. Հ. Ո՞րն է չէզոք դերբայը.

Պ. Չէզոք դերբայն այն է, որ չէզոք բայէն կը ձեւանայ. իլ, ել, ալ, ուլ, եալ, ող, լոց, լի վերջաւորութեամբ. ինչպէս, իջանեմ բայէն կը ձեւանայ իջանել, իջեալ, իջանող, իջանելոց, իջանելի։ Մեռանեմ բայէն կը ձեւանայ մեռանել, մեռեալ եւ այլն։

Գոհանամ բայէն կը ձեւանայ գոհանալ. գոհացեալ, գոհացող եւ այլն։

Փախնում բայէն կը ձեւանայ փախնուլ. փախուցեալ եւ այլն։

207. Հ. Դերբային տեսակը քանի՞ է.

Պ. Երկու՝ նախատիպ եւ ածանցական։

208. Հ. Ո՞րն է նախատիպ դերբայը.

Պ. Նախատիպ դերբայն այն է, որ պարզ եւ բարդ բայերէն կը ձեւանայ. ինչպէս, զօրանալ. առաքինել։

209. Հ. Ո՞րն է ածանցական դերբայը.

Պ. Ածանցական դերբայն այն է, որ ածանցեալ բայէն կը ձեւանայ. ինչպէս, զօրացուցանել. մերձեցուցանել եւ այլն։

## ԴԱՍ ԶԴ.

210. Հ. Դերբային ժամանակը քանի՞ է.

Պ. Երեք է՝ Ներկայ, Անցեալ, Ապառնի։

211. Հ. Ո՞րն է ներկայ դերբայը.

Պ. Ներկայ դերբայը այն է, որ գործողութիւնը ներկայի մէջ ցոյց կուտայ. ել, իլ, ալ, ուլ, ող, իչ վերջաւորութեամբ. ինչպէս, գործել, գործիլ, բռնալ, զգենուլ, գործող, գործիչ եւ այլն։

212. Հ. Ո՞րն է անցեալ դերբայը.

Պ. Անցեալ դերբայն այն է, որ գործողութիւն անցած ժամանակի մէջ ցոյց կուտայ եալ վերջաւորութեամբ. ինչպէս, գործեալ, բռնեալ, զգեցեալ։

213. Հ. Ո՞րն է ապառնի դերբայը.

Պ. Ապառնի դերբայը գործողութիւն գալիք ժամանակի մէջ ցոյց կուտայ լոց, լի վերջաւորութեամբ. ինչպէս, գործելոց, գործելի, բռնալոց, բռնալի եւ այլն։

## ԴԱՍ ԶԵ.

214. Հ. Դերբային ձեւը քանի՞ է.

Պ. Դերբային ձեւը երկու է, պարզ եւ բարդ. ինչպէս, խօսիլ, բարեխօսիլ։

215. Հ. Դերբայը ըստ անուան քանի՞ կերպ է.

Պ. Երկու, գոյական եւ ածական. ել, իլ, ալ, ուլ վերջաւորութիւնները գոյական են, իսկ միւսները բոլորն ածական են։

216. Հ. Դերբային թիւը քանի՞ է.

Պ. Երկու է. Եզակի, Յոգնակի. ինչպէս, գործել, գործող, գործեալք, գործողք եւ այլն։

217. Հ. Դերբային հոլովը քանի՞ է.

Գ. Անուան ու դերանուան պէս վերյ է՝ եւ անուանց կանոնաւոր հոլովմանց վրայ կը հոլովին ։

## ԴԱՍ ՁԶ.

## ՀՈԼՈՎՄՈՒՆՔ ԴԵՐԲԱՅԻՑ

### 218. ՕՐԻՆԱԿ Ա. Գործել. (1)

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | Գործել. | Գործեալք. |
| Սեռ. | Գործելոյ. | Գործելոց. |
| Տր. | Գործելոյ ի գործել (կամ առ ի գործել. | Գործելոց ի գոր- (ծեալս առ գործեալս. |
| Գործ. | Գործելով. | Գործելովք. |
| Բաց. | ի Գործելոյ. | ի Գործելոց. |
| Հայց. | զԳործել. | զԳործեալս. |

219. Ասոր վրայ կը հոլովին ամէն ել, իլ, ալ, ուլ, եալ վերջաւորութիւններ ։

| | | | |
|---|---|---|---|
| Ազատել: | ասել. | գիտել. | փրկել. |
| Ազատիլ. | ասիլ. | փրկիլ. | գործիլ. |
| Տալ. | խոստանալ. | երթալ. | բանալ. |
| Առնուլ. | ընթեռնուլ. | զգենուլ. | հեղուլ. |
| Ազատեալ. | ասացեալ. | փրկեալ. | գիտացեալ և այլն։ |

220. Օրինակ Բ. Գործող. 2

221. Օրինակ Գ. Երգիչ. 3

222. Օրինակ Դ. Գործելի. 4

---

1. Երրորդ հոլովման վրայ կը հոլովի ։ 2. Առաջինին վերայ։ 3. Երկրորդին վրայ ։ 4. Չորրորդին վրայ ։ Լոյ վերջաւորեալը նախդրիւ կը հոլովի. ինչպէս, գալոյ, ի գալոյ, զգալոյ ։

223 · Հ · Դերբային լծորդ քանի՞ է ·

Պ · Դերբային լծորդը ինն է · ել, իլ, ալ, ուլ, եալ, ող, իչ, լի, լոց · ինչպէս, գործել, գործիլ, բանալ, առնուլ, գործեալ, գործող, գործիչ, գործելի, գործելոց ։

## ԴԱՍ ՁԷ·

224 · Հ · Դերբայ կը խոնարհի՞ ·

Պ · Այո · սովորաբար եալ եւ լոց վերջաւորեալ դերբայներ՝ էական բայով կը խոնարհին ։

## ՕՐԻՆԱԿ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԴԵՐԲԱՅԻՑ

225 · եալ · գործեալ · 226 · լոց · գործելոց ·

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

#### Ներկայ

| | |
|---|---|
| գործեալ եմ · (1) | գործելոց եմ · |
| գործեալ ես · | գործելոց ես · |
| գործեալ է · | գործելոց է · |
| գործեալ եմք · | գործելոց եմք · |
| գործեալ էք · | գործելոց էք · |
| գործեալ են · | գործելոց են · |

#### Անցեալ անկատար

| | |
|---|---|
| գործեալ էի · (2) | գործելոց էի · |
| գործեալ էիր · | գործելոց էիր · |
| գործեալ էր · | գործելոց էր · |
| գործեալ էաք · | գործելոց էաք · |

(1) Այս սահմանական ներկային յարակատար ալ կըսուի ։

(2) Այս անցեալ անկատարին ալ գերակատար կըսուի ։

| | |
|---|---|
| Գործեալ էիք · | Գործելոց էիք · |
| Գործեալ էին · | Գործելոց էին · |

Անցեալ կատարեալ

| | |
|---|---|
| Գործեալ եղէ · | Ոչ ունի · |
| Գործեալ եղեր · | . . . |
| Գործեալ եղեւ · | . . . |
| Գործեալ եղաք · | . . . |
| Գործեալ եղէք · | . . . |
| Գործեալ եղեն · | . . . |

Ապառնի

| | |
|---|---|
| Գործեալ եղէց · | Ոչ ունի · |
| Գործեալ եղիցիս · | . . . |
| Գործեալ եղիցի · | . . . |
| Գործեալ եղիցուք · | . . . |
| Գործեալ եղիջիք · | . . . |
| Գործեալ եղիցին · | . . . |

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Գործեալ լեր · | Ոչ ունի · |
| Գործեալ լիջիր · | . . . |
| մի Գործեալ լինիր · | . . . |
| Գործեալ լերուք · | . . . |
| Գործեալ լիջիք · | . . . |
| մի Գործեալ լինիք · | . . . |

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

| | |
|---|---|
| Գործեալ իցեմ · | Գործելոց իցեմ · |
| Գործեալ իցես · | Գործելոց իցես · |
| Գործեալ իցէ · | Գործելոց իցէ · |
| Գործեալ իցեմք · | Գործելոց իցեմք · |

| | |
|---|---|
| Գործեալ լիցէք · | Գործելոց լիցէք · |
| Գործեալ լիցեն · | Գործելոց լիցեն · |

227 · Ասոնց վրայ կը խոնարհին ամէն եալ եւ լոց վերջաւորեալ դերբայներ ։

| | |
|---|---|
| Ազատեալ եմ · | Ազատելոց եմ · |
| Բացեալ եմ · | Բանալոց եմ · |
| Գնացեալ եմ · | Գնալոց եմ · եւայլն ։ |

# Մ Ա Ս Ն Ե·

## Գ Լ Ո Ւ Խ Ժ·

### ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

### ԴԱՍ ՁԸ·

228 · Հ · Ի՞նչ է Նախադրութիւնը ·

Պ · Նախադրութիւն կամ Նախդիր կսուի այն, որ կամ հոլով կը շինէ եւ կամ հոլոված բառ մը խնդիր կառնու, իր վերջը չի փոխուիր · այսինքն ոչ կը հոլովի եւ ոչ կը խոնարհի ։

229 · Հ · Քանի՞ տեսակ է Նախադրութիւնը ·

Պ · Երկու տեսակ է, հոլովակերտ եւ հոլովառու ։

230 · Հ · Ո՞րն է հոլովակերտը ·

Պ · Հոլովակերտներ անոնք են, որ հոլով կը շինեն եւ ասոնք են · զ, ի, յ, ց, առ, ընդ · ինչպէս, զմարդ · ի մարդ, ի մարդոյ, յերկիր, ցմարդ, առ մարդ, ընդ մարդ ։

### ԴԱՍ ՁԹ·

231 · Հ · Զ · Նախդիր ի՞նչ հոլով կը շինէ ·

Պ · Հայցական հոլով կը շինէ · ինչպէս, զմարդ, զտուն, զծառ եւ այլն ։

232 · Հ · Ի · Նախդիր ի՞նչ հոլով կը շինէ ·

Պ · Տրական եւ բացառական հոլով կը շինէ · ինչպէս, ի տուն, ի տանէ · ի ծառ, ի ծառոյ · եւ այլն ։ Բայց թէ որ բառի առաջին գիրը ձայնաւոր ըլլայ, յ կը դրուի · (57 ծան՛՛)

233 · Հ · առ, ընդ Նախդիրները ի՞նչ հոլով կը շինեն ·

Պ · Տրական հոլով կը շինեն եւ երբեմն բացառական ·

Ինչպէս, առ մարդ. ընդ մարդ. առ ի մարդկանէ. ընդ աջմէ եւ այլն.

234. Հ. Յ նախդիրը ինչ հոլով կը շինէ.
Պ. Տրական հոլով կը շինէ. ինչպէս, յմարդ։

ԴԱՍ Ղ.

235. Հ. Ո՞րն է հոլովառու նախադրութիւնը.
Պ. Հոլովառուն այն է, որ հոլոված բառը խնդիր կառնու կամ Սեռական կամ Տրական եւ այլն։

236. Հ. Որո՞նք են սեռական հոլով խնդիր առնող նախադրութիւնները.
Պ. Սեռական հոլով խնդիր առնողներ հետեւեալներն են.

| | |
|---|---|
| Վասն մարդոյ. | մարդու համար. |
| Սակս շինութեան. | շինութեան համար. |
| Սակս փրկութեան. | փրկութեան համար. |
| Յաղագս հիւանդաց. | հիւանդներու համար. |
| Առ նախանձու. | նախանձու համար. |
| Օրինակի աղագաւ. | օրինակի համար. |
| Ի վերայ տան. | տան վրայ. |
| Ի ներքոյ տան. | տան տակ. |
| Ի մէջ տան. | տան մէջ. |
| Ի միջոյ տան. | տան մէջէն. |
| Առաջի տան. | տան առջեւ. |
| Յետ կենաց. | կենալէն ետքը, |
| Զհետ նորա. | անոր ետեւէն. |
| Զկնի նորայ. | անոր ետեւէն. |
| Փոխանակ նորա. | անոր փոխարէն. |
| Առանց մահու. | առանց մահու. |
| Հակառակ նորա. | անոր հակառակ. |
| Ընդ նորա եւ այլն. | անոր հետը. |

## ԴԱՍ ՂԴ.

237. Հ. Որո՞նք են վերջաւորով եւ նախդրիւ տրական հոլով խնդիր առնող նախադրութիւնք.

Պ. Այսոնք են.

| | |
|---|---|
| Մերձ ի տան. | տան մօտ. |
| Մօտ ի բլուրն. | Բլուրին մօտ. |
| Հուպ առ նա. | անոր մօտ. |
| Առ ընթեր նմա. | անոր քով. |
| Ընդ աշակերտս. | աշակերտաց հետ. |
| Ընդ նմա. | անոր հետ. |
| Ըստ գործս. | Գործքերին չափ. |
| Ըստ գործոյ. | Գործքերին համեմատ. |
| Մինչ ի տուն. | Ինչուան տուն. |
| Մինչեւ ի տուն. | Ինչուան տուն. |
| Առ մեզ եւ այլն. | Մեր քով. |

238. Հ. Որո՞նք են գործիական հոլով խնդիր առնողները.

Պ. Այսոնք են.

| | |
|---|---|
| Համերձ նովաւ. | անոր հետ մէկ տեղ. |
| Զատ յիսնիւ. | յիսունի չափ. |
| Առ ծովեզերբ. | ծովուն քովեր. |
| Առ Տրդատաւ. | Տրդատայ ատենները. |
| Ընդ իշխանութեամբ. եւ այլն. | Իշխանութեան տակ. |

## ԴԱՍ ՂԵ.

239. Հ. Որո՞նք են բացառական խնդիր առնողները.

Պ. Այսոնք են.

| | |
|---|---|
| Բաց ի մօրէ. | Մօրմէն զատ. |
| Բաց յաստուծոյ. | աստուծմէ զատ. |

| | |
|---|---|
| Մեկուսի ի քաղաքէ. | քաղաքէն հեռու. |
| Հեռի ի նմանէ. | անկէ հեռու. |
| Գաղտ ի մօրէ եւ այլն. | մօրմէն գաղտուկ. |

240. Հ. Որո՞նք են հայցական հոլով խնդիր առնող-ները.

Պ. Ասոնք են.

| | |
|---|---|
| Իբր զնա. | անոր պէս. |
| Իբրեւ զշուն. | շան պէս. |
| Որպէս զտուն. | տան պէս. |
| Քան զշուն եւ այլն. | շունէն աւելի. |

## ԴԱՍ ԻԳ.

241. Հ. Կա՞ն անանկ նախադրութիւններ որ ամէն հոլով խնդիր առնեն.

Պ. Այո, հետեւեալներն են.

Իբրեւ ուր, իբրեւ Երեանց, իբրեւ զնա, իբրեւ որով, իբրեւ յոյժ, որպէս տուն, որպէս տան, որպէս զտուն եւ այլն։

242. Հ. Այլ ինչ դիտելիք կայ նախադրութեան վրայ.

Պ. Այո, ընդ նախադրութիւններ երբեմն հոլովակերտ են եւ երբեմն հոլովառու. հոլովառու եղած ատեններն այլ եւ այլ հոլովներով նշանակութիւններն կը փոխեն. ինչպէս,

| | |
|---|---|
| Առ նախանձու. | նախանձու համար. |
| Առ մեզ. | մեր քով. |
| Առ ծովեզերբ. | ծովուն քովէր. |
| Առ աբիաթարաւ քահանայ- | աբիաթար քահանայապե- |
| Ընդ նորա. (պետիւ. | անոր տեղը. (տին ատեն. |
| Ընդ մեզ. | մեր հետ. |
| Ընդ ինեւ. | իմ տակ. |

# ՄԱՍՆ Զ.

## ԳԼՈՒԽ ԺԱ.

## ՄԱԿԲԱՅԻ ՎՐԱՅ

### ԴԱՍ ԴԳ.

243. Հ. Ի՞նչ է մակբայը.

Պ. Մակբայը բային պարագան կ՚ցուցնէ. այսինքն թէ գործողութիւնը ինչպէս, ուր, երբ եւ այլն. կատարուած է:

244. Հ. Մակբայը քանի՞ կերպ է.

Պ. Թէպէտ շատ տեսակներ ունի մակբայը. բայց գլխաւորները ինն հատ են. որակական, քանակական, ժամանակական, տեղական, թուական, հարցական, ստորական, բացասական եւ ցուցական:

### ԴԱՍ ԴԵ.

245. Հ. Ո՞րն է որակական մակբայը.

Պ. Որականը գործողութեան ինչպէս կատարուիլը կըցուցնէ. ինչպէս, գողունի եառ. բարւոք առնէ. յոյժ աշխատի. ջրէ բաշխէ եւ այլն:

246. Ո՞րն է քանականը.

Պ. Քանականը որչափ ըլլալը կըցուցնէ. ինչպէս, այսչափ փոքր է. այնչափ մեծ է. որչափ բարձր է. առաւել ուտէ. յաճախ երթայ եւ այլն:

247. Հ. Ո՞րն է ժամանականը.

Պ. Ժամանակականը գործողութեան երբ ըլլալը կըցուցնէ. ինչպէս, այժմ եկն. այսօր արար. երէկ չոքաւ. յոր-

ժամ լուսաւ․ յայնժամ բարկացաւ․ վաղվաղակի մեռաւ եւ այլն ։

248․ Հ․ Ո՞րն է տեղականը․

Պ․ Տեղականը գործողութեան ուր ըլլալը կը ցուցնէ․ ինչպէս, աստ է․ անդ է․ ի ներքս է․ ի վեր մատիր եւ այլն ։

249․ Հ․ Ո՞րն է դասականը․

Պ․ Դասականը կարգ կը ցուցնէ․ ինչպէս, նախ արար․ ապա ուսոյց․ կրկին եկաւ․ քարճաւ նորոգաւ․ ի վերջոյ հաւատաց եւ այլն ։

## ԴԱՍ ՂԶ․

250․ Հ․ Ո՞րն է հարցականը․

Պ․ Հարցականը կը հարցանէ․ ինչպէս, ընդէ՞ր հպարտանաս․ չէ՞ կոչես․ ո՞ւր է եւ այլն ։

251․ Հ․ Ո՞րն է ստորասականը․

Պ․ Ստորասականը հաստատութիւն կը ցուցնէ․ հա կըսէ․ ինչպէս, այո մեռաւ․ արդարեւ գնաց․ ստուգիւ եղեւ եւ այլն ։

252․ Հ․ Ո՞րն է բացասականը․

Պ․ Բացասականը չէ կըսէ․ ինչպէս, ոչ արար․ չեւ լեցի․ մի՛ գործեր եւ այլն ։

253․ Հ․ Ո՞րն է ցուցականը․

Պ․ Ցուցականը իբր թէ մատով կը ցուցնէ․ ինչպէս, ահա եկն․ ահաւասիկ գնաց եւ այլն ։

# Մ Ա Ս Ն Է.

## Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ.

## ՇԱՂԿԱՊԻ ՎՐԱՅ

### Դ Ա Ս Ղ Է.

254. Հ. Ի՞նչ է շաղկապը.

Պ. Շաղկապը այն է, որ երկու խօսք կամ երկու բառ իրարու հետ կը կապէ։

255. Հ. Շաղկապ քանի՞ կերպ է.

Պ. Շաղկապը գլխաւորապէս տասն տեսակ է. բաղհիւսական, տրոհական, բացառական, անկատարական, մեկնական, անըզբնաւորական, պատճառական, յարաբերական, համեմատական եւ ըղձական։

### Դ Ա Ս Ղ Ը.

256. Հ. Ասոնք ի՞նչպէս կը գործածուին խօսքին մէջ.

Պ. Ա. Բաղհիւսականը երկու բառ իրարու հետ կը կապէ. ինչպէս, Ես եւ դու։

Քարոզեցէք եւ ասացէք եւ այլն։

Բ. Տրոհականը զատելով կը կապէ. ինչպէս, Ես կամ դու. կամ արա կամ մի՛ աներ եւ այլն։

Գ. Բացառականը երկու հակառակ խօսք իրարու հետ կը կապէ. ինչպէս, Ո՛չ տեսանեմ զԱստուած, այլ հաւատամ։ Աներ բայց ո՛չ աներ եւ այլն։

Դ. Անկատարականը խօսքին միտքը անկատար կը թողու

եւ բացառոցականով կը լրացնէ . ինչպէս, Ընդէ՞ր փոքր է, բայց օգտակար է եւ այլն ։

Ե. Մեկնականը մեկնելով կը կապէ . ինչպէս, Մարդով եղեւ մահ . այսինքն Ադամաւ ։

Զ. Անզգնաւորականը խօսքի սկիզբը կը դրուի . ինչպէս, Արդ աղաչեմ զքեզ ։ Իսկ արդ ո՞վ ես դու եւ այլն ։

Է. Պատճառականը պատճառ ցուցնելով կը կապէ . ինչպէս, Զարթիր ի քնոյ զի առաւօտ է ։ Քանզի բազումք յօժարեցան եւ այլն ։

Ը. Մակաբերականը առաջին խօսքէն ուրիշ խօսք մը յառաջ կը բերէ . ինչպէս, Արդարք ժառանգեն զարքայութիւն, ապա ուրեմն մեղաւորք ոչ ժառանգեն եւ այլն ։

Թ. Համեմատականը՝ համեմատելով կը կապէ . ինչպէս, Լաւ է կոյր աչօք, քան մտօք ։ Մինչեւ անգամ չժամանէին ուտել զհաց ։

Ժ. Թէականը խօսք ուրիշ խօսքէ մը կախում ունենալ կը ցուցնէ . ինչպէս, Եթէ առնես. Եթէ ուտիցես եւ այլն ։

# ՄԱՍՆ Բ.

## ԳԼՈՒԽ ԺԳ.

### ՄԻՋԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

### ԴԱՍ ՂԹ.

**157. Հ. Ի՞նչ է միջարկութիւնը.**

Պ. Միջարկութիւն մարդուս զանազան կիրք կը յայտնէ կամ ուրախութիւն կամ տրտմութիւն կամ զարմացում եւ այլն. ինչպէս,

Ո՜հ, ես մեռայ.

Վա՛հ, որ քակէիր զտաճարն.

Օ՛ն եկայք. օ՛ն արիք.

Բաբէ՛ կուրութեան մտացն.

Եղո՛ւկ մեզ.

Վա՛յ ձեզ.

Ա՜ղէ պատմեա.

Վա՛շ քաջիդ.

Ո՜վ սքանչելեացս. եւ այլն:

ՎԵՐՋ ՈՒԹ ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ

## ԳԼՈՒԽ ԺԴ.

## ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

### ԴԱՍ Ծ.

**158.** Հ. Ի՞նչ է ուղղագրութիւնը.

Պ. Ուղղագրութիւնն է խօսք շիտակ գրել ու կարդալ, այսինքն ամէն բառը՝ իր բուն տառերով գրել եւ արտասանել. ինչպէս, օն՝ ոի տեղ չդնել. էը՝ եի տեղ. ւը՝ վի տեղ. ձը՝ ցի տեղ. ւը՝ ուի եւ յի տեղ. գը՝ կի կամ քի տեղ եւ այլն։

---

## ԳԼՈՒԽ ԺԵ.

## ԱՌՈԳԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

**159.** Հ. Ի՞նչ է առոգանութիւնը.

Պ. Առոգանութիւնն՝ կարդալու ատենը կրից համաձայն բառերու արտասանութիւն այս նշաններով կ՚ըլլայ. շեշտ (′) երկար (˝) պարոյկ կամ ոլորակ (˚)։

### ԴԱՍ ԾԱ.

**160.** Հ. Շեշտն ո՞ւր կը դրուի.

Պ. Շեշտը կը դրուի բայերու հրամայական եղանակներու ստորասակ եւ բացասակ մակբայներու վրայ եւ կանչուած անուններու վրան, որ զարնուելով կարտասանուի. ինչպէս, Լո՛ւր որդեա՛կ խրատու հօր քո, եւ մի՛ մերժեր զօրէնս մօր քո։

**161.** Հ. Երկարն ո՞ւր կը դրուի.

Պ. Երկարը կը դրուի միջարկութեան վրայ, որ երկար ձայնով կարտասանուի, եւ երբեմն ալ շեշտը երկարի տեղ

կը բանի. ինչպէս, բաբէ՜, աւա՜ղ, վա՜յ, ո՜հ, եղո՜ւկ կամ բաբէ՛, աւա՛ղ, վա՛յ եւ այլն։

162. Հ. Պարոյկը կամ ոլորակը ո՞ւր կը դրուի.
Պ. Պարոյկը կամ ոլորակը կը դրուի հարցուած բառերու վրայ. ինչպէս, կերթա՞ս արդեօք. ընդէ՞ր մերժեցեր. ո՞վ ես դու եւ այլն։

## ՏՐՈՀՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԿԵՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.

### ԴԱՍ ԺԲ.

163. Հ. Ի՞նչ է տրոհութիւնը.
Պ. Տրոհութիւն կըսուին բառերն եւ խօսք զատելու նշանները, որ ասոնք են. Ենթամնայ (֊) բութ (՝) ստորակէտ (,) միջակէտ (.) վերջակէտ (։)

164. Հ. Ենթամնան ո՞ւր կը դրուի.
Պ. Ենթամնան կը դրուի տողի վերջի ծայրը, երբոր հարկ ըլլայ բառ մը կիսել, ու կը ցուցնէ, որ բառը կիսատ է. ինչպէս, մար- մին, հո- գի, զօ- րու- թիւն եւ այլն։

### ԴԱՍ ԺԳ.

165. Հ. Ենթամնային վրայ ի՞նչ գիտելիք կայ.
Պ. Ինչպէս ըսինք, ենթամնան բառը կիսելու կը գործածուի. արդ այնպէս պէտք է կիսել, ինչպէս որ կարդացուի բառ մը. ինչպէս, բա-րի, պա-նակ, գի-տու-թիւն. ոչ թէ բար-ի, պան-ակ, գիտ-ու-թիւն եւ այլն։ Բայց պէտք է այս կանոնները միտք պահել։ Ա. Եթէ բաղաձայն գիրը մէկ է, ետքը կը դրուի. ինչպէս, բա-րի. Բ. Եթէ երկու կամ երեք բաղաձայն ըլլայ, միայն մէկը ետքը կը դրուի. ինչպէս, Թարգ-ման, եղ-բայր. Գ. Թէ որ երկու ձայնաւոր գիր մէկ տեղ ըլլան, մէկը առաջ է ու միւս ետք

կը գրուի. ինչպէս, Մա– րի– ամ ։ Դ. Երբոր երկուքէն աւելի է, միայն մէկը ետք կը գրուի. ինչպէս, տա–նո–յն ։ Ե. Բարդած կամ ածանցեալ բառ որ ըլլայ շատ բաղաձայնով սկսած, բոլորն ալ ետքը կը գրուին. ինչպէս, նորա–նշան, ան–բնական, ան–արժան, ան–արգ ։ Զ. Բառերը բաժնած ատեն, ուր որ զօրութեամբ ը կայ, պէտք է ներգործութեամբ դնել. ինչպէս, ըղ–նա, ըն–նել եւ այլն ։

166. Հ. Բութը ո՞ւր կը գրուի.

Պ. Բութը կը գրուի քիչմը կանգ առնելու համար, որ բառ բառի չի խառնուի. եւ կը գործածուի քանի մը կերպով. Նախ՝ երբոր բայի մէջ ուրիշ պարբերութիւն մտնէ. ինչպէս, ամենայնի՝ որոմ խնդրէ ի ջէն, թուր ։ Բ. կը գրուի սկզբնաւորական շաղկապներու վրայ. ինչպէս, արդ՝ եւ արդ՝ իսկ արդ՝ եւ այլն ։

167. Հ. Ստորակէտը ո՞ւր կը գրուի.

Պ. Ստորակէտը կը գրուի, երբոր խօսք անկատար է ու ետեւէն բան մը կուզէ. ուր քիչմ կանգ առնել պէտք է՝ առանց մեծ շունչ առնելու ։

## ԴԱՍ ԾԴ.

168. Հ. Միջակէտը ո՞ւր կը գրուի.

Պ. Միջակէտը կը գրուի՝ երբոր, թէպէտ խօսքին իմաստը ամբողջ չէ, բայց ուրիշ ամբողջ խօսքին մասն է. ուր քիչ մը կանգ եւ շունչ առնելու է ։

169. Հ. Վերջակէտը ո՞ւր կը գրուի.

Պ. Վերջակէտը կը գրուի՝ երբոր խօսքը ամբողջ կը լըմնայ. ուր որ մեծ կանգ ու շունչ առնելու է ։

### Չորսին ալ օրինակ.

Բոլոր մարմնոյս՝ հոգին է կենդանութիւն, իսկ մարմնոյ եւ հոգ–

ոսյ՝ Միթէ էն կատուվար. Եւ որպէս ատ մի մարդ, այսպէս ատ- բոլոր աշխարհս։

## Ա՛նուացած մէկ քանի նշաններու վրայ.

### ԴԱՍ ԾԸ.

170. Հ. Ուրիշ նշաններ ալ կա՞ն ուղիղ կարդալու կամ գրելու համար.

Պ. Այո՛. բաց ի մէկ քանի նշաններէն (որոնք հիմայ չեն գործածուիր) հետեւեալներն միայն կը գործածուին. Տառ- ջակէտ (') Ենթագիծ ( ) Պատիւ (՟) Երկուորեակ կամ զոյգ գիծ (")

171. Հ. Մակակէտ ո՞ւր կը դրուի.

Պ. Մակակէտը կը դրուի ի ին ետեւ, երբոր նախդիր կըլլայ. այսպէս, 'ի տուն, 'ի մարդ։

172. Հ. Փակագիծը ո՞ւր կը դրուի.

Պ. Փակագիծը կը դրուի միջանկեալ բառ մը մէջ առնելու համար. ինչպէս, դատեա՛ զիս (Եթէ ունիս իշխանութիւն) որպէս եւ կամիս։

### ԴԱՍ ԾԹ.

173. Հ. Պատիւն ո՞ւր կը դրուի.

Պ. Պատիւը կը դրուի բառ մը համառօտելու համար. ինչպէս, Երուսղէմ, Այ, Յն, Քն եւ այլն։

174. Հ. Երկուորեակը կամ զոյգ գիծը ո՞ւր կը դրուի.

Պ. Երկուորեակը կամ զոյգ գիծը կը դրուի ծանօթ բառ մը ամբողջ չգրելու համար. ինչպէս, Պետ" Ղուկ" Յովհ". այսինքն Պետրոս. Ղուկաս. Յովհաննէս։

# ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ
## ՄԱՍԱՆՑ ԲԱՆԻ

### ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

### ԴԱՍ Ա.

1. Հ. Ի՞նչ է համաձայնութիւնը.

Պ. Մասանց բանին՝ քովէ քով գալը ու յարմար կերպով կապուիլը կըսուի համաձայնութիւն կամ շարադրութիւն։

2. Հ. Մասունք բանին քանի կերպով իրարու հետ կը կապուին.

Պ. Երկու կերպով, մէկ մը անունը անուան հետ եւ մէկ-մը բայը անուան հետ։

3. Հ. Անունը անուան հետ քանի կերպով կը կապուի.

Պ. Երեք կերպով. Ա. ածականը իր գոյականին հետ. ինչպէս, մեծ ծառ, կարմիր նուռը եւ այլն։

Բ. Սեռական անուն մը ուրիշ անուան մը հետ, երբ յատկացուցիչը իր յատկացեալին հետ. (որ բանի մը որին ըլլալը կը ցուցնէ) ինչպէս, հօրս տուն. վարժապետիս խրատները եւ այլն։

Գ. Երկու նոյն հոլով գոյական անուններ իրարու հետ, երբ բացայայտիչը իր բացայայտեալին հետ. (որ խօսքը կը մեկնէ) ինչպէս, Վան քաղաք, Յորդանան գետ, Տրդատ թագաւոր եւ այլն։

(Ասոնց վրայ յետոյ պիտի խօսինք.)

### ԴԱՍ Բ.

4. Հ. Անունը ինչպէս կը կապուի բային հետ.

Պ. Երկու կերպով. մէկ մը իբրեւ անուն բայի եւ մէկ մը իբրեւ խնդիր կը կապուի։

5. Հ. Ո՞րն է անուն բային.

Պ. Անուն բային այն ուղղական հոլովն է, զոր բային քով դրուած է, եւ կը ցուցնէ թէ նոյն գործողութեան տէրն ինքն է. ամէն բայը կամ ներգործութեամբ եւ կամ զօրութեամբ ունի իր անուն բային. ինչպէս, Ես գործեմ, դու գործես, նա գործէ։ Ահա հոս ներգործութեամբ դրուած է անուն բային։ Երթամ, երթաս, երթայ. ահա հոս զօրութեամբ կիմացուի անուն բային, որ պիտի ըլլայ Ես երթամ, դու երթաս եւ այլն։

6. Հ. Ո՞րն է խնդիր բային.

Պ. Խնդիր կըսուին այն հոլոված բառերը, զոր ամէն բայը իր նշանակութեան համեմատ կուզէ, ահա այս օրինակիս մէջ բոլոր ասածներս յայտնի կերեւան։

Նախաստեղծ մարդն Ադամ ոչ պահեաց զպատուիրանս Աստուծոյ։

Պահեաց ներգործական բայ է. Ադամ անուն բայի է ուղղական հոլով, որ գործողութիւն՝ այսինքն պահողի տէրն է. ու բացայայտիչ է մարդուն. Նախաստեղծ ածական է մարդուն. զպատուիրանս հայցական խնդիրն է պահել ներգործական բային. Աստուծոյ յատկացուցիչ է պատուիրանին։

## ԳԼՈՒԽ Ա.

### ԴԱՍ Գ.

### ԱՆՈՒՆ ԲԱՅԻՆ ԿԱՄ ՈՐԴ Ը ԸՆԿԵՐՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԻՐ ԲԱՅ

7. Հ. Ի՞նչ է անուն բային.

Պ. Ինչպէս ըսինք որ անուն բային՝ բայի տէրն է, որ

ուղղական հոլով կը դրուի, երբոր բայ դիմաւոր է. եւ պէտք է որ թուով ու դէմքով համաձայնի բային հետ. այսինքն թէ որ անուն բային եզակի է, բայն ալ եզակի կը դրուի. թէ որ յոգնակի է, յոգնակի. կամ թէ բայ՝ թէ որ եզակի է, անուն բային ալ եզակի կը դրուի. թէ որ յոգնակի է, յոգնակի. նմանապէս բայն եթէ Ա. դէմ է, անուն բային ալ Ա. դէմ կը դրուի. եթէ Բ. դէմ է, անուն բային ալ Բ. դէմ կը դրուի. եթէ Գ. դէմ է, անուն բային ալ Գ. դէմ կը դրուի. ինչպէս, Չըլլար ես գործեմք, այլ մեք գործեմք. կամ ես գործէ, այլ ես գործեմ կամ նա գործէ։ Գործեմք յոգնակի Ա. դէմ, մեքն ալ յոգնակի Ա. դէմ. ես եզակի Ա. դէմ, գործեմն ալ եզակի Ա. դէմ. նա եզակի Գ. դէմ, գործէն ալ եզակի Գ. դէմ։ Բայց այս ալ գիտնալ պէտք է, որ ես Ա. դէմն է, դու Բ. դէմ, նա Գ. դէմ. նաեւ բոլոր անուններըն Գ. դէմն են։

Օրինակ

Դու լինիր աշակերտ.
Աստուած է արդար.
Նոքա պաշտեն զՏէր.
Թագաւոր արդար կանգնէ զաշխարհ եւ այլն։

ԴԱՍ Դ.

Ց. Հ. Թէ որ անուն բային անեզական ըլլայ, բայն ինչ թուով կը դրուի.

Պ. Երբոր անուն բային անեզական ըլլայ, բայը ազատ է. թէ եզակի թէ յոգնակի կրնայ դրուիլ։

Եզակիէն օրինակ

Մեղք միայն է չար։
Եղիցի կամք քո։ Նովաւ կեանք էր։

### Յոգնակիէն Օրինակ

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ:
Միտք զբանս ծնեն. ձեռք զկերպարանս ծաղկեն:
Աչք նորա ի տնանկս հային:

9. Հ. Թէ որ անուն բային եզակի ըլլայ՝ նշանակութիւն յոգնակի՝ բայն ի՞նչպէս կը դրուի.

Պ. Երբոր անուն բային եզակի՝ նշանակութիւն յոգնակի ըլլայ, այսինքն հաւաքական կամ թուական անուն, այն ատեն բայը ազատ է, թէ եզակի եւ թէ յոգնակի կրնայ դրուիլ:

### Եզակիէն օրինակ

Աղաղակեաց ամենայն ժողովուրդ:
Աշխարհ ամենայն զկնի նորա երթայ:

### Յոգնակիէն օրինակ

Տիրեցին աշխարհիս Հայոց ազգ Սասանայ:
Գունդ բազում եկին յաշխարհն Հայոց:

## Դ Ա Ս Ե.

10. Հ. Թէ որ մի եւ նոյն դէմքով շատ եզակի անունները անուն բայի ըլլան, բայն ի՞նչպէս կը դրուի.

Պ. Բայը եզակի ալ յոգնակի ալ կրնայ դրուիլ:

### Եզակիէն օրինակ

Եմուտ ի տապան Նոյ, Սեմ, Քամ եւ Յաբեթ:
Փայտ, խոտ եւ եղէգն ապականի ի հրոյ:

### Յոգնակիէն օրինակ

Մտին առաջի փարաւոնի Մովսէս եւ Ահարոն:
Պետրոս եւ Յովհաննէս ելանէին ի տաճարն:

11. Հ. Թէ որ անուն բայիներ այլ եւ այլ դէմքով

Ըլլան, բայն ինչ դէմքով կը դրուի.

Պ. Բայն այն դէմքով կը դրուի, որ կարգով նախապատիւ է. Ա. դէմը Բ. դէմէն նախապատիւ. Բ. դէմն ալ Գ. դէմէն:

Օրինակ

Ես եւ դու երթիցուք յԵրուսաղէմ:
Մեղար դու եւ որդի քո:

Դ Ա Ս Զ.

12. Հ. Անուն բային միշտ ուղղական հոլով կը դրուի.

Պ. Դիմաւոր բային անուն բային միշտ ուղղական կը դրուի. բայց անդէմ բային, այսինքն անորոշ եւ անցեալ դերբայի անուն բային, երբեմն սեռական, երբեմն ուղղական եւ երբեմն վերջահոլով տրական կը դրուի:

Սեռականէն օրինակ

Տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա:
Եկեալ հրեշտակաց ի քաղաքն Սոդոմայ:

Ուղղականէն օրինակ

Թողեալ մարդիկ զարարիչն իւրեանց:
Գնալով Յիսուսի ի վերայ ծովուն:

Տրականէն օրինակ

Ինձ պատուել եւ քեզ ոչ լսել:
Ի կալ նմա յաղօթս:

13. Հ. Անորոշ դերբայն ուրիշ ինչ հոլով անուն բայի կրնայ առնուլ:

Պ. Երբոր անորոշ դերբայէն յառաջ ներգործական դիմաւոր բայ մը ըլլայ, այն դիմաւոր բայի հայցական խնդիրը իրեն անուն բայի կըլլայ:

Օրինակ

Կամիմ չէիք լինել իմաստունս · այսինքն զի դուք լինիք ։
Տեսանէք զորէն մարդս եկեալ · այսինքն որդի մարդոյ զի գայ ։

## Դ Ա Ս Ե ·

14 · Հ · Անցեալ դերբայն ալ ինչ կերպ անուն բայի կառնու ․

Պ · Անցեալ դերբայը , էական բայի է , էր , էյէ եզակի Գ · դէմքերու հետ բանելով , սեռական անուն բայի կառնու եւ երեք դէմքի տեղ ալ կը բանի , թէ եզակի թէ յոգնակի ։

Օրինակ

Տեսեալ է իմ · տեսեալ է քո · տեսեալ է նորա ։
Տեսեալ է մեր · տեսեալ է ձեր · տեսեալ է նոցա եւ այլն ։
փոխանակ ասելոյ ես տեսեալ եմ · դու տեսեալ ես · եւ այլն ։
Իմ երդուեալ է յԱստուած · այսինքն ես երդուեալ եմ ։
Չէ՞ք ընթերցեալ ձեր · այսինքն դուք ո՞չ էք ընթերցեալ ։

15 · Հ · Միայն անուն բային զօրութեամբ կրնայ մնալ ·

Պ · Ոչ · երբեմն բայն ալ զօրութեամբ կը դրուի խօսքին մէջ ։

Օրինակ

Ամենայն արարածք վասն մարդոյ եւ մարդն վասն փառաց Աստուծոյ ( Եղիշէ ) ։
Գիրք ծննդեան Յսի Քսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու ( Է ) ։

# ԳԼՈՒԽ Բ.

## ԴԱՍ Ը.

## ՑԱՏԿԱՑՈՒՑՉԻՆ ԿԱՄ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻՆ ՎՐԱՅ

16. Հ. Սեռական հոլովն ի՞նչ կը ցուցնէ.

Պ. Սեռական հոլովը բանի մը որուն ըլլալը կը ցուցնէ եւ յատկացուցիչ կըսուի։

Օրինակ

Անզգամն անգոսնէ զխրատ հօր։
Օրհնութիւն հօր հաստատէ զտուն որդւոյ։

17. Հ. Յատկացուցիչը յատկացեալէն յառա՞ջ կը դրուի թէ ետքը.

Պ. Աշխարհաբառին մէջ յառաջ կը դրուի, բայց գրաբառին մէջ ետքը կը դրուի։

Օրինակ

Գնաց Յիսուս ի տուն Պետրոսի.
Պահեա զպատուիրանս Աստուծոյ.

## ԴԱՍ Թ.

18. Հ. Յատկացուցիչը յատկացեալէն յառաջ ալ կրնա՞յ դրուիլ.

Պ. Այո՛. երբեմն յառաջ կը դրուի. բայց թէ որ յատկացեալը նախդիր ունենայ, նախդիրը յառաջ դրուողին վրայ կը դրուի. եւ երբեմն վայելչութեան համար երկուքին վրայ ալ կը կրկնուի։

Յառաջ դրուողին վրայ

Կործանեաց զնորա տուն. այսինքն զտուն նորա։
Եհատ զՅովհաննու գլուխ. այսինքն զգլուխ Յովհաննու։

Երկուքին վրայ

Ցովսէփ մեկնեաց զՓարաւոնի զերազն. այսինքն զերազն Փարաւոնի։

Սիրեցին զմարդկան զխօսս. այսինքն զխօսս մարդկան։

19. Հ. Թէ որ յատկացուցչին ու յատկացեալին մէջ ուրիշ մասունք բանի մտնին, նախդիրը որո՞ւ վրայ կը դրուի.

Պ. Երբոր մէջ ուրիշ բառ մտնէ, այն ատեն նախդիրը երբեմն միայն նախընթացին, այսինքն յառաջ դրուողին վրայ կը դրուի եւ երբեմն երկուքին վրայ ալ։

Նախընթացին վրայ

Չէ պարտ թողուլ զիրաւունս Աստուծոյ ի հրամանս դառնալ Թագաւորի. այսինքն դառնալ ի հրամանս Թագաւորի։

Երկուքին վրայ

Հովանի առաքելոց զոտս բժշկէր զհիւանդաց. այսինքն զոտս հիւանդաց։

Ոտս լուանայր զաշակերտաց. այսինքն զոտս աշակերտաց։

ԴԱՍ Ժ.

20. Հ. Թէ որ յատկացեալը զօրութեամբ դրուի, անոր նախդիրն ո՞վ կառնու.

Պ. Երբոր յատկացեալը զօրութեամբ դրուի, անոր նախդիրը յատկացուցիչը կառնու։

Օրինակ

Եթէ զպատուիրանն իմ պահեսցեն, ապա եւ ձերն պահեսցեն. այսինքն զպատուիրանն ձեր։ Եհաս յաշխարհ Հայոց եւ ի Վրաց. այսինքն յաշխարհ Վրաց։

21. Հ. Յատկացուցիչը միայն սեռական հոլո՞վ կըլլայ.

Պ․ Ո՛չ․ երբեմն յատկացուցիչը իր յատկացեալին հետ հոլովով կը համաձայնի․ մանաւանդ երբոր յատկացեալը չափ վերաբերեալ անուն մը ըլլայ՝ Թուական ածականով մը։

Օրինակ

Ամրացո ընդ հովանեաւ աջովն քով․ այսինքն աջոյ քո։
Բանիւ բերանով պատմել․ այսինքն բերանոյ։
Պատուով մերով հարբ հաստատեա զսիրտ քո․ այսինքն հաւր։
Բաժակաւ միով ջրով արար բարեգործութիւն․ այսինքն ջրոյ։

---

ԳԼՈՒԽ Գ․

ԴԱՍ ԺԱ․

## ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎԻՆ ՎՐԱՅ

22․ Հ․ Տրական հոլով քանի՞ կերպ է․
Պ․ Երկու․ վերջահոլով եւ նախդրիւ։
23․ Հ․ Ո՞րն է վերջահոլով տրականը․
Պ․ Վերջահոլով կը ցուցնէ որո՞ւն (քիմէ)։

Օրինակ

Փոխ տայ Աստուծոյ, որ ողորմի տնանկին։
Շրթանց քոց զգոյշ լեր։
Ասեմ ձեզ եւ դուք պատմեցէք նմա։

24․ Հ․ Ո՞րն է նախդրիւ տրականը․
Պ․ Նախդրիւ տրականը կը ցուցնէ՝ ո՞ւր (ներէյէ) ու դէպ ի տեղ մը շարժում կը նշանակէ․ բայց երբ դէպ 'ի մարդ նշանակէ, կը ցուցնէ քիմէ եւ առ նախդիրով կը դրուի։

Օրինակ ի նախդրով

Չոքան ի քաղաքն։ Ամենայն գետք ի ծով գնան։

Երթ ի տուն քո։

Օրինակ առ նախդրով

Չոքաւ Յուդայ առ քահանայապետս։

Առաքեաց զնա առ Հերովդէս։

25. Հ. Այլ ինչ գիտելիք կա՞յ տրականին վրայ.

Պ. Տրական հոլովը երբեմն գործիական հոլովի տեղ կգանի.

Ի քրտան երեսաց ուտեմք զհաց. այսինքն քրտամբ։

Մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այսինքն անուամբ։

---

## ԳԼՈՒԽ Դ.

## ԴԱՍ ԺԲ.

## ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎԻՆ ՎՐԱՅ

26. Հ. Ո՞րն է գործիականը.

Պ. Գործիական՝ ինչ բանով ըլլալը կըցուցնէ։

Օրինակ

Աչօք տեսին. ականջօք լուան. արտասուօք պատմեցին։

Եկին անդ ջահիւք եւ լապտերօք։

---

## ԳԼՈՒԽ Ե.

## ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎԻՆ ՎՐԱՅ

27. Հ. Ո՞ր է բացառականը.

Պ. Բացառականը կըցուցնէ ուսկից. ինչ բանէն։

Օրինակ

Յիսուս ծնաւ ի Մարիամայ։ Եղեւ ձայն յերկնից։

## ԳԼՈՒԽ Զ.

## ԴԱՍ ԺԳ.

### ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎԻՆ ՎՐԱՅ

28. Հ. Ո՞րն է հայցականը.

Պ. Հայցական կը ցուցնէ զո՛վ կամ զի՛նչ բանը. եւ կըսուի սեռի խնդիր ներգործական բայից. եւ ամէն ներգործական բայը կամ ներգործութեամբ եւ կամ գործութեամբ հայցական սեռի խնդիր կը պահանջէ։

Օրինակ.

Օձն խածեաց զձիոյ։

Երկիր ինքնին բերէ զպտուղ։

29. Հ. Ո՞րն է անորոշ հայցական.

Պ. Երբոր հայցականի վրայ զ նախդիր չդրուի, կըսուի անորոշ հայցական։

Մեղու մեղր գործէ. այսինքն զմեղր։

Կամիմ ուսանել նշան ինչ. այսինքն զնշան։

## ԴԱՍ ԺԴ.

30. Հ. Ամէն անուն ալ անորոշ հայցական կրնա՞յ ըլլալ.

Պ. Ո՛չ. յատուկ անուններ, դերանուններ, մասնական անուններ անորոշ հայցական չեն ըլլար։

Տեսի Պետրոս. սպանի նա. կալայ ոմն չըլլար. այլ տեսի զՊետրոս. սպանի զնա. կալայ զոմն։

31. Հ. Ուղղական անուն բային եւ անորոշ հայցական իրարմէ ինչպէս որոշելու է.

Պ. Անուն բային գործողութեան տէրն է. իսկ անորոշ հայցականը գործողութեան առարկայն է. ինչպէս,

Մեղու գործէ մեղր. գործողութեան տէրը մեղուն է, որ

անուն բայի կամ տէր բայի կըսուի . գործողութեան առարկայն , այսինքն գործածուած բանը մէջընէ , որ կսուի անորոշ հայցական ։

---

## ԳԼՈՒԽ Ե.

### ԴԱՍ ԺԵ.

## ՀԱՄԱՌՕՏ ԳԻՏԵԼԻՔ ՎԻՑ ՀՈԼՈՎՆԵՐՈՒ ՎՐԱՅ (1)

32 . Հ . Ո՞վ , հարցման պատասխանը ինչ հոլով է .
Պ . Ով , հարցման պատասխանը ուղղական է , որ անուն բայի կամ տէր բայի կըսուի . ինչպէս , հայր գնաց ։

33 . Հ . Որո՞ւն , հարցման պատասխանը ինչ հոլով է .
Պ . Որուն , հարցման պատասխանը սեռական է , որ յատկացուցիչ կըսուի . ինչպէս , հայր իմ գնաց ։

34 . Հ . Ո՞ւր , հարցման պատասխանը ինչ հոլով կառնէ .
Պ . Ո՞ւր , հարցման պատասխանը նախդրիւ տրական է որ խնդիր բնութեան կըսուի . ինչպէս , հայր իմ գնաց ի շուկայն ։

### ԴԱՍ ԺԶ.

35 . Հ . Որո՞ւ , (ո՞ւմ) հարցման պատասխանը ինչ հոլով է .
Պ . Որո՞ւ , (ո՞ւմ) հարցման պատասխանը վերջահոլով տր-

---

(1) Աշակերտը մինչեւ այս տեղ հասնելէն յետոյ , պէտք է համաձայնութեան վրայ լաւ ճանչցած ընէ , եւ այս համառօտ հարցմունքը մէկ պահէ , որպէս զի կարող ըլլայ պարզ նախորդներ լուծել եւ բաղդատել , բայց ոչ թէ այս գրուած կարգին պէս , այլ նախ գտնելու է բայը , ապա անուն բային , ապա սեռի խնդիր , յետոյ յատկացուցիչը եւ յետոյ բնութեան խնդիրները , զորն որ բային մերձաւոր է նէ ։

րական է, որ խնդիր բնութեան կըսուի. ինչպէս, Հայր իմ գնաց ի շուկայն էառ ինչ ։

36. Հ. Ի՞նչ բանով, հարցման պատասխանը ինչ հոլով է.

Պ. Ինչ բանով, հարցման պատասխանը գործիական է, որուն խնդիր բնութեան կըսուի. ինչպէս, Հայր իմ գնաց ի շուկայն էառ ինձ դրամով ։

37. Հ. Ուստի՞, հարցման պատասխանը ինչ հոլով է.

Պ. Ուստի, ինչ բանէն, հարցման պատասխանը բացառական է, որուն խնդիր բնութեան կըսուի. ինչպէս, Հայր իմ գնաց ի շուկայն էառ ինձ դրամով ի Գրաւաճառէն ։

38. Հ. Զո՞վ կամ զի՞նչ բանը, հարցման պատասխանը ինչ հոլով է.

Պ. Զովկամ զինչ բանը հարցման պատասխանը հայցական է, որուն խնդիր սեռի կըսուի. ինչպէս, Հայր իմ գնաց ի շուկայն՝ էառ ինձ ի գրաւաճառէն այս Գիրքս ։

## ԴԱՍ ԺԷ.

### Օրինակ հարցման եւ լուծման

Հայր իմ գնաց ի շուկայն՝ էառ ինձ դրամով ի Գրաւաճառէն այս Գիրքս ։

39. Հ. Ո՞վ գնաց.

Պ. Հայր, ուղղական է, տէր բայի գնաց բային ։

40. Հ. Որո՞ւ հայր.

Պ. Իմ, սեռական է, յատկացուցիչ հօր ։

41. Հ. Ո՞ւր գնաց.

Պ. Ի շուկայն, նախդրիւ տրական է, խնդիր բնութեան գնաց բային ։

42. Հ. Ո՞վ էառ.

Պ. Հայր, զօրութեամբ անուն բայի էառ բային ։

43 . Հ . Զի՞նչ եառ .

Պ . Զայս գիրս , հայցական է , սեռի խնդիր եառ բային ։

44 . Հ . Ուստի՞ եառ .

Պ . Ի գրավաճառէն . բացառական է , խնդիր բնութեան եառ բային ։

45 . Հ . Ի՞նչ բանով եառ .

Պ . Դրամով , գործիական է , խնդիր բնութեան եառ բային ։

46 . Հ . Ո՞ւմ եառ .

Պ . Ինձ , մերձաւորով տրական է , խնդիր բնութեան եառ բային ։

---

## ԳԼՈՒԽ Ը.

### ԴԱՍ ԺԸ.

### ԲԱՑԱՅԱՅՏԶԻՆ ՈՒ ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼԻՆ ՎՐԱՅ

47 . Հ . Ի՞նչ է բացայայտիչը .

Պ . Բացայայտիչ կըսուի այն գոյական անունը , որ մութ բառ մը կամ խօսք մը կը մեկնէ , թէ ինչ կամ որն է . եւ այս բացայայտող բառը՝ պէտք է որ հոլովով համաձայնի իր բացայայտեալին հետ , որոց մէջ միշտ այս մեկնական շաղկապներէն մէկը ( այսինքն , այս է , որ է կամ իմա , ասել եւ այլն ) կը դրուի կամ ներգործութեամբ եւ կամ զօրութեամբ ։

Օրինակ

Առնէր դուստր Պետափրեայ քրմի էր կին Յովսեփայ ։

Մարդով եղեւ մահ . այսինքն , Ադամաւ ։

Մ'ի սիրեր զծուլութիւն եւ զքուն . (այսինքն) , զմայրն ամենայն թշուառութեանց ։

Տրդատ արքայն Հայոց չոգաւ ի քաղաքն Հռովմ ։

48 · Հ · Միայն գոյական անո՞ւնը բացայայտիչ կըլլայ ·
Պ · Ոչ, երբեմն ամբողջ խօսքմը ամբողջ խօսքիմը, երբեմն ամբողջ խօսքմը՝ մէկ բառիմը եւ երբեմն բառը բառի բացայայտիչ կըլլայ ·

Օրինակ

Զվճիռ մահու ի վերայ եդեալ · (այսինքն) հող էիր եւ ի հող դարձցիս :
Այս են յաւիտենական կեանք · (այսինքն) զի ճանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած :
Ի սրտէ ելանեն խորհուրդք չարք · (այսինքն) սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք եւ այլն :
Յիշեա զպատուիրանս · (այսինքն) զմի շնար, մի սուտ վկայեր եւ մի գողանար :
Զրաւեցաւ ի կենաց · (այսինքն Յիսուս :

ԴԱՍ ԺԹ ·

49 · Հ · Բացայայտիչն ու բացայայտեալը միշտ կը համաձայնի՞ն ·
Պ · Հասարակ անունները կը համաձայնին, իսկ տեղի մը յատուկ անունները եթէ յառաջ դրուին ածականի պէս, երբեմն նախդրիւ եւ երբեմն մէկ տեղ կը հոլովին · իսկ եթէ ետքը դրուին, կը համաձայնին · Նմանապէս մարդու անունները թէ յառաջ եւ թէ ետքը դրուին, կը համաձայնին · քիչ տեղ կը խոտորին :

Օրինակ

Բնակեցաւ ի սահմանս Յորդանան գետոյ :
Էր Փիլիպպոս ի Բեթսայիդայ ի քաղաքէ Անդրեայ եւ Պետրոսի :

Կործանեաց զքաղաքն Երուսաղէմ ։
Ի ժամանակս Տրդատայ արքայի եղեւ խաղաղութիւն ։
Եւ հրաման ի Տրդատ արքայէ ։

50 . Հ . Թէ որ բացայայտեալը նախդիր ունենայ, նախդիրը որո՞ւ վրայ կը դրուի .

Պ . Նախդիրը յառաջ դրուողին վրայ կը դրուի . եւ եթէ մէջ ուրիշ մասն բանի մտնէ, երկուքին վրայ ալ կը կրկնուի . եւ երբեմն միայն վերջ դրուողին վրայ կը դրուի ։

Օրինակ

Գնաց Պետրոս ի Հռովմ քաղաք ։
Զմիջնորդն ամենայն աշխարհի . (այսինքն) զՍրբուհի կոյս Մարիամ բարեխօս ունիմք առ Աստուած ։
Երկին թեւս պարտ է ստանալ քրիստոնէի . (այսինքն) ըղ-հաւատ եւ զսրբութիւն վարուց ։

---

## ԳԼՈՒԽ Թ.

## ԴԱՍ Ի.

## ԱԾԱԿԱՆԻ ԵՒ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

51 . Հ . Ածականը գոյականէն յառա՞ջ կը դրուի թէ ետքը .

Պ . Յառաջ ալ կը դրուի, ետք ալ . թէ պէտ յառաջ դրըուի, նախդրիւ կը հոլովի . (տես 79) բայց շատ անգամ կը համաձայնի . մանաւանդ միավանկ կամ երկավանկ եղած ատեն . ետք դրուած ատեն թէ պէտ մէկ տեղ կըհոլովի . (տես 80 .) բայց երբեմն չի համաձայներ ։

Օրինակ

Նախանձ կալցուք բարեաց գործոց ։
Խոստովան լիցուք ծածկագիտին Աստուծոյ ։

Թաղմամբ երեքօրեայ զբնութիւն մահու եղեւ․ (այսինքն) երեքօրեայ թաղմամբ։

Պսակաւ փշեայ տանջէին զնա․ (այսինքն) փշեայ պսակաւ։

52․ Հ․ Թէ որ ածականին եւ գոյականին մէջ տեղ ուրիշ մասն բանի մտնէ, նախդիր որու վրայ կը դրուի․

Պ․ Երբեմն երկուքին վրայ ալ կը դրուի եւ կը համաձայնին, եւ երբեմն միայն յառաջ դրուողին վրայ կը դրուի ու չեն համաձայնիր։

Օրինակ

Աբէլ ի հարուածէն իւրմէ սպանանի յեղբօրէ։

Այսօր գործով զծայրագոյն եցոյց յինքեան զխոնարհութիւն․

Ի քերովբէական հանգուցեալ ես յաթոռ։

Որ զնշխարեալն ունի տէր․ այսինքն, զտէր։

ԴԱՍ ԻԱ․

53․ Հ․ Թէ որ ածականները շատ ըլլան, նախդիրը որու վրայ կը դրուի․

Պ․ Երբեմն ամենուն վրայ ալ կը դրուի եւ երբեմն միայն մէկուն վրայ։

Օրինակ

Ես զմարմին իւր զերկնաւոր զնուաստածին անարժանաւոր զանապական եւ զհոգեւոր։

Ի յիմար եւ յանխրատ խնդրոյ ծնանին կռիւք։

Երկնչիմ ի սպասոյ անպէտ եւ չարաբոյն բանիցդ։

54․ Հ․ Ածականը կրնա՞յ գոյականի տեղ գործածուիլ․

Պ․ Այո․ երբեմն ածականը գոյականի տեղ կը բանի եւ ածական ալ կրնայ առնուլ իբրեւ գոյական։

Օրինակ

Զչարագործն պատժի․ այսինքն, այր չարագործ։

Մի երկնչիք ի վատաց · այսինքն, ի վատ արանց ։
Կամաւոր աղքատն Յովհաննէս՝ ոչ ինչ համարէր զփառս ։

55 · Հ · Կրնա՞յ ըլլալ որ գոյականը ածականի տեղ գործածուի ։

Պ · Այո · երբեմն գոյականը ածականի տեղ կը բանի, բայց աւելի ութիւն վերջաւորած բառին սեռականը ։

Օրինակ

Սուրբն Մեսրովպ Թարգմանեաց զԱստուածաշունչ գիրս ի Յոյն լեզուէ ի Հայ բարբառ ։
Խօսէր բանս դառնութեան · այսինքն, դառն բան ։
Չէ պարտ գործել զգործ անիրաւութեան · այսինքն անիրաւ ։

---

## ԳԼՈՒԽ Ժ ·

## ԴԱՍ ԻԲ ·

## ԴՐԱԿԱՆ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ

56 · Հ · Դրական եւ բաղդատական ածականներու վրայ ինչ գիտելիք կայ ·

Պ · Բաղդատական ածականը քան նախադրութեամբ հայցական հոլով խնդիր կառնու · եւ դրականն ալ առնելով, բաղդատականի ոյժ կունենայ ։

Օրինակ

Իմաստութիւն պատուականագոյն է քան զականս պատուականս ։
Լռել լաւագոյն է քան զխօսել ։
Աչք նրբաւոր է քան զամենայն անդամս · այսինքն, նրբաւորագոյն ։

Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. այսինքն, լաւագոյն։

57. Հ. Բաղդատականները ալ ինչ խնդիր կառնեն.

Պ. Երբեմն ալ յոգնակի սեռական խնդիր կառնեն փոխանակ «ան» նախադրութեամբ հայցական հոլով խնդիր առնելու. եւ երբեմն ալ նախդրիւ տրական։

Օրինակ.

Վեհագոյն բնութեանց էից. այսինքն, քան զբնութիւնս։
Վեհագոյն սերովբէից. այսինքն, քան զսերովբէս։
Մեծագոյն ի մարգարէս։
Իմաստնագոյն ի կենդանիս։

## ԴԱՍ ԻԳ.

58. Հ. Գերադրականի վրայ ինչ գիտելիք կայ։

Պ. Թէպէտ ըսինք, տրականի վրայ «ամեն» մասնիկը դնելով գերադրական կըլլայ, բայց շատ անգամ առաւելական մակբայ մը դրուելով կը շինուի։

Օրինակ.

Կարի դժուարին. այսինքն, ամենադժուարին.
Սաստիկ հզօր. այսինքն, ամենահզօր։
Յոյժ չար է նախանձն. այսինքն, ամենաչար։

59. Հ. Ալ ուրիշ ինչ կերպով կըլլայ.

Պ. Երբեմն ալ մի եւ նոյն բառը կրկնելով գերադրական կըլլայ։

Օրինակ.

Ունայնութիւն ունայնութեանց է աշխարհ. այսինքն, ամենաունայն։
Սուր սուր է բանդ. այսինքն, ամենասուր։

## ԳԼՈՒԽ ԺԱ.

## ԴԱՍ ԽԴ.

## ՄԱՍՆԱԿԱՆ ԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

60. Հ. Մասնական անունները ի՞նչ խնդիր կառնեն.

Պ. Բացառական եւ յոգնակի սեռական խնդիր կառնեն ։

Օրինակ՝

Ոմանք ի մարդկանց աւելի ցնա ։

Ոմն ի ծովեզերէոց եկն առ նա ։

Ոմն քաղաքացւոց եկն առ նա. այսինքն, ի քաղաքացւոց ։

61. Հ. Ալ ինչ գիտելիք կայ մասնական անուան վրայ.

Պ. Իմն, ինչ մասնական անունները յոգնակիին մէջ անփոփոխ կը մնան եւ երբեմն զարդի տեղ կը դրուին. նաեւ իւրաքանչիւր բառն ալ սեռականի կամ վերջահոլովի տեղ՝ ուղղական կը դրուի ։

Օրինակ՝

Յետ ամաց ինչ եղեւ այն ։

Մի թէ դու մեծ ինչ ո՞ք իցես քան զհայր մեր Աբրահամ. այսինքն, մեծ ոք իցես ։

Բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի . այսինքն, իւրաքանչիւրոյ ։

62. Հ. Միայն մասնական անունները՞ բացառական խնդիր կառնեն.

Պ. Թուական անուններն եւ համարակ ածականներն ալ մասնականի ոյժ ունենալով, կրնան թէ բացառական եւ թէ սեռական խնդիր առնուլ ։

Օրինակ՝

Մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր ։

Հինգն ի նոցանէ յիմարք էին։
Զերկուս ի նոցանէ առաքեաց։
Վաթ արանց։
Մեծը տիեզերաց։
Ի միում աւուրց եւ այլն։

---

## ԳԼՈՒԽ ԺԲ.

### ԴԱՍ ԻԵ.

### ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

63. Հ. Յարաբերական դերանունը իւր յարաբերեալին հետ ինչպէս կը համաձայնի.

Պ. Թուով կը համաձայնի եւ երբեմն ալ հոլովով։

Օրինակ

Մարդ՝ որ գործէ զառաքինութիւն, որդի Աստուծոյ կոչի։
Իբրեւ լուան զօրքն՝ որ (1) անդ էին, յոյժ գրգռեցան։
Պատմեցին զամենայն, զոր ինչ եղեւ. այսինքն, որ ինչ եղեւ։
Ամենեցուն՝ որոց ի Հռովմէն՝ ողջոյն. այսինքն, որք են։

64. Հ. Յարաբերականը իր յարաբերեալէն յառաջ կը դրուի թէ ետքը.

Պ. Թէպէտ սովորաբար յառաջ կը դրուի, բայց երբեմն ընտիր գրուածոց մէջ, ետքը կը դրուի։

Օրինակ

Ո՞ւր է՝ որ ծնաւ արքայն Հրէից. այսինքն, արքայն որ ծնաւ։

Իբրեւ լուան՝ որ յԵրուսաղէմէ դպիրք եկեալ էին. այսինքն, դպիրք որ յԵրուսաղէմէ եկեալ էին։

### ԴԱՍ ԻԶ.

65. Հ. Թէ որ յարաբերեալ զօրութեամբ դրուի, ա-

---

(1) Երբեմն յարաբերականին եզակին՝ յոգնակիի տեղ կը գործածուի։

նոր հոլովն ով կառնու .

Պ . Յարաբերականը կառնու ։

Օրինակ

Որում՝ խնդրէ ի քէն, տուր . այսինքն, տուր այնմ, որ խնդրէ ։

Դուք ոչ մտանէք, եւ որոց մտանեն, չտայք թոյլ . այսինքն, այնոցիկ որք մտանեն ։

66 . Հ . Յարաբերականին վրայ ալ ինչ գիտելիք կայ .

Պ . Յարաբերականը՝ երբեմն էական բայի հետ բանալով, մասնականի ույժ կունենայ . եւ երբեմն իր բային հետ զօրութեամբ կը դրուի ։

Օրինակ

Էր՝ որ բանիւ, եւ էր՝ որ տանջանօք քակէր ի սուրբ ուխտէն . այսինքն, զոմն բանիւ եւ զոմն տանջանօք ։

Եւ պտուղ . էր՝ որ երեսնաւոր, էր՝ որ վաթսունաւոր եւ էր՝ որ հարիւրաւոր . այսինքն, ոմն երեսնաւոր . ոմն վաթսունաւոր եւ այլն ։

Ետես Յս այր մի՝ Մատթէոս անուն . այսինքն, որոյ անուն էր Մատթէոս ։

---

## ԳԼՈՒԽ ԺԴ .

## ԴԱՍ ԻԵ .

## ԴԻՄՈՐՈՇ ՅՕԴԵՐՈՒ ՎՐԱՅ

67 . Հ . Դիմորոշ յօդերը ինչ զօրութիւն ունին .

Պ . Դիմորոշ յօդերը դերանուանց արմատն են, որ դէմք կը ցուցնեն . եւ հինգ կերպով կը բանին . Ա . Էական դերանուան տեղ . Բ . Ցուցականի . Գ . Ստացականի . Դ . անուան եւ Ե . բայի տեղ ։

Օրինակ

Ղուկանի տեղ

Զարթուցեալք՚ ի հանգստենէ քնոյ · այսինքն, մեք զարթուցեալք ։

Հասեալք՚ ի ժամ երեկոյիս · այսինքն մեք հասեալք ։

Ցուցականի տեղ

Սիրելով զմիմեանս կատարի խաղաղութիւն աշխարհիս՚ · այսինքն, այսր աշխարհի ։

Մի՛ գործեր զգործ՚, որ ատելի է Աստուծոյ · այսինքն, զայդ գործ ։

Ստացականի տեղ

Հոգիս՚ յօժարէ, բայց մարմինս՚ տկար · այսինքն, հոգի իմ · մարմին իմ եւ այլն ։

Անուան տեղ

Բարեաց գործողքն պսակին, չարեացն ի հուր անշէջ մատնին · այսինքն, չարեաց գործողք ։

Բայի տեղ

Պաշարեցից զքեզ որպէս եւ Դաւիթն · այսինքն, որպէս եւ Դաւիթ պաշարեաց ։

## ԴԱՍ ԻԲ.

68 · Հ · Ցօղերը՝ ալ ուրիշ ո՞ր բառի վրայ կը դրուին ·
Պ · Մասնաւոր կամ յիշեալ, մանաւանդ յարաբերական բառէ մը ետքը դրուած, որ եւ լցէ բառերու վրայ կը դրուին ։

Օրինակ

Յիշեալ բառի վրայ

Արկէք զիս ի ծով, զի դադարեսցի ծովդ ։

Մասնաւոր բառի վրայ

Որդին Աստուծոյ եկն յաշխարհ ։

Յարաբերականէն ետք դրուած բառին վրայ

Որ մեծն էր ի նոսա ։
Զոր դուն սիրէիր ։
Զոր առեմ ։
Որ ոչն տեսանենն, տեսցեն ։

---

## ԳԼՈՒԽ ԺԴ.

### ԴԱՍ ԻԹ.

### ՆԱԽԴԻՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ

69. Հ. Թէ որ նոյն բառը կրկնուի, նախդիրը որո՞ւ վրայ կը դրուի.

Պ. Առաջինին վրայ կը դրուի. բայց թէ որ հոլովնին տարբեր ըլլայ, վերջինին վրայ կը դրուի ։

Օրինակ

Առաջինին վրայ

Զընտիր ընտիր սպառազէնս դիւթեալ կործանեցին ։
Ի կողմանց կողմանց ժողովեցան անդր ։

Վերջինին վրայ

Եւ շրջէր տանէ ի տուն, քաղաքէ ի քաղաք ։

70. Հ. Ընդ նախդիրը ի՞նչ նշանակութիւն ունի.

Պ. Շատ կերպ նշանակութիւն ունի. երբոր խօսքը տարածում ցուցնէ ընդ նախդիրը տրական խնդիր կառնէ ։

Օրինակ

Եղեւ սով ընդ ամենայն երկիր ։
Անուն քո փառաւորեսցի ընդ ամենայն երկիր ։

### ԴԱՍ Լ.

71. Հ. Ալ ի՞նչ նշանակութիւն ունի.

Պ. Երբեմն բացառականի եւ երբեմն ի կամ յ նախդիրներու տեղ կը բանի ։

Օրինակ՝

Մտէք ընդ նեղ դուռն. այսինքն, ի նեղ դրանէ ։

Անցին ընդ ծով կարմիր. այսինքն, ի կարմիր ծովէ ։

Հայեաց ընդ երկինս. այսինքն, յերկինս ։

Յովհաննէս ունէր գօտի մաշկեղէն ընդ մէջս իւր. այսինքն, ի մէջս ։

72. Հ. Ո՞ր բայեր ընդ նախդրով դրական խնդիր կառնեն.

Պ. Խնդալ, ուրախ լինել, փրփրել, ցանկալ, զարմանալ եւ այլ բայեր, ընդ նախդրով տրական խնդիր կառնեն ։

Օրինակ՝

Ծնօղք ուրախ լինին ընդ յառաջադիմութիւն որդւոց ։

Վնասասէրն խնդայ ընդ չարիս ։

Մի ցանկայք ընդ ունայն աշխարհիս ։

Զարմանային ընդ վարդապետութիւն նորա ։

73. Հ. Ըստ նախդրին վրայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Ըստ նախդիրը երբեմն տեղէ մը անդին անցնել կը նշանակէ ։

Օրինակ՝

Ըստ երկիր անդր ոչ ինչ է ։

Արարածք ոչ անցանեն ըստ եդեալ սահմանս իւրեանց ։

---

## ԳԼՈՒԽ ԺԵ.

### ԴԱՍ ԼԱ.

### ԲԱՅԵՐՈՒ ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՎՐԱՅ

74. Հ. Լական բայերը ի՞նչ հոլով խնդիր կառնեն.

Պ. Լական բայերը կամ զօրութեամբ եւ կամ ներգործու-

ժեամբ ուղղական խնդիր մը կառնեն . եւ երբեմն ուղղականի տեղ նախդրիւ տրական ։

Օրինակ.

Աստուած է արդար ։ Ես եմ դէր ։ Անկարօտական է Ած ։
Եղիցուք մեք ձեզ ի ծառայս . այսինքն ծառայք ։

75 . Հ . Ուրիշ ինչ հոլով խնդիր կառնեն .
Պ . Ամէն հոլով խնդիր կրնան առնուլ ։

Օրինակ.

Իմ (1) է ամենայն երկիր ։ Նորա են ամենայն ինչք ։
Առն միոյ էին երկու որդիք ։
Աչաց է տեսանել ։ Ականջաց է լսել ։
Արմաւենի բարձր է հասակաւ եւ քաղցր պտղով ։
Գոյ մեզ օգնութիւն յերկնից ։
Եղեւ անձրեւ քառասուն տիւ (2) եւ քառասուն գիշեր ։

## ԴԱՍ ԼԲ.

76 . Հ . Կրաւորական բայերը ինչ հոլով խնդիր կառնեն .
Պ . Բացառական հոլով սեռի խնդիր կառնեն . եւ այս կրաւորականը երբոր ներգործականի դարձուի, իր բացառական սեռի խնդիրը, ներգործականին անուն բայի կըլլայ . եւ անուն բային ալ, հայցական սեռի խնդիր կըլլայ ներգործականին ։

Օրինակ.

Յն խաչեցաւ ի Հրէից ։ Հրէայք խաչեցին զՅն ։
Յովհաննէս մկրտեաց զՅիսուս ։
Յիսուս մկրտեցաւ ի Յովհաննէ ։

---

(1) Էական բայը սեռական խնդիր առած ատեն, ունիմ բայի տեղ կը բանի . եւ երբեմն գործ, պաշտօն կը ցուցնէ ։

(2) Էական բայը հայցական խնդիր կառնէ, երբոր ժամանակ ցուցնէ ։

77. Հ. Ներգործական բայը կրնա՞յ հայցականի տեղը ուրիշ խնդիր առնուլ.

Պ. Ցուցնել, պաշտպանել, չուել եւ այլն բայերը վերջաւոլով տրական խնդիր կառնեն հայցականի տեղ։

Օրինակ

Փորձեալ ի սատանայէ եւ յաղթեալ նմա. այսինքն, զնա։

Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում. այսինքն, զԻսրայէլ ծառայ իւր։

Տէր լուր աղօթից իմոց. այսինքն, զաղօթս իմ։

ԴԱՍ ԼԳ.

78. Հ. Ուրիշ ի՞նչ գիտելիք կայ ներգործական բայի վրայ.

Պ. Երբեմն ներգործականը երկու հայցական խնդիր կառնէ. մէկը իր սեռի խնդիրը եւ միւսն ուղղականի կամ տրականի տեղ։

Օրինակ

Թագաւոր ըրին սեէն զՅն. այսինք, ոմն։

Հարցեց շէնց քանի մի. այսինքն, ձեզ։

Ուսուցանէր զնոսա բազում ինչ. այսինքն, նոցա։

79. Հ. Չէզոք բայերուն վրայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Չէզոք բայերը հայցական սեռի խնդիր կառնեն, երբոր ներգործականի ոյժ ունենան. եւ երբեմն գործիականի տեղ հայցական կառնեն, երբոր իրենց արմատն ըլլայ խնդիրը. կամ խնդրի նշանակութիւնը՝ իրենց նշանակութեան մօտ ըլլայ։

Օրինակ

Զոր ինչ հայի ոք՝ ի նոյն փոխի եւ մտօք. այսինքն, տեսանէ։

Վկայեաց զվկայութիւն սուտ. այսինքն, սուտ վկայութեամբ։

Ուրախացան ուրախութիւն մեծ. այսինքն, մեծաւ ուրախութեամբ:

Մեռաւ զմահ յաւիտենական. այսինքն, յաւիտենական մահուամբ:

Երթալ զճանապարհ. այսինքն, ճանապարհաւ կամ ի ճանապարհ:

## ԴԱՍ ԼԴ.

80. Հ. Ուրիշ ո՞ր բայեր կրնան հայցական խնդիր առնուլ գործիականի տեղ.

Պ. Թէ ներգործական, թէ կրաւորական եւ թէ չէզոք բայեր կրնան յարաբերական հայցական խնդիր առնել գործիականի տեղ, երբոր բայի արմատը յարաբերէ:

### Օրինակ

Հարուածք՝ զոր հարցէ տէր. այսինքն, որովք:

Բժշկել ի վիրացն կամ ի նետիցն՝ զոր խոցեցին զնա Ասորիքն. այսինքն, որովք:

Կարէ՞ք մկրտել զմկրտութիւն, զոր ես մկրտելոց եմ. այսինքն, որով մկրտելոց եմ:

81. Հ. Հարկանել, զարկանել բայերը ի՞նչ հոլով խնդիր կառնեն.

Պ. զ նախդրով սեռական խնդիր կառնեն:

Զի մի՛ երբէք հարցես զքարի զոտն քո:

Յետս յետս չոքան եւ զարկան զգետնի:

Ծափ զծափի հարկանել: Զամօթի հարկանել:

## ԴԱՍ ԼԵ.

82. Հ. Ծախելու եւ գնելու բայերը ի՞նչ հոլով խնդիր կառնեն.

Պ. Սեռական խնդիր կառնեն. նոյնպէս թէ որ հարցուի քանի տարուան:

Օրինակ.

Վաճառեցին զՅովսէփ ծառայ տաճկանի.
Յուդայ վաճառեաց զտէր իւր երեսուն արծաթոյ.
Մեռաւ ամաց երկո–հարիւրոց.
Էր ամաց տասնից.

83. Հ. Սկսանիմ, կարեմ, կամիմ, ջանամ բայերը ի՞նչ խնդիր կառնեն.

Պ. Անորոշ դերբայներ՝ երբ ուղղական խնդիր կըլլան այս բայերուն.

Օրինակ.

Սկսաւ շինել եւ ոչ կարաց կատարել.
Ջանային դարձուցանել զնա ի հաւատոց.

84. Հ. Ուրիշ ո՞ր բայերը ուղղական խնդիր կառնեն.

Պ. Լինել, կոչել, անուանել, առնել, ձեռնադրել, կարգել, համարել եւ այլն բայեր՝ ուղղական խնդիր կառնեն. եւ երբեմն նախդրիւ տրական փոխանակ ուղղականի.

Օրինակ.

զՀոմերոս հայր քերթողաց ասացին.
Կոչեցին զանուն նորա Յիսուս.
Անուանեցին զնա Քրիստոս.
Արարին զնա իշխան կամ յիշխան.
Ձեռնադրեցին զնա ի քահանայ կամ քահանայ.
Կարգեցին զնա ի հովիւ կամ հովիւ.

ԴԱՍ ԼԶ.

85. Հ. Այս ուղղական խնդրոյն վրայ ի՞նչ դիտելիք կայ.

Պ. Երբոր բայը յոգնակի ուղղական խնդիր առնէ, ք գիրը՝ ս ի կը փոխուի.

Օրինակ

Կացոյց զնոսա իշխանս. այսինքն, իշխանս:

Ետ զնոսա տեսուչս. այսինքն, տեսուչս:

86. Հ. Ժամանակ ցուցնող բայերը ինչ հոլով կը դրուին.

Պ. Թէ հայցական եւ թէ անորոշ հայցական կրնան դրուիլ: Զվեց օր գործեա՛. զի վեց օր արար Ած զերկինս եւ զերկիր:

Արար հարսանիս աւուրս չորեքտասան:

---

## ԳԼՈՒԽ ԺԶ.

## ԴԱՍ ԼԵ.

## ԴԵՐԲԱՅԻ ՎՐԱՅ

87. Հ. Անորոշ դերբայի վրայ ինչ դիտելիք կայ.

Պ. Երբոր անորոշ դերբայի վրայ ի կամ յ նախդիր դրուի, ժամանակ կը նշանակէ. երբոր առ ի կամ երբեմն միայն ի դրուի, համար կը նշանակէ. երբոր ընդ դրուի, երբեմն ժամանակ եւ երբեմն [illegible], [illegible] կը նշանակէ:

Օրինակ

Ի ծնանել Յսի: Յելանել նորա յերկրէ:

Առ ի գործել: Եկն ի կեցուցանել:

Ընդ երթալ նորա՝ նեղէին զնա:

Ընդ բուսանելն՝ չորացաւ:

88. Հ. Ուրիշ ինչ դիտելիք կայ անորոշ դերբայի վրայ.

Պ. Անորոշ դերբայը երբեմն կը դրուի դիմաւոր բայի մը առջեւ, ուրիշ (զի շաղկապով) դիմաւոր բայ մը դրուելու տեղ. եւ ինքն խնդիր եղած ատեն, երբեմն սեռականի տեղը ուղղական կը դրուի:

Օրինակ*

Մի աղօթեր քոյ կամաց նուաճրել. այսինքն, զի կատարեսցին կամք քո։

Վասն անբիծ եւ անդատապարտ նուէր մեզ առաջի ահեղ ատենին Քրիստոսի, զտէր աղաչեսցուք. այսինքն, վասն կալոյ։

ԴԱՍ ԼԸ.

89. Հ. Ող, իչ վերջաւորեալ դերբայներուն վրայ ինչ գիտելիք կայ.

Պ. Ող, իչ վերջաւորեալ դերբայները ածական են եւ բայի տեղ բանած ատեն, հայցական եւ կամ հայցականի տեղ սեռական սեռի խնդիր կառնեն։

Օրինակ*

Նորոգող տիեզերաց։

Ի գերեզման իջեր կործանիչ մահու։

Քննող գաղտնեաց մեղայ քեզ. այսինքն, զգաղտնիս։

Պարգեւիչ ողորմութեան պարգեւեա ինձ եւ այլն. այսինքն, զողորմութիւն։

Դատապարտողք զՔրիստոսի ոչ խոստովանողաց։

90. Հ. Անորոշ դերբայն ալ կրնա՞յ սեռական սեռի խնդիր առնուլ։

Պ. Այո՛, երբեմն հայցականի տեղ սեռական սեռի խնդիր կառնէ դերբայը։

Օրինակ*

Ետ ծանօթս ի բնականել հայոց. այսինքն, զհայս։

ԴԱՍ ԼԹ.

91. Հ. Անցեալ դերբայի վրայ ինչ գիտելիք կայ.

Պ. Անցեալ դերբայը եթէ կոչականի վրայ դրուի, ածական կըլլայ. եթէ առանձին բանի ու գործիականի ույժ ունենայ, բայի տեղ կը բանի։

Օրինակք

Որդի խրատեալ իմաստուն լինի ։
Շունք կերակրին ի փշրանաց անկելոց ։
Մոլորեալ մարդիկ զտարերս ԱԾ ասացին ։
Եւ լուեալ Տր բարկացաւ յոյժ ։

92. Հ. Լոց ապառնի դերբային վրայ ինչ գիտելիք կայ.
Պ. Էական բայի հետ բանելով՝ պիտի կը նշանակէ. եւ երբեմն իր տեղը ուրիշ անորոշ դերբայ մը կը դրուի դիմաւոր բայով մը ։

Օրինակք

Մեռանելոց եմք երբ եւ իցէ ։
Ուտելոց եմք եւ այլն ։
Համարս ունիմք տալ Աստուծոյ. այսինքն, տալոց եմք ։
Հանդերձեալ եմք մեռանիլ. այսինքն մեռանելոց եմք ։

## ԴԱՍ Խ.

93. Հ. Լի ապառնի դերբային վրայ ինչ գիտելիք կայ.
Պ. Լի ապառնի դերբայը ածական է, եւ խնդիր կառնէ վերջահոլով տրական կամ բացառական. եւ իր յոգնակին՝ ոց ի ոյժ կունենայ ։

Օրինակք

Ընդունելի Աստուծոյ կամ յԱստուծոյ ։
Գովելիք աշխարհի կամ յաշխարհէ ։
Յուդայ եղեւ առաջնորդ ունելեացն Յսի. այսինքն, ունողաց ։
Պատուիրեմք ընթերցանելեաց սբ գրոց՝ զգուշութեամբ եւ մտառութեամբ ընթեռնուլ. այսինքն, ընթերցողաց ։

94. Հ. Դերբային վրայ այլ ինչ գիտելիք կայ.
Պ. Թէ որ դերբային գործիականը իր բայի հետ բանի, սաստկութիւն ցոյց կուտայ. եւ եթէ նախդիր ունենայ՝

իր մէջ յառաջ գրուած նախդրոյն վրայ կը դրուի. Նաեւ մակբայի վրայ ալ ։

Օրինակ՝

Օրհնեալ էք յԱստուծոյ ամէնըլով ամէնին և բարձմանալով բարձմանային։

Ղ ի Դրունս մահու հասեալ հիւանդն՝ առողջացոյց. այսինքն, զհիւանդն հասեալ ի դրունս մահու ։

Աղաչեա զոր ի ժէն զմարմնացեալ բանն ԱՃ. այսինքն, զմարմնացեալ բանն ։

Առաքինութեամբ զարդարեալս՝ պարտէ պատուոյ արժանիս վարկանիլ եւ մեծարանաց. այսինքն, զզարդարեալս առաքինութեամբ ։

Ղ ի Վայր ծորելի բնութիւն ջրոյն սալայատակ դրամացուցանէ կամուռն հողոյ. այսինքն, զծորելի բնութիւն ջրոյն ի վայր եւ այլն ։

---

## ԳԼՈՒԽ ԺԵ.

## ԴԱՍ ԽԱ.

## ԲԱՅԱՆՈՒԱՆ ՎՐԱՅ

95. Հ. Ի՞նչ է բայանունը.

Պ. Քանի մը գոյական եւ ածական անուններ կան, որ բայի կամ դերբայի ոյժ ունենալնուն համար, բայանուն կամ բայահաղորդ անուն կըսուին. եւ ամէն մէկը իր նշանակութեան համեմատ խնդիր կառնեն ։

96. Հ. Ներգործական բայի ոյժ ունեցող բայանունը ի՞նչ խնդիր կառնէ.

Պ. Հայցականի տեղ սեռական սեռի խնդիր կառնէ, եւ երբեմն ալ հայցական ։

Օրինակ

Սկիզբն ուսման (1) գրոց աշխատութեամբ լինի . այսինքն, ուսանելոյ զգիրս :

Վասն փրկութեան մեր մարմնացաւ բանն Ած . այսինքն, փրկելոյ զմեզ :

Օրհնութիւն Իսահակայ զՅակոբ, եւ Յակոբայ զՅովսէփայ, ոչ ի նոսա, այլ ի թոռունս նոցա կատարեցան :

ԴԱՍ ԽԲ.

97. Հ. Կրաւորական բայի ոյժ ունեցող բայանունը ինչ խնդիր կառնէ.

Պ. Բացառական եւ երբեմն սեռական սեռի խնդիր կառնէ:

Օրինակ

Ծնունդ Տեառն մերոյ Յսի Քսի ի սրբոյ կուսէն Մարիամայ, տօնեմք . այսինքն, ծնանիլ :

Մկրտութիւն Տեառն ի Յովհաննէ . այսինքն, մկրտիլ :

Եմք ծնունդ նախաստեղծին . այսինքն, ծնեալ ի նախաստեղծէն :

98. Հ. Չէզոք բայի ոյժ ունեցող բայանունը ինչ խնդիր կառնէ.

Պ. Ինչ բայի որ ոյժ ունի, անոր համեմատ բնութեան խնդիր կառնէ :

Օրինակ

Մի մուտ է ամենեցուն յաշխարհ . եւ մի ելք անտի առհասարակ . այսինքն, մի է մտանել եւ այլն :

Անյայտ է ժամանակ ելից մերոց ի մարմնոյ աստի . այսինքն, ելանելոյ :

---

(1) Աւելի ութիւն եւ ումն վերջաւորեալներ ներգործական ոյժ ունին :

## ԴԱՍ ԽԴ.

99. Հ. Ա՛լ ի՞նչ գիտելիք կայ բայանուան վրայ.

Պ. Բայանունը՝ որովհետեւ թէ անուան եւ թէ բայի տեղ կը բռնէ, երբեւ բայ՝ ամէն հոլով խնդիր կառնէ. եւ երբեւ անուն՝ ամէն կերպ խնդիր եւ կամ յատկացուցիչ եւ այլն կըլլայ. բայց եթէ առած խնդիր իրմէ յառաջ դրուի, իր նախդիրը յառաջ դրուածին վրայ կը դրուի. (ինչպէս դերբայի վրայ ըսուեցաւ։)

Օրինակ

«Տեառն ի կուսէն ծնունդն գովեմք. այսինքն, զծնունդն Տեառն ի կուսէն կամ զծնանիլ եւ այլն։

«Ի Հօրէ բղխումն Հոգւոյ դաւանիմք. այսինքն, զբըղխումն կամ բղխիլ Հոգւոյ ի Հօրէ։

100. Հ. Անունները առանց բայի ոյժ ունենալու, կրնա՞ն խնդիր առնել.

Պ. Քանիմը կերպ ածական անուններ կան՝ որոնք առանց բայի ոյժ ունենալուն՝ խնդիր կառնեն. որոնք որ յարմարութիւն կամ նմանութիւն կը ցուցնեն՝ վերջահոլով տրական խնդիր կառնեն. որոնք որ չունենալ կամ զուրկ ըլլալ կը ցուցնեն՝ թէ վերջահոլով տրական եւ թէ բացառական խնդիր կառնեն. մանաւանդ ան մասնկամբ բաղադրեալ ածականները։

Օրինակ

Անփորձ մեղաց։
Յարմար է իմաստութեան։
Արժանի գովութեան։
Տգէտ գրոց կամ ի գրոց։
Կարօտ հացի կամ ի հացէ։

Թափուր եւ զուրկ յիմաստութենէ կամ իմաստութեան ։
Անտես ի հրեշտակաց կամ հրեշտակաց ։
Անհաս մտաց կամ ի մտաց ։

---

## ԳԼՈՒԽ ԺԲ.

### ԴԱՍ ԽԴ.

### ՄԱԿԲԱՅԻ ՎՐԱՅ

101. Հ. Մակբայներուն վրայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Մակբայները երբեմն գոյական անուան վրայ իյնալով ածականի տեղ կը բանին. մանաւանդ որակականները ։

Օրինակ

Սիրտն է շտեմարան բարւոյ խորհրդոց. այսինքն, բարի խորհրդոց ։
Մեծապէս շահ է ինձ. այսինքն, մեծամեծ ։

102. Հ. Աստ, անդ, այդր, անդր եւ այլն մակբայներուն վրայ ի՞նչ գիտելիք կայ.

Պ. Այս տեղական մակբայները՝ երբեմն ցուցական ածականի տեղ կը բանին ։

Օրինակ

Ի տան անդ է. այսինքն, յայնմ տան ։
Էջ ի լեռնէ անտի. այսինքն, յայնմ լեռնէ ։

103. Հ. Ածականներն ալ կրնա՞ն մակբայ ըլլալ.

Պ. Այո, երբեմն պարզ ածականները բայի վրայ իյնան, մակբայ կըլլան. եւ երբեմն ալ իրենց վրայ «ս» գիրը կամ իմն մասնիկը կը դրուի ։

Օրինակ

Ոչ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի ։
Մեծաձայն կարդացէք ։

Բոլմապարինչս աշխատէին ։
Երիտասարդն առաւելին ունի զանհնազանդութիւն վասն եռանդոտ արեան ։
Ցանկէպս ուտել ։ Ցանկայրս ի ներքս մտանել ։

## ԴԱՍ ԽԵ.

104. Հ. Այլ ի՞նչ կերպ մակբայ կըլլայ անուն մը.
Պ. Թէ որ մի եւ նոյն բառը կրկնուի կամ անհամաձայն բառեր իրարու քով գան, մակբայ կըլլան. նաեւ նախադրութիւնն ալ եթէ խնդիր չունենայ, մակբայ կըլլայ ։

Օրինակ

Բան առ բան խօսել ։ Բարձր ի գլուխ երեւիլ ։ Հիմն ի վեր տապալել ։ Ջուր օրինակ առէ ։ Զայս օրինակ սիրէ ։ Տունէ ի տուն շրջիլ ։ Օր ըստ օրէ բղխել ։
Զհետ երթայր ժողովուրդ ։
Ցանկիման եղեն փութապէս ։
Արի ա՛նց ի մէջ ։

---

# ԳԼՈՒԽ ԺԹ.

## ԴԱՍ ԽԶ.

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՐԱՌԱԿԱՆ ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ԵՒ ԿՈՉԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

105. Հ. Ո՞րն է պատմական հոլով եւ ի՞նչ կը նշանակէ.
Պ. Պատմական հոլովը կը շինուի բացառականի վրայ զ նախդիր մը դնելով. եւ կը նշանակէ բանի մը վրայօք ։

Օրինակ

Պատմել զնմանէ ։ Մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ ։ Մի՛ խորհեսջիր չար զումեքէ ։

106 . Հ . Ո՞րն է պարառական հոլովը եւ ինչ կը նշանակէ .

Պ . Պարառական հոլովը կը շինուի գործիականին վրայ զնախդիր մը դնելով . եւ կը նշանակէ քանի մը բոլորտիք եւ կամ անորոշ առեններ ։

Օրինակ.

Եկին ժողովեցան զնովաւ ։
Պատեաց զնովաւ ցանկ ։
Զճեղ գիշերաւ եղեւ խռովութիւն ։
Զինն ժամու գոչեաց Յս ի ձայն մեծ ։

ԴԱՍ ԽԷ.

107 . Հ . Ո՞րն է ներգոյական հոլովը եւ ինչ կը նշանակէ .

Պ . Ներգոյական հոլովը երկու կերպով կը շինուի . մէկ մը տրականի պէս եւ մէկ մը վերջահոլովի վրայ՝ ի կամ յ նախդիր դնելով . եւ քանի մը կերպ նշանակութիւն ունի . երբեմն մէջ , երբեմն վրայ եւ երբեմն ժամանակ կը ցուցնէ ։

Օրինակ.

Ննջել ի փառս ։ Գրել ի Ըղըի ։ Հանին զնա ի խաչ ։ Ի մանկութեան առաւել տնկի խրատ ծնողաց ի միտս մանկանց ։ Յաւուր եօթներորդի մի գործեր . զի յանգեաւ Աստուած յաւուր յայնմիկ ։

108 . Հ . Ո՞րն է կոչական հոլովը .

Պ . Կոչականը կը շինուի ուղղականին վրայ ով կամ շեշտ մը դնելով , եւ երբեմն ու վերջաւորեալ յատուկ անուններ վերջերնին կը փոխեն ։

Տէր լուր աղօթից իմոց ։
Յիսուս որդի Դաւթի ողորմեա ինձ ։
Ո՛վ Պետրէ լուր ձայնի . այսինքն , ով Պետրոս ։

Ահա որչափ կարելի էր ջանացինք համաձայնութեան գիտելիքներ դիւրին ու համառօտ կերպով հաւաքել, և երբէք հարկաւորներն դուրս չձգել. միայն քանի մը զարտուղիներէն զատ, զորս շատ կատարեալ եւ վարժութեամբ պէտք է սորուիլ։

Ուրիշ հարկաւոր ծանօթութիւններ տալը դասագրքիս դերքը չներելուն համար, զանց կընեմք, մեր պակասութեանց ներողութիւն խնդրելով։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI..1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Յառաջաբան .

Գիտելիք . . . . . . . . . 1

## ՄԱՍՆ Ա.

Գլ. Ա. Անուն . . . . . . . . 4

Գլ. Բ. Անուան պարագայք . . . . . 6

Գլ. Գ. Կանոնաւոր հոլովմունք . . . . 11

" " Անկանոն հոլովմունք . . . . . 18

Գլ. Դ. Ածականի վրայ . . . . . . 25

Գլ. Ե. Միջական անուն . . . . . 27

" " Մասնական անուն . . . . . 32

## ՄԱՍՆ Բ.

Գլ. Զ. Դերանուն . . . . . . . 35

Գլ. Է. Դերանուան պարագայք . . . . 36

. . . Հոլովմունք էական դերանուանց . . 37

. . . Հոլովմունք ցուցական դերանուանց . . 39

. . . Հոլովմունք ստացական դերանուանց . . 41

. . . Հոլովումն յարաբերական դերանուան . . " "

## ՄԱՍՆ Գ.

Գլ. Ը. Բայ . . . . . . . . . 44

. . . Խոնարհմունք էական բայից . . . . 49

. . . Խոնարհմունք կանոնաւոր բայից . . . 53

. . . Խոնարհմունք անկանոն եւ պակասաւոր բայից . . . . . . . . 69

. . . Բայերու խոնարհմանց վրայ զանազան ծանօթութիւնք . . . . . . 82

## ՄԱՍՆ Դ.

Գլ. Թ. Ընդունելութիւն կամ դերբայ . . . 84

. . . Հոլովմունք դերբայից . . . . 87

. . . . . Խոնարհումն գերբայից . 88
Մասն Ե. Գլ. Ժ. Նախադրութիւն . . . 91
Մասն Զ. Գլ. ԺԱ. Մակբայ . . . . . . 95
Մասն Է. Գլ. ԺԲ. Շաղկապ . . . . . . 97
Մասն Ը. Գլ. ԺԳ. Միջարկութիւն . . . 99
. . . Գլ. ԺԴ. Ուղղագրութիւն . . . 100
. . . Գլ. ԺԵ. Առոգանութիւն . . . „ „ „
. . . . . Տրոհութիւն կամ կէտադրութիւն . 101

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ Նախագիտելիք . 104

Գլ. Ա. Անուն բայի կամ ուղղական հոլով . . 105
Գլ. Բ. Ցուցացուցիչ կամ սեռական հոլով . . 110
Գլ. Գ. Տրական հոլով . . . . . . . 112
Գլ. Դ. Գործիական հոլով . . . . . . 113
Գլ. Ե. Բացառական հոլով . . . . . . „ „
Գլ. Զ. Հայցական հոլով . . . . . . 114
Գլ. Է. Համառօտ գիտելիք վեց հոլովներուն վրայ . 115
Գլ. Ը. Բացայայտիչ եւ բացայայտեալ . . . 117
Գլ. Թ. Ածականի եւ գոյականի համաձայնութիւն 119
Գլ. Ժ. Դրական . բաղդատական եւ գերադրական
ածականներ . . . . . . . 121
Գ. ԺԱ. Մասնական անուն . . . . . . 123
Գլ. ԺԲ. Ցարաբերական դերանուն . . . . 124
Գլ. ԺԳ. Դիմորոշ յօդեր , . . . . . 125
Գլ. ԺԴ. Նախդիրներ . . . . . . . 127
Գլ. ԺԵ. Բայերու խնդիրներ . . . . . 128
Գլ. ԺԶ. Դերբայ . . . . . . . . 133
Գլ. ԺԷ. Բայանուն . . . . . . . . 136
Գլ. ԺԸ. Մակբայ . . . . . . . . 139
Գլ. ԺԹ. Ցաւելուած . . . . . . . 140

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. (1) |
|---|---|---|---|
| Յառաջաբան. | | Նպատանիս. | Նպատակնիս. |
| 5. | 26. | տրական | դրական |
| 9. | 20. | Եղն. | Երուսաղէմ. |
| 11. | 19. | ԿԸԼԼայ. | ԸԼԼան. Օրինակ ԺԱ. |
| 18. | 4. | Տրդատ. | Տրդատ. |
| 22. | 2. | որթով. | որթու. |
| 24. | 12. | ի—աց. | աց. |
| 27. | 4. | Միջականը. | Միջականքը. |
| 44. | 2. | Գլուխ Ի. | Գլուխ Ը. |
| 45. | 27. | գործեն. | գործես. |
| 62. | 17. | Բանալոց եւ այլն. | Բացեալ և այլն |
| ” ”. | 19. | Բացեալ եւ այլն. | Բանալոց և այլն |
| 63. | 22. | խոստան. | խոստանամ. |
| 84. | 24. | գործեմ. | գործիմ. |
| ” ”. | ” ”. | գործել. | գործիլ. |
| 105. | 6. | զոր. | որ. |
| 110. | 10. | Յատկաչուցիչը. | Յատկացուցիչը. |
| 115. | 26. | զորն. | որն. |
| 131. | 17. | Մկրտել. | Մկրտիլ. |
| 133. | 4. | Բայերը. | Բառերը. |
| ” ”. | 21. | Բուսանելն. | Բուսանիլն։ |

(1) Տպագրութեան վրիպակներէն՝ չանց առնելով փոքրախալները, մի միայն ծանրակշռականներն ուղղեցինք։

2464
2013
<< Ազգային գրադարան
NL0060242